ՄԱՍ II.

ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

.

Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրավորվել է 945.4 մլրդ դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի 81.3 տոկոսը կամ 768.4 մլրդ դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, 18.7 տոկոսը կամ 177.0 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերին:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծի ծախսային մասը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի հաստատված մակարդակի համեմատ ավելացել է 123.4 մլրդ դրամով: Նշված հավելաճի գումարը հիմնականում ուղղվել է սոցիալական և պետական կառավարման ոլորտներում իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովմանը, պաշտպանության և հասարակական կարգի պահպանության համակարգերի ամրապնդմանը, տնտեսության առանձին ոլորտներում ենթակառուցվածքների պահպանման և զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններին պետական աջակցության տրամադրմանը:

Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերի ծավալները, կազմն ու կառուցվածքը ձևավորվել են ելնելով 2009 թվականի մակրոտնտեսական կանխատեսումներից, գների և սակագների կանխատեսվող ցուցանիշներից, հանրապետությունում տնտեսական հարաբերությունների բնականոն ընթացքը խաթարող նոր բյուջետային պարտքերի չառաջացման անհրաժեշտությունից ու առանձին ծախսատեսակների գծով մշակված բյուջետային նորմատիվներից: Հաշվի են առնվել նաև բյուջետային հիմնարկների ցանցի կազմի և կառուցվածքի կատարելագործման և բնակչության կենսապահովման խնդիրների լուծման միջոցառումները:

Սոցիալական բնագավառի ծախսերի (կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն) տեսակարար կշիռը բյուջետային ծախսերի ամբողջ ծավալում կազմում է 47.2 %, պաշտպանության, հասարակական կարգի պահպանության և ազգային անվտանգության ապահովման ոլորտներինը՝ 22.4 %, տնտեսության ճյուղերինը՝ 13.8 %, համայնքների բյուջեներին ՀՀ պետական բյուջեից պաշտոնական դրամաշնորհների տրամադրմանը՝ 3.0 %, պետական պարտքի սպասարկմանը՝ 1.7 %, ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի ձևավորմանը՝ 1.7 %:

Ի տարբերություն նախորդ տարիների բյուջետային գործընթացի բարեփոխումների շրջանակներում ծրագրային բյուջետավորման փորձնական ծրագրում ընդգրկված պետական կառավարման մարմինների ծախսերը օրենքի նախագծի առանձին հավելվածով չեն ներկայացվել:

Սակայն հարկ է նշել, որ ՀՀ 2009թ պետական բյուջեի նախագծում ծախսային ծրագրերը հիմնականում վերադասավորվել են ծրագրային բյուջետավորման սկզբունքներին համապատասխան: Միաժամանակ մոտակա տարիներին բյուջեն ամբողջությամբ ծրագրային դասակարգմամբ Ազգային ժողով ներկայացնելու և անցումային շրջանում դրա կատարման հետ կապված ռիսկերի կառավարումն ապահովելու նպատակով ներկայումս մշակվում է մի մոտեցում, որը մի կողմից պետք է ապահովի պետական բյուջեի կատարման գործող համակարգի կայունությունը, իսկ մյուս կողմից՝ աջակցի կառավարման, մոնիտորինգի, հաշվետվողականության և վերահսկողության համակարգերի զարգացմանը:

Ստորև ներկայացվում են ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի ծախսերի ծրագրավորման հիմքում դրվող հիմնական սկզբունքները և առանձնահատկությունները:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերի ծրագրավորումը բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով:

1. 2008 թվականի ընթացքում շարունակվում է իրականացվել պետական կառավարման համակարգի բարեփոխումների և վերակազմակերպման գործընթացը և «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան իրականացվել է պետական կառավարման առանձին մարմինների վերակազմակերպման գործընթացը:

ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերապահված լիազորությունների լիարժեք իրականացման նպատակով ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «ՀՀ կառավարության կառուցվածքի մասին» ՀՀ օրենքը, որով ամբողջացավ նախարարությունների կազմը: Նախարարություններին վերապահված լիազորություններն ու գործառույթները հստակեցնելու նպատակով ստեղծվեցին նոր նախարարություններ՝ ՀՀ արտակարգ իրավիճակների և ՀՀ սփյուռքի նախարարությունները, ինչպես նաև ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման և ՀՀ էներգետիկայի նախարարությունները վերանվանվեցին համապատասխանաբար ՀՀ ֆինանսների, ՀՀ էկոնոմիկայի ու ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունների:

Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում միասնական պետական քաղաքականության մշակման և դրա իրականացումն ապահովելու նպատակով ստեղծվեց ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը, որին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման նպատակով ստեղծվեց «ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (ՀՀ կառավարության 15.05.2008թ. N 531-Ն որոշում), որի կառուցվածքում ընդգրկվեցին նաև ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի «Միգրացիոն գործակալություն» և «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալություն» առանձնացված ստորաբաժանումները:

Հայաստանի և հայկական սփյուռքի միջև կապերի ամրապնդման, դրանց գործակցության զարգացման, հայապահպանության և այլ բնագավառներում ՀՀ պետական միասնական քաղաքականության մշակման և դրա իրականացումն ապահովելու նպատակով 2008 թվականի հոկտեմբերի 1-ից կգործի ՀՀ սփյուռքի նախարարությունը, որին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման նպատակով ստեղծվեց «ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (ՀՀ կառավարության 11.09.2008թ. N 1049-Ն որոշում), այդ կապակցությամբ կդադարեցվի «ՀՀ արտաքին գործերի նախարարության սփյուռքի հետ կապերի պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի գործունեությունը:

ՀՀ էներգետիկայի նախարարությունը վերանվանվեց ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության: Բնական պաշարների կառավարման և այդ ոլորտում բնապահպանական պետական վերահսկողության իրականացման իրավասությունների հստակեցման և տարանջատման նպատակով, վերջինիս վերապահվեցին «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու /կոնցեսիայի/ մասին» ՀՀ օրենքով սահմանված լիազորությունները/ բացառությամբ շրջակա միջավայրի պահպանության համար սահմանված իրավասությունների/, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով և «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքով սահմանված լիազոր մարմնի լիազորությունները: Այդ կապակցությամբ «ՀՀ էներգետիկայի նախարարության աշխատակազմ»-ի փոխարեն ստեղծվեց « ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (ՀՀ կառավարության 15.05.2008թ. N 654-Ն որոշում), որի կառուցվածքում արտացոլվեցին վերոնշյալ փոփոխությունները: Այսպես՝ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի «Երկրաբանական գործակալություն» և «Օգտակար հանածոների պաշարների գործակալություն», ինպես նաև ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության աշխատակազմի «Կոնցեսիոն գործակալություն» առանձնացված ստորաբաժանումները հանձնվեցին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը: Բացի այդ ՀՀ-ի տարածքում ընդերքօգտագործման և պահպանության ոլորտում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման, ինչպես նաև ընդերքօգտագործող տնտեսվարող սուբյեկտների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով նախարարության կազմում ստեղծվել է «Երկրաբանամարկշեյդերական վերահսկողության պետական տեսչություն»՝ աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով (ՀՀ կառավարության 15.05.2008թ. N 654-Ն որոշում):

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարության վերանվանման հետ կապված համապատասխան փոփոխություններ կատարվեցին նաև նախարարության կանոնադրության մեջ և աշխատակազմի կառուցվածքում, հստակեցվեցին նրա կառուցվածքային ստորաբաժանումների իրավասության սահմանները: Այդ կապակցությամբ «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչա-

կան հիմնարկի փոխարեն ստեղծվեց «ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (ՀՀ կառավարության 15.05.2008թ. N 503-Ն որոշում):

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը ՀՀ էկոնոմիկայի նախարարության վերանվանման հետ կապված համապատասխան փոփոխություններ կատարվեցին նաև նախարարության կանոնադրության մեջ և աշխատակազմի կառուցվածքում: Այդ կապակցությամբ «ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի փոխարեն ստեղծվեց «ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (ՀՀ կառավարության 15.05.2008թ. N 550-Ն որոշում), հստակեցվեցին աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների իրավասության սահմանները, որի հետևանքով դադարեցվեց «Ակնագործության և ոսկեգործության զարգացման գործակալություն» առանձնացված ստորաբաժանման գործունեությունը, «Կոնցեսիոն գործակալություն»-ը հանձնվեց ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը, «Որակի տեսչություն»-ը վերանվանվեց «Շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչության»:

ՀՀ Նախագահի 26.05.2008 թվականի ՆՀ-128-Ն հրամանագրով հաստատվել է ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի կանոնադրությունը և ստեղծվել է «ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը:

ՀՀ Նախագահի 20.05.2008 թվականի ՆՀ-121-Ն հրամանագրի համաձայն ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի պետական կարգավորման, այն է՝ բնակչության և անձնակազմի անվտանգության ապահովման, շրջակա միջավայրի պաշտպանության և ՀՀ անվտանգության շահերի պաշտպանության նպատակով ստեղծվեց ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն, որը ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի միջուկային և ճառագայթային անվտանգության պետական կարգավորման տեսչության իրավահաջորդն է: Այդ կապակցությամբ ստեղծվեց նաև «ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (ՀՀ կառավարության 17.07.2008թ. N 866-Ն որոշում):

ՀՀ Նախագահի 20.08.2008 թվականի ՆՀ- 226- Ն հրամանագրի համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը և մաքսային պետական կոմիտեն միաձուլման ձևով վերակազմակերպվեցին ՀՀ կառավարությանն առընթեր եկամուտների պետական կոմիտեի, որին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման նպատակով ստեղծվեց «ՀՀ կառավարությանն առընթեր եկամուտների պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (ՀՀ կառավարության 04.09.2008թ. N 1005-Ն որոշում), համապատասխան փոփոխություններ կատարվեցին հարկային և մաքսային մարմինների կառուցվածքում: Այդ կապակցությամբ դադարեցվեց «ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության աշխատակազմ» և «ՀՀ կառավարությանն առընթեր

մաքսային պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկների գործունեությունը:

«ՀՀ սոցիալական ապահովության պետական հիմնադրամ» պետական հիմնարկը վերակազմավորման ձևով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կառավարման ոլորտում գործող «Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի վերակազմակերպման հետ կապված (ՀՀ կառավարության 27.12.2007թ. N 1531-Ն որոշում) այդ հիմնարկի պահպանման ծախսերը ներառվել են պետական կառավարման մարմինների ծախսերում :

Ընդունվել է նաև «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքը, որի համաձայն ստեղծվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն: Վերջինս իրականացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ, հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով նախաքննություն, միաժամանակ քննչական ծառայությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով ստեղծվել է « Հատուկ քննչական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը(ՀՀ կառավարության 13.02.2008թ. N 106-Ն որոշում):

ՀՀ դատական օրենսգրքի, «Սահմանադրական դատարանի մասին» «Դատախազության մասին» և «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան ՀՀ դատարանների, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ դատախազության և ՀՀ վերահսկիչ պալատի բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է ՀՀ դատարանների, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ դատախազության և ՀՀ վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդ, որը ներկայացվում է բյուջեի առանձին տողով և որի մեծությունը հավասար է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով նշված մարմինների համար նախատեսված բյուջեի երկու տոկոսին:

2.Ելնելով օրենքով և այլ իրավական ակտերով նախարարությունների առանձնացված ստորաբաժանումներին վերապահված լիազորությունները լիարժեք և արդյունավետ իրականացնելու, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցությունը նախարարության աշխատակազմի կողմից ապահովելու դրույթից, ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նրանց պահպանման ծախսերը ներառված են համապատասխան նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերում :

3. ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում պահպանվել է ՀՀ նախարարությունների աշխատակազմերի և այդ մարմինների ղեկավարների աշխատակազմերի պահպանման ծախսերը պետական բյուջեում առանձին ծրագրերով նախատեսելու սկզբունքը:

4. ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերը հաշվարկվել են հիմք ընդունելով 17130 հաստիքային միավորների քանակը, որը 2008 թվականի համեմատ ավելացվել է 922 միավորով: Թվաքանակի ավելացումը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարության կառուցվածքային փոփոխությունների հետ կապված նոր մարմինների ստեղծմամբ, ինչպես նաև պետական կառավարման առանձին մարմիններում կառուցվածքային փոփոխությունների հետևանքով աշխատողների թվաքանակի փոփոխություններով:

ՀՀ պետական կառավարման մարմինների աշխատողների թվաքանակի փոփոխությունը արտացոլված է N 2 ա աղյուսակում:

5. Քաղաքացիական /պետական, դատական/ ծառայողների, բացառությամբ ՀՀ վերահսկիչ պալատի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի քաղաքացիական ծառայողների, աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է հիմք ընդունելով 40.0 հազար դրամ բազային պաշտոնային դրույքաչափը, հարկային և մաքսային ծառայողներինը՝ 55.5 հազ.դրամ, հարկադիր կատարողներինը՝ 42.0 հազար դրամ՝ պահպանելով 2008 թվականի մակարդակը: ՀՀ վերահսկիչ պալատի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի քաղաքացիական ծառայողների աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է ելնելով համապատասխան օրենքների պահանջներից: Աշխատավարձի ֆոնդը ծրագրավորվել է հաշվի առնելով վերոնշյալ ծառայողների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ օրենսդրությամբ նախատեսված բնականոն աճերը :

Աշխատավարձի ֆոնդում ներառվել են նաև քաղծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու դեպքում քաղծառայողի հիմնական աշխատավարձի նկատմամբ 5 %-ի չափով սահմանվող հավելավճարները:

Միաժամանակ ՀՀ կառավարության 24.07.08 N 29 արձանագրային որոշման պահանջներն ապահովելու նպատակով պետական կառավարման մարմինների աշխատողների թվաքանակի կրճատման հետևանքով տվյալ մարմնի համար պետբյուջեով նախատեսված տարեկան աշխատավարձի ֆոնդի 10 %-ը գերազանցող ֆոնդը թողնվել է մարմնի ղեկավարի տրամադրության տակ՝ աշխատողներին խրախուսելու նպատակով:

ՀՀ վճռաբեկ, վերաքննիչ և մասնագիտացված դատարանների դատավորների աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է ՀՀ դատական օրենսգրքի /հոդված 75/ պահանջներին համապատասխան: ՀՀ դատական դեպարտամենտի կազմում առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով գործող ՀՀ դատական կարգադրիչների ծառայության աշխատակիցների աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է ելնելով ՀՀ դատական օրենսգրքի պահանջներից՝ «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված չափերին և հաշվարկման կարգին համապատասխան՝ հիմք ընդունելով 14.4 հազար դրամ բազային պաշտոնային դրույքաչափը:

Դատախազների աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է «Դատախազության մասին» օրենքի հոդված 55-ով ամրագրված դրույթներին համապատասխան:

Հատուկ քննչական ծառայության ծառայողների աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 25-ով ամրագրված դրույթներին համապատասխան:

6. Գործուղումների և ծառայողական ուղևորությունների ծախսերը ծրագրավորվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն և վճարման կարգը սահմանելու մասին» N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմաներով, հաշվի առնելով նշյալ որոշման մեջ առաջարկվող փոփոխությունները, ըստ որի Հայաստանի Հանրապետության տարածքում և ԼՂՀ գործուղվող աշխատողների օրապահիկի ծախսերի չափը նախատեսվում է սահմանել 2000 դրամ՝ գործող 720 դրամի փոխարեն, իսկ գիշերավարձի չափերը սահմանել՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և ԼՂՀ-ում 5000-15000 դրամ՝ գործող 5000-10000 դրամի փոխարեն:

7. Ծառայողական ավտոմեքենաների պահպանման ծախսերը ծրագրավորվել է ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշմամբ հաստատված ծառայողական ավտոմեքենաների /բացառությամբ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության և մաքսային պետական կոմիտեի սպասարկման համար նախատեսված ծառայողական ավտոմեքենաների/ սահմանաքանակին համապատասխան՝ 971 ավտոմեքենայի համար,1 մեքենայի պահպանման տարեկան ծախսը 2008 թ. թվականի 1200.0 հազար դրամի փոխարեն հաշվարկվել է 1350.0 հազար դրամի չափով, օրական 10 լիտր բենզինի հաշվարկով /10լ x 420 դրամ x 22 օր x 12 ամիս/:

ՀՀ պետական կառավարման մարմինների ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակի փոփոխությունը արտացոլված է սույն բացատրագրի N 2 բ աղյուսակում:

8. Կապի ծառայությունների վճարները ծրագրավորվել է ՀՀ կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կապի և կոմունալ ծախսերի նորմաներ սահմանելու մասին» N 1536-Ն և ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում կապի ծառայությունների նորմաները և հեռախոսակապից օգտվելու օրինակելի ներքին կանոնները հաստատելու մասին» N 1956-Ն որոշումների պահանջներին համապատասխան, սակայն հեռախոսային խոսակցությունների տարեկան սահմանաչափը ծրագրավորվել է հաշվարկվածի 30 %-ի չափով, ՀՀ դատարանների կապի ծառայությունների ծախսերը հաշվարկվել է ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության դատարանների կապի միջոցների տեսակների, քանակի և կապի ծառայությունների, ինչպես նաև կոմունալ ծախսերի նորմաների մասին» N 732-Ա որոշման պահանջներին համապատասխան: Կապի ծախսերը հաշվարկվել է հաշվի առնելով նաև ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 24-ի «Արմենտել» փակ բաժնետիրական

ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագների սահմանման մասին» N 340-Ն որոշումը:

9. էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր - ծրագրավորվել է ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում Հայաստանի Հանրապետության պետական մարմինների գծով բյուջետային ծախսերի առանձին տեսակների՝ ջեռուցման, վառելիքի և էլեկտրաէներգիայի ձեռքբերման ծավալների հաշվարկման հիմքում դրվող նորմաները հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 629-Ն որոշման պահանջներին համապատասխան, հաշվի առնելով նաև բնական գազի սակագնի բարձրացումը /1 մ^3 սակագինը 84.0 դրամ՝ 59.0 դրամի փոխարեն, իսկ ամսական 10 հազար մ^3- ից ավելի օգտագործելու դեպքում 153.26 /101.25-ի փոխարեն/ ԱՄՆ դոլարին համարժեք դրամ /կամ 46.4 դրամ, 39.1 դրամի փոխարեն/ սակայն էլեկտրաէներգիայի ծախսերը ծրագրավորվել է հաշվարկվածի 80 %-ի չափով:

10. Գրասենյակային ապրանքներ և նյութեր – ծրագրավորվել է պետական մարմինների կողմից ներկայացրած հայտերին համապատասխան :

11. Ջրմուղ - կոյուղուց օգտվելու վարձի վճարման ծախսեր - ծրագրավորվել են հաստատված սակագներին համապատասխան՝ Երևանում մեկ խոր մետրը - 172.8 դրամ, մարզերում 140.0 դրամ: ՀՀ պետական մարմինների կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններից օգտվելու վարձի վճարման ծախսերը սահմանվել է յուրաքանչյուր հաստիքային միավորի համար օրական 30 լիտր, բացի այդ ՀՀ դատարանների համար ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 12-ի N 732-Ն որոշման պահանջներին համապատասխան նախատեսվել է նաև լրացուցիչ ծախս՝ ելնելով դատական նիստերի դահլիճների ընդհանուր մակերեսի մեծությունից:

12. Հաշվի առնելով ՀՀ վարչապետի որոշումներով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար հատկացվող միջոցների առավել արդյունավետ օգտագործման հանգամանքը, ՀՀ 2009 թ. պետական բյուջեի նախագծում պահպանվել է արտասահմանյան երկրներ մեկնելու համար նախատեսված գործուղման ծախսերը արտասահմանյան պաշտոնական գործուղումների ծախսերում ներառելու սկզբունքը:

ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերը 2009 թ. համար ծրագրավորվել է 5142.0 մլն դրամի չափով, որը 475.6 մլն դրամով գերազանցում է 2008 թվականի մակարդակը: Ծախսերի ավելացումը պայմանավորված է թվով երեք երկրներում /Ճապոնիայում – 211.3 մլն դրամ, Ֆինլանդիայում - 146.3 մլն դրամ և Լիտվայում - 118.0 մլն դրամ/ նախատեսվող դեսպանությունների բացման հետ:

ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերի ընդհանուր գումարը ՀՀ 2009 թվականի պետբյուջեի նախագծում ծրագրավորված է 52194.7մլն դրամի չափով, որը 2007 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2008 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների նկատ-

մամբ կազմում է համապատասխանաբար՝ 122.1 և 117.7 տոկոս: Սույն համեմատությունը արտացոլված է բացատրագրի N 2 աղյուսակում:

Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի նախագծով պետական կառավարման մարմինների ծախսերին ուղղվող հատկացումների գումարը 965.4 մլն դրամով գերազանցում է «Հայաստանի Հանրապետության 2009-2011 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 3-ի N 704-Ն որոշմամբ 2009 թվականի պետական միջնաժամկետ ծախսային ծրագրով հաստատված չափաքանակը, որը հիմնականում պայմանավորված է հարկային մարմիններում ծառայողների աշխատավարձերի բարձրացմամբ:

Աշխատավարձի ֆոնդ - օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների աշխատողների աշխատավարձի ֆոնդը 2009 թվականի համար ծրագրավորվել է 29371.5 մլն դրամի չափով, որը 2008 թվականի մակարդակը գերազանցում է 4574.7 մլն դրամով: Աճը պայմանավորված է՝ «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան քաղաքացիական /պետական,դատական/ ծառայողների աշխատավարձի բնականոն աճով, «Հարկային ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան հարկային ծառայողների, մաքսային ծառայողների և հարկադիր կատարողների աշխատավարձի բնականոն աճով, հարկային մարմիններում աշխատողների աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ, /շուրջ 1.7 մլն դրամ/, մաքսային մարմիններում կառուցվածքային փոփոխությունների հետևանքով աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ, ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմում ծառայող դիվանագետների դիվանագիտական աստիճանի համար սահմանված հավելավճարների բարձրացմամբ և դիվանագետների 3-րդ օտար լեզվի իմացության համար պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ 10 % հավելավճարի սահմանմամբ, ՀՀ դատական օրենսգրքի, «Դատախազության մասին» և «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան դատավորների, դատախազների և հատուկ քննչական ծառայության ծառայողների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ հաշվարկվող հավելավճարների աճով, ՀՀ Վերահսկիչ պալատին վերապահված լիազորությունների շրջանակի, վերահսկողական դաշտի ընդլայնման և հստակեցման հետևանքով կառուցվածքային փոփոխությունների հետ կապված աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ, պետական կառավարման նոր մարմինների ստեղծմամբ, ինչպես նաև գործառույթների ավելացմամբ պայմանավորված առանձին մարմիններում աշխատողների թվաքանակի աճով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ - հաշվարկվել են «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Էներգետիկ ծառայություններ՝ ներառում է էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը - ծրագրավորվել է 1248.2.1 մլն դրամի չափով, որը 2008 թվականի մակարդակը գերազանցում է 151.2 մլն դրամով: Ավելացումը պայմանավորված է օգտագործվող համակարգիչների և այլ

տեխնիկական միջոցների քանակի փոփոխություններով, բնական գազի սակագնի ավելացմամբ, ինչպես նաև նոր ստեղծված մարմինների պահպանման համար համապատասխան ծախսերի նախատեսմամբ:

Կոմունալ ծառայություններ՝ ներառում է ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև վարչական շենքերի աղբահանման և միջատազերծման հետ կապված ծախսերը - ծրագրավորվել է 114.0 մլն դրամի չափով, որը 2008 թվականի մակարդակը գերազանցում է 5.8 մլն դրամով: Ավելացումը պայմանավորված է պետական կառավարման մարմիններում աշխատողների թվաքանակի աճով և այդ ծախսերի կանոնակարգմամբ:

Կապի ծառայություններ - ծրագրավորվել է 1824.1 մլն դրամի չափով, որը 2008 թվականի մակարդակը գերազանցում է 323.5 մլն դրամով: Ավելացումը պայմանավորված է պետական կառավարման նոր մարմինների ստեղծմամբ, պետական կառավարման առանձին մարմիններում կառուցվածքային փոփոխությունների հետևանքով աշխատողների թվաքանակի փոփոխություններով, «Իրտեկ» ծառայության և ինտերնետային ծառայություններից օգտվելու համար լրացուցիչ ծախսերի նախատեսմամբ:

Գույքի և սարքավորումների վարձակալություն - ծրագրավորվել է ներկայացված պայմանագրերին համապատասխան:

Գործուղումների և ծառայողական ուղևորությունների ծախսեր - ծրագրավորվել են 1872.2 մլն դրամի չափով, որը 2008 թվականի մակարդակը գերազանցում է 456.5մլն դրամով: Ավելացումը հիմնականում պայմանավորված է այս ծախսերի հատուցման նորմաների ավելացմամբ, ինրպես նաև պետական կառավարման նոր մարմինների ստեղծմամբ, առանձին մարմիններում կառուցվածքային փոփոխությունների հետևանքով գործուղման ծախսերի կանոնակարգմամբ:

Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում - ծրագրավորվել է 1100.7 մլն դրամի չափով: Պայմանագրային ծառայությունները բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգմամբ ներառում են՝ վարչական ծառայությունները, համակարգչային ծառայությունները, տեղեկատվական ծառայությունները, կառավարչական ծառայությունները, կենցաղային և հանրային սննդի ծառայությունները, ներկայացուցչական ծախսերը և ընդհանուր բնույթի այլ ծառայությունները:

Նյութեր - ծրագրավորվել է 1254.0 մլն դրամի չափով, որը 2008 թվականի մակարդակը գերազանցում է 338.9 մլն դրամով: Նյութերը ներառում են գրասենյակային պիտույքների, գյուղատնտեսական ապրանքների, առողջապահական և լաբորատոր նյութերի, կենցաղային և հանրային սննդի նյութերի և հատուկ նպատակային այլ նյութերի ձեռք բերման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ՀՀ դատախազության և ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցների, ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության և ՀՀ գյուղատնտեսության նախարարության բույսերի կարանտինի և երկրագործության պետական տեսչության տեսուչների համազգեստի և դատավորների համար պատմուճանների

ձեռքբերման ծախսերը: Ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է գրասենյակային ծախսերը ըստ ներկայացված հայտերի ծրագրավորման, պետական կառավարման նոր մարմինների ստեղծմամբ, առանձին մարմիններում կառուցվածքային փոփոխությունների հետևանքով և թվաքանակի փոփոխության հետևանքով այս ծախսերի կանոնակարգմամբ:

Տրանսպորտային ծառայությունների ծախսերը տարանջատված են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման չորս հոդվածներում՝ տրանսպորտային նյութեր /բենզին, յուղեր, այլ նյութեր տրանսպորտային միջոցների համար/, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում, ընդհանուր բնույթի այլ ծառայություններ /տեխնիկական զննման վճարներ՝ 1 մեքենայի համար 8.0 հազար դրամ/ և այլ հարկեր /բնապահպանական վճարներ՝ 1 մեքենայի համար 2.5-3.0 հազար դրամ/: Տրանսպորտային նյութեր հոդվածով ծախսերը ծրագրավորվել են 1291.7 մլն դրամի չափով, որը 2008 թվականի մակարդակը գերազանցում է 201.7 մլն դրամով: Ծախսերի աճը պայմանավորված է բենզինի գնի աճով և վերոնշված կառուցվածքային փոփոխությունների, ինչպես նաև նոր հիմնարկների ստեղծման հետ կապված ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակի կանոնակարգմամբ:

Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին -- ծրագրավորվել է 608.8 մլն.դրամի չափով՝ «Պետական գնումների գործակալություն», «Սպասարկում» և «Կոնդի առանձնատների տնտեսություն» պետական ոչ առևտրային կազմակերպություններին պետական աջակցության համար:

Այլ նպաստներ բյուջեից - ներառում է ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների պատգամավորական գործունեության հետ կապված ծախսերը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման ծախսերը, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան ՀՀ դատարանների դատական կարգադրիչների պարենային բավարարման համար անհրաժեշտ գումարը, ծառայողական պարտականությունները կատարելիս հարկադիր կատարողի կողմից հասարակական տրանսպորտից օգտվելու և անձնական օգտագործման ավտոմեքենան ծառայողական նպատակներով օգտագործելու հետ կապված ծախսերի հատուցման գումարը, ինչպես նաև ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի հասարակական հիմունքներով գործող անդամների գործունեության հետ կապված դրամական փոխհատուցման գումարը: Բացի այդ, նախատեսված են համապատասխան միջոցներ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության, Երևան, Արարատ, Վանաձոր, Գյումրի և Ջերմուկ քաղաքների սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորումն ապահովելու նպատակով:

Այլ ծախսեր - ծրագրավորվել է 6022.6 մլն դրամի չափով: Ներառում է՝ ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների, ՀՀ ռազմական կցորդների, արտասահմանում ՀՀ առևտրային ներկայացուցչությունների պահպանման ծախսերը, ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային

ժողովի նախագահի և ՀՀ վարչապետի ֆոնդերը, ՀՀ Նախագահի կողմից առանձին անձանց պարգևատրելու համար անհրաժեշտ մեդալների և շքանշանների պատրաստման ծախսերը, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ դատարանների, ՀՀ դատախազության և ՀՀ վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդերը:

ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ Նախագահի աշխատակազմի, ՀՀ կառավարության աշխատակազմի, ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թվականի պահպանման ծախսերը հաշվարկելիս կիրառվել է առանձին մոտեցում՝ ելնելով նշված մարմինների գործառական առանձնահատկություններից:

Կապիտալ ակտիվների ձեռք բերում - ծրագրավորվել է 822.4 մլն դրամի չափով, որը հիմնականում պայմանավորված է պետական կառավարման մարմինների տեխնիկական վերազինման նպատակով պետական կառավարման մարմիններում համակարգչային տեխնիկայի, սարքերի և սարքավորումների, ինչպես նաև առանձին մարմիններում ծառայողական ավտոմեքենաների և գրասենյակային գույքի ձեռք բերման համար անհրաժեշտ միջոցների նախատեսմամբ:

Դրա հետ մեկտեղ պետական կառավարման ոլորտում 2009 թվականին նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային ծրագրերը.

1. Պետական հատվածի արդիականացման ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագիր նպատակն է պետական հատվածի մի քանի առանցքային մարմիններում նորամուծությունների կատարումը, որը պետք է շարժիչ ուժի դեր կատարի պետական հատվածի արդիականացման ուղղությամբ տարվող հետագա աշխատանքներում: Ծրագրի շրջանակներում 2009 թվականի ընթացքում մասնավորապես նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. ***Քաղաքացիական ծառայության կառավարման հզորացում.***

- Մշակել քաղաքացիական ծառայության զարգացման ռազմավարություն, ներառյալ քաղաքացիական ծառայության համակարգի զարգացման երկարաժամկետ պլան և պետական կառավարման ամբողջ համակարգի հնարավոր ռացիոնալիզացում (բարելավում):
- Քաղաքացիական ծառայության կառավարման կարգավորման համակարգի վերջնական ձևավորում:
- Քաղաքացիական ծառայության խորհրդի (ՔԾԽ) կարողությունների հզորացում, մասնավորապես քաղաքացիական ծառայության վերապատրաստման ռազմավարության մշակման և իրականացման, ՔԾԽ աշխատակազմին ատեստավորման և թեստավորման համակարգի բարելավման վերաբերյալ նպատակաուղղված վերապատրաստման անցկացման, ՔԾԽ ներքին կառավարման ընթացակարգերը բարելավելու նպատակով սարքավորումների, ներառյալ համակարգիչների և ծրագրային ապահովման, տրամադրման, հանրային

հարաբերությունների և տեղեկացման ռազմավարության մշակման, հանրային տեղեկատվական կենտրոնի ձևավորման և ՔՕԽ ինտերնետային էջի բարելավման միջոցով:

- ՔՕԽ-ին տեխնիկական և խորհրդատվական ծառայությունների տրամադրում՝ մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի ձևավորման և ՔՕԽ-ն այլ նախարարությունների և մասնագիտացված գործակալությունների հետ կապակցելու նպատակով:
- Հայաստանի պետական կառավարման ակադեմիայի (ՊԿԱ) կրթական կարողությունների հզորացում. մասնավորապես վերապատրաստման ծրագրերի մշակման և իրականացման կարողությունների բարելավման, վերապատրաստման կարողությունների արդիականացման և վերազինման, Վանաձորում և Գորիսում երկու տարածքային մասնաճյուղերին սարքավորումների և ուսուցողական նյութերի տրամադրման և ՊԿԱ-ին խորհրդատվական ծառայությունների տրամադրման միջոցով:

2. ***էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման նպատակով*** տեխնիկական աջակցության և խորհրդատվական ծառայությունների տրամադրում հետևյալ նպատակներով.

- էլեկտրոնային գնումների համար տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգի մշակում,
- էլեկտրոնային գնումների համակարգի ձևավորում՝ ներառյալ էլեկտրոնային գնումների ծրագրային ապահովման ձեռքբերում և տեղադրում, էլեկտրոնային գնումների ձեռնարկների մշակում, հանրային իրազեկության և տեղեկացման ծրագրերի իրականացում և էլեկտրոնային համակարգի մասով վերապատրաստում:

3. Վերահսկիչ Պալատի հզորացում (ՎՊ).

- ՎՊ-ին տեխնիկական և խորհրդատվական ծառայությունների տրամադրում՝ աուդիտորական ստանդարտների մշակման, աուդիտորական ձեռնարկների պատաստման և համապատասխան վերապատրաստման իրականացման համար:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների և գրասենյակային սարքավորումների մատակարարում:
- ՎՊ-ի ինտերնետային էջի արդիականացում:

4. Քաղաքականության ձևավորման և իրականացման բարելավում.

- Նախարարություններում գործառույթների, կառուցվածքի, քաղաքականության մշակման և իրականացման ընթացակարգերի նախնական գնահատման համար տեխնիկական աջակցության և խորհրդատվական ծառայությունների մատուցում:
- Փաստաթղթերի կառավարման ներդաշնակ համակարգի ձևավորում, ներառյալ նախարարությունների ներսում և նախարարություններից դուրս փաստաթղթերի փոխանակման և շարժերի հսկման ծրագրի զարգացում:
- Յուրաքանչյուր նախարարությունում փաստաթղթաշրջանառության ընթացակարգի, տեղեկատվական տեխնոլոգիաների և տեխնիկական աջակցության վերաբերյալ նախարարությունների աշխատակազմերի վերապաասրաստում:

- ֆինանսների նախարարության կարողությունների հզորացում, մասնավորապես ներքին աուդիտի, եկամուտների հավաքագրման քաղաքականության և հարկային ու մաքսային ծառայությունների հետ համագործակցության համակարգերի վերաբերյալ աշխատակազմի վերապատրաստման, ուսուցողական ծրագերի և արդյունավետ ուսուցման մասով նախարարության Ուսուցման Կենտրոնի կարողությունների հզորացման և վերապատրաստման սարքավորումների տրամադրման ու կահավորման միջոցով:
- էկոնոմիկայի նախարարության կարողությունների հզորացում, մասնավորապես կառավարման քաղաքականության մշակման, ստանդարտիզացման և սերտիֆիկացման վերաբերյալ ուսուցման ու խորհրդատվական ծառայությունների տրամադրման, նախարարության՝ ինտերնետին միանալու կարողությունների բարելավման նպատակով տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների տրամադրման և ինտերնետային էջի արդիականացման միջոցով:
- Կառավարության աշխատակազմին հանրային տեղեկատվական կենտրոնի ձևավորման և ինտերնետային էջի մշակման նպատակներով տեխնիկական և խորհրդատվական ծառայությունների տրամադրում:
- Սերտիֆիկացման, ստանդարտացման և չափագրման համար պատասխանատու մասնագիտացված գործակալություններին տեխնիկական աջակցության և խորհրդատվական ծառայությունների տրամադրում հետևյալի համար՝ յուրաքանչյուր գործակալության կառավարման և տեխնիկական ստադարնտների բարելավում, համապատասխան միջազգային տեխնիկական ստանդարտների տվյալների բազայի մշակում և իրականացում, լաբորատոր (փորձաքննական) անհրաժեշտ սարքավորումների տեխնիկական մանրակրկիտ պահանջների մշակում և լաբորատոր (փորձաքննական) անհրաժեշտ սարքավորումների մատակարարում:

5. Տեղական ինքնակառավարման կարողությունների զարգացում.

- Միջհամայնքային միավորումների (ՄՀՄ) հիմնադրման և գործունեության իրավական և հայեցակարգային համակարգի մշակում:
- Տեղական պաշտոնյաների ուսուցում ծառայությունների մատուցման վերաբերյալ, ներառյալ պարտադիր և պատվիրակված լիազորությունների իրականացումը:
- Տարածքային կառավարման նախարարությանը տեխնիկական և խորհրդատվական ծառայությունների տրամադրում՝ տեղերում հարկային վարչարարության իրականացման և բյուջեի կառավարման ու տեղական հարկային վարչարարության բնագավառներում կարևորագույն համայնքների կարողությունների կայացման համար:
- ՀՀ օրենսդրության արդյունավետ կիրառման նպատակով աջակցության տրամադրում՝ կիրառման ընթացակարգերի ու ենթաօրենսդրության մշակման միջոցով:
- Համայնքային էլեկտրոնիկ ծառայությունների և կառավարման տեղեկատվական համակարգի ձևավորում և սարքավորումների տրամադրում:
- Չարենցավանի համայնքի տեղակատվական համակարգերի զարգացման կենտրոնի արդիականացում և աշխատակազմի վերապատրաստում՝ համայնքային ծառայությունների

տրամադրման որակի բարձրացման նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման մասով:

2. Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանի դատաիրավական համակարգի անհրաժեշտ վարչարարության ապահովմանը, հասարակության համար մատչելի դատական համակարգի արդյունավետ ձևավորմանը և իրավական ու դատական տեղեկությունների մատչելիության բարելավմանը: Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ավարտին հասցնել չվերակառուցված դատարանների շենքերի վերակառուցման և նոր շենքերի կառուցման շինարարական աշխատանքների կատարումը, կահավորումը՝ ներառյալ համակարգչային և այլ սարքավորումներով համալրումը:

Ծրագրի շրջանակներում 2009 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Դատական Խորհրդի գործունեության օրենքների և աշխատանքային գործընթացների մշակում,
- Դատաիրավական համակարգին առնչվող տվյալների բազայի և էլեկտրոնային կայքի օգտագործման համար դատարանների աշխատակիցների վերապատրաստման դասընթացների կազմակերպում,
- դատարանների շենքերի նախագծման ստանդարտների մշակում, ուսումնական կենտրոնի շենքի նախագծահաշվարկային աշխատանքների իրականացում
- շուրջ 12 դատարանների շենքերի նորոգման/կառուցման նախագծային աշխատանքների իրականացում և շինարարություն,
- Երևանի էրեբունի-Շենգավիթ համայնքների առաջին ատյանի դատարանի կահավորում,
- դատական դեպարտամենտի համար ճարտարագիտության և ճարտարապետության գծով խորհրդատուի աշխատանքի ֆինանսավորում
- պատրաստի նախագծային փաստաթղթերի հիման վրա դատարանների շենքերի կառուց-ման/վերակառուցման աշխատանքների իրականացում:

Միաժամանակ 2009 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ պետական կառավարման ոլորտում նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային դրամաշնորհային ծրագրերը.

1. Գանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումների իրականացման դրամաշնորհային ծրագիր,
2. Պետական հատվածի հաշվապահական հաշվառման բարեփոխումների իրականացման դրամաշնորհային ծրագիր,
3. Պետական պարտքի կառավարման դրամաշնորհային ծրագիր,

4. Վիճակագրական մաստեր-պլանի մշակման և վիճակագրական կարողությունների ուժեղացման միջոցով տեխնիկական աջակցության դրամաշնորհային ծրագիր,

5. Օտարերկրյա ներդրումների և արտահանման աջակցության երկրորդ դրամաշնորհային ծրագիր:

Բնակչության առողջության պահպանումը պետության կողմից դիտարկվում է որպես ազգային անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրներից մեկը:

Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված **առողջապահության** բնագավառի ծախսերը (առանց ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի և առողջապահության գծով հետազոտական և նախագծային աշխատանքների ծախսերի) կազմում են 64,877.8 մլն դրամ: Ծախսերի աճը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 11,314.9 մլն դրամ կամ 21.1 տոկոս: Առողջապահության ոլորտում պետական ծախսերի աճը հանդիսանում է ոլորտում իրավիճակի բարելավման առաջնահերթ ուղղություններից մեկը:

Առկա խնդիր է դիտարկվում առողջապահության ոլորտին ուղղվող պետական ծախսերի առավել նպատակային և արդյունավետ ծախսային ուղղվածության ապահովումը, ինչպես նաև բուժօգնության ծառայությունների մատչելիության բարձրացումը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության դերի իրական բարձրացման, բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման, մոր և մանկան առողջության ապահովման, սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների կանխարգելման և բնակչության աղքատ խավերի կարիքների բավարարման ծրագրերի իրականացման վրա:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով առողջապահության ծախսերի ձևավորումն ունի երկու հիմնական մոտեցում.

- առողջապահական գերակայությունների պահպանում,
- սոցիալական ուղղվածության ապահովում:

«Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ»

«Դեղագործական ապրանքներ»

Դասը ընդգրկում է «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» ծրագիրը՝ 3094.6 մլն դրամ, 2008 թվականի 2323.8 մլն դրամի դիմաց և «Դեղորայքի տրամադրում պետական պահպանության ծառայությանը» ծրագիրը՝ 1.1 մլն դրամ գումարով: Ծրագրերով նախատեսվում են կենտրոնացված միջոցներով դեղորայքի ձեռքբերման ծախսեր: Ծրագրի շրջանակներում ձեռք կբերվի հոգեմետ, չարորակ նորագոյացություններով հիվանդների, շաքարային և ոչ շաքարային դիաբետով հիվանդների, էպիլեպսիայով, պարբերական հիվանդությամբ հիվանդների, երիկամների փոխպատվաստում տարած հիվանդների համար դեղորայք:

«Այլ բժշկական ապրանքներ»

«Բժշկական սարքեր և սարքավորումներ»

Դասը ընդգրկում է «Ներդրումներ առողջապահական կազմակերպություններում բժշկական սարքավորումների և շտապ օգնության մեքենաների ձեռքբերման համար» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 1703.1 մլն դրամ և «Ներդրումներ պետական պահպանության ծառայությունում բժշկական սարքավորումների ձեռքբերման համար» ծրագիրը, որի գծով նախատեսվում է՝ մոտ 25.0 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում ձեռք կբերվի նորագույն բժշկական սարքեր և սարքավորումներ:

«Արտահիվանդանոցային ծառայություններ»

Առողջապահության բնագավառում հիմնական գերակայություն է համարվում **առաջնային բուժօգնության ոլորտը**, որի նպատակներն են ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի դերի բարձրացումը (ամբուլատոր-պոլիկլինիկական անվճար բուժօգնության իրականացման սկզբունքի պահպանմամբ), կանխարգելիչ ուղղվածության ուժեղացումը, բժշկական օգնության և ծառայությունների ստանալու մատչելիության ընդլայնումը, արտահիվանդանոցային բուժօգնության տեսակների և դրանց տեսակարար կշռի մեծացման ապահովումը, ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության նյութատեխնիկական բազայի ամրապնդումը և այդ ամենի արդյունքում՝ հիվանդանոցային բուժօգնության բեռի թեթևացումը:

Հաշվի առնելով առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության գերակայությունը, հիվանդանոցային բուժօգնության համեմատ մատչելիության ավելի բարձր մակարդակը և ազգաբնակչությանը տարածքային կտրվածքով հասանելիության ավելի մեծ աստիճանը, առողջապահության պետական ծախսերի ֆինանսավորման կառուցվածքում նախատեսվել է առաջնային բուժօգնության ֆինանասավորման բարձր աճի առաջանցիկ տեմպերի ապահովում՝ մասնավորապես 2009 թվականին 2008 թվականի համեմատությամբ առողջապահությանն ուղղվող ծախսերը կաճեն 21.1 տոկոսով, իսկ առաջնային բուժօգնությանն ուղղվող ծախսերը՝ 34.4 տոկոսով:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով «Արտահիվանդանոցային ծառայություններ» խմբի գծով նախատեսվել է 25770.4 մլն դրամ: ՀՀ 2008 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերն աճել են 6602.4 մլն դրամով:

Հարկ է նշել, որ 2009 թվականին «Հեմոդիալիզի անցկացման ծառայություններ» ծրագիրը նախատեսվում է ընդգրկել «Արտահիվանդանոցային ծառայություններ» խմբում, իսկ «Մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման գծով պետական պատվեր» ծրագիրը՝ վերանվանել «Բարձր ռիսկի խմբերում ընդգրկված բնակչության մոտ հիվանդությունների հայտնաբերման, առողջության գնահատման և բուժման ծառայություններ» ծրագրի:

Առաջնային բուժօգնության ոլորտի շրջանակներում նախատեսվում է տասնչորս ծրագրերի իրականացում: Այսպես.

- «Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 9338.8 մլն դրամ՝ 2008 թվականի 8074.2 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 15.7 տոկոս,
- «Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 3045.6 մլն դրամ՝ 2008 թվականի 2610.6 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 16.7 տոկոս,
- «Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 1663.6 մլն դրամ՝ 2008 թվականի 887.5 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 87.5 տոկոս,
- «Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 150.0 մլն դրամ՝ 2008 թվականի չափով,
- «Օրթոդոնտոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 13.6 մլն դրամ՝ 2008 թվականի 11.7 մլն դրամի դիմաց, կամ աճը կազմում է 16.6 տոկոս,
- «Բարձր ռիսկի խմբերում ընդգրկված բնակչության մոտ հիվանդությունների հայտնաբերման, առողջության գնահատման և բուժման ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 732.5 մլն դրամ՝ 2008 թվականի 128.0 մլն դրամի դիմաց կամ 5.7 անգամ ավելի,
- «Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 71.3 մլն դրամ 2008 թվականի 51.4 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 38.7 տոկոս,
- «Ներդրումներ «Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ում» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 5.0 մլն դրամ՝ 2008 թվականի չափով,
- «Հեմոդիալիզի անցկացման ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 1362.3 մլն դրամ՝ 2008 թվականի 1057.9 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 28.8 տոկոս,
- «Ստոմատոլագիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 897.1 մլն դրամ՝ 2008 թվականի 767.6 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 16.9 տոկոս,
- «Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 102.0 մլն դրամ՝ 2008 թվականի 105.2 մլն դրամի դիմաց,
- «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 3320.8 մլն դրամ՝ 2008 թվականի 2712.9 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 22.4 տոկոս,
- «Շտապ բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 2431.5 մլն դրամ՝ 2008 թվականի 1463.6 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 66.1 տոկոս,

- «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը, որի գծով նախատեսվում է 2636.2 մլն դրամ՝ 2008 թվականի 2200.3 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 19.8 տոկոս:

Նախագծով 2009 թվականի համար ծրագրվող բյուջետային ծախսերի աճը ՀՀ 2008 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ հիմնականում պայմանավորված է.

- տեղամասային թերապևտների (մանկաբույժների), ընտանեկան բժիշկների, դեռահասների կաբինետների բժիշկ-մասնագետների, բուժքույրերի, կրտսեր բուժանձնակազմի և վարչատնտեսական անձնակազմի պահպանման ծախսերի 19.5 տոկոսով ավելացմամբ (2008 թվականի 5071.9 մլն դրամի դիմաց 2009 թվականին նախատեսվում է 6060.0 մլն դրամ): Բժշկական անձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը նախատեսվում է 92.4 հազ. դրամ՝ 2008 թվականի 77.0 հազ. դրամի դիմաց, իսկ միջին բուժանձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը՝ 59.2 հազ. դրամ՝ 2008 թվականի 49.3 հազ. դրամի դիմաց: Լեռնային և բարձր լեռնային բնակավայրերում տեղամասային սկզբունքով աշխատող բուժանձնակազմին 2009 թվականին նախատեսվում է սահմանված աշխատավարձի նկատմամբ 10% և 20% հավելումներ,
- տեղամասերի առաջին օգնության դեղորայքի և վիրակապական նյութերի ծախսերի շուրջ 10 տոկոսով ավելացմամբ (2008 թվականի 191.5 մլն դրամի դիմաց՝ 2009 թվականին նախատեսվում է 209.7 մլն դրամ),
- դպրոցներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման ծախսերի 17.8 տոկոսով ավելացմամբ (2008 թվականի 478.6 մլն դրամի դիմաց՝ 2009 թվականին նախատեսվում է 564.0 մլն դրամ),
- անվճար և արտոնյալ պայմաններով դեղամիջոցներ ստանալու իրավունք ունեցող 18 տարին լրացած և ավելի բարձր տարիքի անձանց տրվող դեղորայքի միջին արժեքի 20 տոկոսով ավելացմամբ: Բնակչության սոցիալական խմբերին անվճար կամ արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղորայքի ծախսերը 2008 թվականի 1340.6 մլն դրամի դիմաց՝ 2009 թվականին նախատեսվում են 1517.9 մլն դրամ,
- նեղ մասնագիտացված բժշկական օգնություն իրականացնող կաբինետների և դիսպանսերների բժիշկների, բուժքույրերի, կրտսեր բուժանձնակազմի և վարչատնտեսական անձնակազմի պահպանման ծախսերի 21.6 տոկոսով ավելացմամբ (2008 թվականի 2367.4 մլն դրամի դիմաց նախատեսվում է 2879.3 մլն դրամ): Նշված բժշկական անձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը նախատեսվում է 72.6 հազ. դրամ՝ 2008 թվականի 66.0 հազ. դրամի դիմաց, իսկ միջին բուժանձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը՝ 43.6 հազ. դրամ՝ 2008 թվականի 39.6 հազ. դրամի դիմաց: Հակատուբերկուլյոզային, հոգեբուժական և մաշկավեներաբանական կաբինետներում աշխատող բուժանձնակազմին՝ աշխատանքային վնասակարության համար՝ նախատեսվում է սահմանված աշխատավարձի նկատմամբ 50 տոկոս հավելումներ,
- մանկաբարձագինեկոլոգիական օգնություն իրականացնող կաբինետների բժիշկների,

մանկաբարձ-գինեկոլոգների, բուժքույրերի, մանկաբարձուհիների, կրտսեր բուժանձնակազմի և վարչատնտեսական անձնակազմի պահպանման ծախսերի, կաբինետների աշխատանքների ապահովման տնտեսական և դեղորայքային ծախսերի 87.5 տոկոսով ավելացմամբ (2008 թվականի 887.5 մլն դրամի դիմաց նախատեսվում է 1663.6 մլն դրամ): Հաշվի առնելով ծննդօգնության բնագավառում վարվող քաղաքականությունը, 2009 թվականին նախատեսվում են կտրուկ ավելացումներ նաև ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում իրականացվող մանկաբարձական բուժօգնության համար: Այսպես. ծրագրի շրջանակներում 2009 թվականին նախատեսվում է բուժանձնակազմի աշխատավարձի կրկնակի ավելացում՝ բժշկական անձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը նախատեսվում է 132.0 հազ. դրամ՝ 2008 թվականի 66.0 հազ. դրամի դիմաց, իսկ միջին բուժանձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը՝ 80.0 հազ. դրամ՝ 2008 թվականի 39.6 հազ. դրամի դիմաց,

- մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական և շարժողական խանգարումներով երեխաների վերականգնողական բուժման միջոցառումների գծով հաճախումների 20.8 հազարով և մեկ հաճախման միջին արժեքի 14.8 տոկոսով ավելացմամբ (2008 թվականի 128.0 մլն դրամի դիմաց նախատեսվում է 232.7 մլն դրամ),

- «Բարձր ռիսկի խմբերում ընդգրկված բնակչության մոտ հիվանդությունների հայտնաբերման, առողջության գնահատման և բուժման ծառայություններ» ծրագրով նոր միջոցառումների 499.8 մլն դրամով նախատեսմամբ: Այն է՝ «Վերարտադրողական օրգանների նախաքաղցկեղային/քաղցկեղային հիվանդությունների վաղ ախտորոշման, բուժման և կանխարգելման» սկրինինգային հետազոտությունները՝ 98.8 մլն դրամով, որով նախատեսվում է հետազոտել 30-60 տարեկան 5.200 կին, մեկ հետազոտման արժեքը սահմանելով 19.0 հազ. դրամ, «Հղիության ընթացքում պտղի բնածին արատների վաղ ախտորոշման և կանխարգելման» սկրինինգային հետազոտությունները՝ 100.0 մլն դրամով, որով նախատեսվում է հետազոտել 30-60 տարեկան 5.000 կին, մեկ հետազոտման արժեքը սահմանելով 20.0 հազ. դրամ, «Անպտղության ախտորոշման և բուժման» սկրինինգային հետազոտությունները՝ 90.2 մլն դրամով, ըստ որի 2009 թվականին նախատեսվում է հետազոտել 3200 մարդ (1600 ամուսնական զույգեր)՝ մեկ հետազոտման արժեքը սահմանելով 28.2 հազ. դրամ, «Առաջին փսիխոտիկ էպիզոդի հիվանդների բուժում և շարունակական հսկողություն արտահիվանդանոցային պայմաններում» միջոցառումը՝ 210.8 մլն դրամով, որով նախատեսվում է բուժել 360 հիվանդ, որոնց բուժման տարեկան միջին տևողությունը կազմում է 183 օր և մեկ հիվանդի մեկ օրվա բուժման արժեքը՝ 3.2 հազ. դրամ,

- տարբեր մարզաձևերի ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված մարզիկների բժշկական հսկողության, հիվանդությունների և վնասվածքների ախտորոշման և բուժման, ինչպես նաև ՀՀ հավաքական թիմերին անհրաժեշտ վիտամիններով, դեղամիջոցներով և վերականգնողական միջոցներով ապահովման համար 2008 թվականի 51.4 մլն դրամի դիմաց՝ 2009 թվականին 71.3 մլն դրամ նախատեսմամբ: Ծրագրի շրջանակներում 2009 թվականին նախատեսվում է

վիտամինների, դեղամիջոցների և վերականգնողական միջոցների հատկացում 26 մարզածևի գծով՝ 2008 թվականի՝ 5 մարզածևի փոխարեն,

- հեմոդիալիզի անցկացման մեկ սեանսի միջին արժեքի 17.1 տոկոսով բարձրացմամբ՝ 181.2 մլն դրամ գումարով և բուժման դեպքերի 38-ով ավելացմամբ՝ 123.2 մլն դրամ գումարով,
- ստոմատոլոգիական և օրթոդոնտոլոգիական բժշկական օգնության գծով բուժման միջին արժեքի շուրջ 17 տոկոսով ավելացմամբ (2008 թվականի 779.3 մլն դրամի դիմաց 2009 թվականին նախատեսվում է 910.7 մլն դրամ),
- լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների թվի 150.8 հազարով ավելի նախատեսմամբ՝ 143.8 մլն դրամ գումարով և հետազոտության միջին արժեքի շուրջ 17 տոկոսով ավելացմամբ՝464.1 մլն դրամ գումարով,
- շտապ բժշկական օգնության կանչի միջին արժեքի՝ շուրջ 66 տոկոսով ավելացմամբ՝ 963.2 մլն դրամ գումարով և կանչերի թվի շուրջ մեկ հազարով ավելի նախատեսմամբ՝ 4.6 մլն դրամ գումարով: Նախատեսվում է բուժանձնակազմի աշխատավարձը ավելացնել շուրջ 2.3 անգամ, այն հասցնելով տեղամասային սկզբունքով աշխատող բուժանձնակազմի աշխատավարձի չափաքանակներին: Դեղորայքի և բժշկական նշանակության այլ պարագաների գծով նախատեսվում է 47.6 տոկոս ավելացում կապված ժամանակակից և համեմատաբար արդյունավետ դեղամիջոցների կիրառմամբ: Տրանսպորտային միջոցների ընթացիկ վերանորոգման ծախսերի և պահեստամասերի գնման գծով նախատեսվում է ծախսերի 88.3 տոկոսով, իսկ վառելանյութի թանկացման հետ կապված՝ 25 տոկոսով ավելացումներ,
- զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց առաջին անհրաժեշտության բժշկական պարագաներով և դեղորայքային ապահովման համար 2008 թվականի 1950.0 մլն դրամի դիմաց՝ 2009 թվականին 2350.0 մլն դրամ նախատեսմամբ,
- զինկոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովներում ընդգրկված մասնագետների կողմից զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննությունն անցկացնելու համար 2008 թվականի 199.9 մլն դրամի դիմաց՝ 2009 թվականին 235.8 մլն դրամ նախատես-մամբ: Բժշկական հետազոտում իրականացնող բժշկի համար փոխհատուցման ծախսերը (ամսվա կտրվածքով) նախատեսվում են 77.0 հազ. դրամ 2008 թվականի 65.0 հազ. դրամի դիմաց, իսկ բուժքրոջ համար՝ 54.0 հազ. դրամ 2008 թվականի 48.0 հազ. դրամի դիմաց:

Միաժամանակ երեխաների թվաքանակի նվազման հետ կապված «Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ» ծրագրի գծով 2009 թվականին նախատեսվում է 3.2 մլն դրամով, իսկ տեղամասերի աշխատանքների ապահովման տնտեսական ծախսերի գծով՝ 4.4 մլն դրամով պակաս:

Մասնագիտական պոլիկլինիկական կաբինետների և դիսպանսերների մեկ օրվա միջին հաճախումների թվի 7-ով նախատեսման հետ կապված (2008 թվականի՝ 11-ի փոխարեն) դեղորայքային ծախսերը նախատեսվում են 54.8 մլն դրամով, իսկ տնտեսական ծախսերը՝ 22.0 մլն դրամով պակաս:

Արտահիվանդանոցային բուժօգնության գծով ծրագրերը ներառում են՝

- ընտանեկան բժշկի և տեղամասային թերապևտի (մանկաբույժի) կողմից բնակչության առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման, հիվանդների բժշկական օգնության և նրանց նկատմամբ շարունակական հսկողության ապահովման, անհրաժեշտության դեպքում, հիվանդանոցային բուժման կարիք ունեցողների հոսպիտալացման կազմակերպման միջոցառումների իրականացումը,
- արտոնյալ պայմաններով դեղամիջոցներ ստանալու իրավունք ունեցող անձանց տեղամասային թերապևտի (մանկաբույժի) և ընտանեկան բժշկի միջոցով, իսկ առանձին հիվանդությունների գծով՝ համապատասխան մասնագետի միջոցով անհրաժեշտ դեղորայքով ապահովումը,
- ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի և դիսպանսերների նեղ մասնագետների կողմից բնակչության բուժական-խորհրդատվական մասնագիտացված օգնության ապահովումը (ուռուցքաբանական, ներզատաբանական, հոգեբուժական, մաշկավեներաբանական, հակատուբերկուլյոզային, նարկոլոգիական, ինֆեկցիոն, սրտաբանական, քիթ-կոկորդ-ականջաբանական, վիրաբուժական/վնասվածքաբանական, նյարդաբանական, ակնաբուժական և այլ կաբինետների միջոցով) ամբողջ բնակչության համար, առանց հաճախումների սահմանափակման,
- շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների ամբուլատոր բուժման կազմակերպումը,
- մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների առողջական վիճակի գնահատումը և վերականգնողական բուժման ամբուլատոր կազմակերպումը,
- վերարտադրողական առողջության բարելավման, մոր և պտղի հիվանդությունների վաղ ախտորոշման և կանխարգելման նպատակով սկրինինգ միջոցառումների իրականացումը,
- առաջին փսիխոտիկ էպիզոդի հիվանդների բուժման և շարունակական հսկողության կազմակերպումը արտահիվանդանոցային պայմաններում,
- ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում ըստ բժշկական ցուցումների լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացման ապահովումը ամբողջ բնակչության համար՝ անկախ տարիքից և սոցիալական կարգավիճակից,
- տուբերկուլյոզով, դիաբետով, չարորակ նորագոյացություններով և սիրտ-անոթային համակարգի հիվանդների (բարձր ռիսկի խմբում ընդգրկված բնորոշիչ ախտանիշներ ունեցող անձանց) լաբորատոր-գործիքային հետազոտությունների իրականացման ապահովումը,
- 6 և 12 տարեկան երեխաների բերանի խոռոչի հիգիենայի ծրագրի իրականացման ապահովումը,
- 15 տարեկան աղջիկների առողջական վիճակի գնահատումը և խորհրդատվությունը,
- հեմոդիալիզով հիվանդների բուժման ապահովումը,
- ստոմատոլոգիական օգնության ապահովումը մինչև 8 տարեկան, ինչպես նաև 12 տարեկան երեխաներին, 65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց և սոցիալապես անապահով խմբերում ընդգրկվածներին,

- նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց առողջական վիճակի հետազոտումը, գնահատումը, բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպումը և առաջին անհրաժեշտության բժշկական պարագաներով և դեղորայքով ապահովումը,
- գյուղական բնակավայրերում բուժակ-մանկաբարձական կետերի միջոցով բնակչության մինչբժշկական օգնության և սպասարկման իրականացումը,
- հղիների և գինեկոլոգիական հիվանդություններով տառապող կանանց մանկաբարձագինեկոլոգիական օգնության ապահովումը՝ կանանց կոնսուլտացիաների (կաբինետների) միջոցով,
- տարբեր մարզաձևերի գծով ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված մարզիկների բժշկական հսկողության, հիվանդությունների և վնասվածքների ախտորոշման և բուժման իրականացումը: ՀՀ հավաքական թիմերի անդամներին բարձրորակ դեղորայքով, վիտամիններով և վերականգնողական միջոցներով ապահովումը և հակադոպինգային հսկողության իրականացումը,
- հանրապետության ամբողջ տարածքում անհետաձգելի բժշկական օգնության ապահովումը՝ շտապ բժշկական օգնության կանչերի միջոցով՝ ամբողջ բնակչության համար:

Ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության ֆինանսավորումը շարունակվելու է իրականացվել բնակչության մեկ շնչի հաշվով ֆինանսավորման սկզբունքով (հաշվարկի համար բնակչության հաշվարկային մեծությունը ընդունված է 3230.1 հազար, որից մեծահասակներ՝ 2424.8 հազար, երեխաներ՝ 707.9 հազար, նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիներ՝ 97.4 հազար):

«Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ» ծրագրով տարվա կտրվածքով տեղամասային թերապևտի (ընտանեկան բժշկի) կողմից 18 տարին լրացած և ավելի բարձր տարիքի անձանց բժշկական օգնության և սպասարկման համար մեկ բնակչի հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվում է 1779 դրամ՝ 2008 թվականի 1530 դրամի դիմաց: Նշված ծրագրով տարվա կտրվածքով տեղամասային մանկաբույժի (ընտանեկան բժշկի) կողմից մինչև 18 տարեկան երեխաների բժշկական օգնության և սպասարկման համար մեկ երեխայի հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվում է 3694 դրամ՝ 2008 թվականի 3158 դրամի դիմաց, իսկ դեռահասների կաբինետի բժիշկ-մասնագետի կողմից դեռահասների բժշկական օգնության և սպասարկման համար մեկ դեռահասի հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվում է 3378 դրամ՝ 2008 թվականի 2895 դրամի դիմաց: Դպրոցներում իրականացվող երեխաների բժշկական օգնության և սպասարկման ծախսերը ըստ մեկ աշակերտի ֆինանսավորման նախատեսվում են տարեկան 1310 դրամ՝ 2008 թվականի 1112 դրամի դիմաց:

Նեղ մասնագիտական բժշկական օգնության գծով ըստ նեղ մասնագետի բուժօգնության իրականացման մեկ շնչի ֆինանսավորման միջինացված գումարը նախատեսվում է մեծահասակների համար 486 դրամ՝ 2008 թվականի 411 դրամի դիմաց, իսկ երեխաների (այդ թվում պատանիների) համար համապատասխանաբար 724 դրամ և 607 դրամ:

Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության գծով տարվա կտրվածքով մեկ բնակչի հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվում է 686 դրամ՝ 2008 թվականի 371 դրամի դիմաց:

Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ծրագրի շրջանակներում 18 տարին լրացած և ավելի բարձր տարիքի անձանց լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտության ծախսերը ըստ մեկ շնչի ֆինանսավորման նախատեսվում են 562 դրամ՝ 2008 թվականի 442 դրամի դիմաց, մինչև 18 տարեկան երեխաների համար համապատասխանաբար 793 դրամ և 655 դրամ, զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց համար 3961 դրամ և 3408 դրամ, իսկ մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության գծով՝ 229 դրամ և 190 դրամ:

Նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց փորձաքննությունն անցկացնող բուժանձնակազմի կողմից բժշկական հետազոտման իրականացման մեկ շնչի ֆինանսավորման միջինացված գումարը նախատեսվում է 2419 դրամ՝ 2008 թվականի 2062 դրամի դիմաց:

«Հիվանդանոցային ծառայություններ»

Հիվանդանոցային բուժօգնության գծով ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագիծը կազմում է 23300.0 մլն դրամ, որը գերազանցում է 2008 թվականի համապատասխան ցուցանիշը 4188.8 մլն դրամով կամ աճը կազմում է 21.9 տոկոս: Ընդհանուր ավելացման 83.7 տոկոսը մոտ 3507.4 մլն դրամ պայմանավորված է հիվանդանոցային բուժօգնության մեկ օրվա միջին գնի 14.8 տոկոս բարձրացմամբ և 16.3 տոկոսը մոտ 681.4 մլն դրամ պայմանավորված է հիվանդանոցային 7781 դեպքերի ավելացմամբ:

Հիվանդանոցային բուժօգնություն իրականացնող բուժհաստատություններում մեկ հիվանդի մեկ օրվա բուժման միջինացված արժեքը նախատեսվում է 13200 դրամ՝ 2008 թվականի 11500 դրամի դիմաց կամ աճը կազմում է 14.8 տոկոս, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձի 30 տոկոս բարձրացմամբ, դեղորայքի և բժշկական պարագաների, ինչպես նաև տնտեսական բնույթի ծախսերի ավելացմամբ: Բժշկական անձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը նախատեսվում է հասցնել մինչև 66.4 հազ դրամի (2008 թվականի 51.1 հազ դրամի դիմաց), իսկ միջին բուժանձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը՝ մինչև 52.0 հազ դրամի (2008 թվականի 40.0 հազ դրամի դիմաց):

Հիվանդանոցային բուժօգնության ծառայության գծով հիվանդանոցային դեպքի դիմաց վճարումը կատարվում է՝ ելնելով անվճար բուժօգնության համար հաստատված գներից: Գները հաշվարկվում են մեկ հիվանդի մեկ օրվա բուժման միջինացված արժեքի, բուժման միջին տևողության և ծառայության բարդության հաշվարկային գործակցի արտադրյալով: 2009 թվականին ևս ֆինանսավորումը կիրականացվի սահմանափակված (գլոբալ) բյուջեի սկզբունքով:

Ըստ վիճակագրական դիտարկումների տվյալների բնակչության 8-10%-ը կարիք ունեն ստանալու հիվանդանոցային բուժօգնություն (կամ մոտ 295000 դեպք), որից պետական

պատվերի շրջանակներում 2009 թվականի պետական բյուջեով նախատեսվում է 214930 դեպք, կամ կարիք ունեցողների 72.9 տոկոսը (2007 թվականի փաստացի հիվանդանոցային դեպքերը կազմել են 224350): 2009 թվականին նախատեսվում է հիվանդանոցային բուժօգնություն ստացողների 7781 դեպքով ավելացում 2008 թվականի նկատմամբ, որից 5371 դեպքը սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բուժօգնության, 2410 դեպքը մանկաբարձագինեկոլոգիական օգնության գծով է:

«Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայություններ»

Դասը ընդգրկում է հետևյալ ծրագրերը՝

- «Բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 32093 հիվանդանոցային դեպքի բուժում մոտ 3700.3 մլն դրամ գումարով՝ 2008 թվականի 26722 դեպքի և մոտ 2684.0 մլն դրամի դիմաց: Դեպքերի ավելացումը նախատեսվում է ելնելով 2007 թվականի փաստացի կատարողականից, որը կազմել է 28883 դեպք:

«Բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը նպատակաուղղված է բժշկական օգնություն և ծառայություններ մատուցել բնակչության սոցիալապես անապահով խմբերին բժշկական օգնության և ծառայությունների բոլոր տեսակների համար, բացառությամբ՝ կոսմետոլոգիական, օրգանների ու հյուսվածքների փոխպատվաստման և ստոմատոլոգիական թանկարժեք ծառայությունների: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 15.9 %:

- «Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 29272 հիվանդանոցային դեպքի բուժում 2700.6 մլն դրամ գումարով, 2008 թվականի նույն դեպքերի և 2352.5 մլն դրամի դիմաց: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 11.6 %: Ծրագիրն իրականացվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված անհետաձգելի վիճակների և հիվանդությունների ցանկի:

«Մասնագիտացված հիվանդանոցային ծառայություններ»

Դասը ընդգրկում է հետևյալ ծրագրերը՝

- «Տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է տուբերկուլյոզի 4380 հիվանդանոցային դեպքի բուժում 1248.7 մլն դրամ գումարով՝ 2008 թվականի նույն դեպքերի և 1087.5 մլն դրամի դիմաց:

Ծրագիրը ներառում է նոր հայտնաբերված տուբերկուլյոզով հիվանդների և կրկնակի հիվանդացածների բուժման կազմակերպումը հակատուբերկուլյոզային դիսպանսերներում, տուբերկուլյոզով քրոնիկ հիվանդների երկարատև բժշկական օգնության, սպասարկման և խնամքի

ապահովումը հակատուբերկուլյոզային դիսպանսերներում, վերականգնողական բուժման կազմակերպումը հակատուբերկուլյոզային առողջարաններում: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 5.4 %:

- «Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 6950 հիվանդանոցային դեպքի բուժում 742.5 մլն դրամ գումարով, 2008 թվականի 646.7 մլն դրամի դիմաց: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 3.2 %:

Ինֆեկցիոն հիվանդությունների բուժումը ներառում է՝ աղիքային, վիրուսային և միջատներով տարածվող ինֆեկցիաներով ախտահարվածների բուժում, որն ունի սոցիալական նշանակություն: Ինֆեկցիոն հիվանդություններով տառապող անձանց բուժօգնության կազմակերպումը իրականացվում է ընդհանուր և մասնագիտացված ինֆեկցիոն հիվանդանոցներում, բաժանմունքներում:

- «Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 1090 հիվանդանոցային դեպքի բուժում 195.1 մլն դրամ գումարով՝ 2008 թվականի նույն դեպքերի և 169.8 մլն դրամի դիմաց:

Ծրագրով նախատեսվում է սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով տառապող անձանց, ինչպես նաև կոնտակտավորների մասնագիտացված բուժկանխարգելիչ օգնության իրականացումը և համապատասխան հսկողության կազմակերպումը մաշկավենեռաբանական դիսպանսերներում: Ծրագրի շրջանակներում ներառվել է նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների բժշկական օգնության ծախսերը: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 0.8 %:

- «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 6162 հիվանդանոցային դեպքի բուժում 1761.4 մլն դրամ գումարով՝ 2008 թվականի նույն դեպքերի և 1535.9 մլն դրամի դիմաց:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել քրոնիկ հոգեկան հիվանդների խնամքը, հիվանդների փորձաքննությունը, հարկադիր և սուր վիճակների բուժումը: Ծրագրով նախատեսվում է նարկոլոգիական դիսպանսերներում թմրամոլությամբ, թունամոլությամբ, ալկոհոլամոլությամբ տառապող անձանց հիվանդանոցային բուժման ապահովումը: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 7.6 %:

- «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 7679 հիվանդանոցային դեպքի բուժում 1320.3 մլն դրամ գումարով՝ 2008 թվականի նույն դեպքերի և 888.5 մլն դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել չարորակ նորագոյացությունների համալիր, վիրահատական և ճառագայթային բուժում: Չարորակ հիվանդների ճառագայթային բուժում ցերեկային ստացիոնարի պայմաններում, ինչպես նաև քիմիաթերապևտիկ և սիմպտոմատիկ բուժում: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 5.7 %:

- «Վերականգնողական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 4262 հիվանդանոցային դեպքի բուժում 635.0 մլն դրամ գումարով՝ 2008 թվականի նույն դեպքերի և 554.0 մլն դրամի դիմաց: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 2.7%:

- «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 38300 հիվանդանոցային դեպքի բուժում 1121.2 մլն դրամ գումարով՝ 2008 թվականի նույն դեպքերի և 976.5 մլն դրամի դիմաց: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 4.8 %:

- «Թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2.2 մլն դրամ:

«Բժշկական, մոր և մանկան կենտրոնների ծառայություններ»

- «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 49050 դեպք 6102.0 մլն դրամ գումարով՝ 2008 թվականի 46640 դեպքի և 3871.4 մլն դրամի դիմաց:

Ծրագրի շրջանակներում հղիության ախտաբանական ընթացքի հետ կապված բուժօգնության դեպքերը պահպանվել են 2008 թվականի մակարդակին: 2410-ով դեպքերի ավելացումը պայմանավորված է 2007-2008 թվականի ծնունդների փաստացի թվաքանակով, ինչպես նաև 2009 թվականին ծնունդների թվաքանակի կանխատեսվող աճով:

Հաշվի առնելով ծննդօգնության բնագավառում ՀՀ առողջապահության նախարարության կողմից վարվող քաղաքականությունը, 2009 թվականին նախատեսվում են նկատելի ավելացնել հղիության ախտաբանական ընթացքի հետ կապված բուժօգնության գները: Ծախսերի ավելացումները հիմնականում կուղղվեն բուժանձնակազմի աշխատանքի վարձատրության ավելացմանը:

Ծրագիրն ընդգրկում է ծննդաբերության հետ կապված բուժօգնությունը՝ ծննդաբերության, նախածննդյան և հետծննդյան բարդությունների բուժօգնությունը: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 26.2%:

- «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 31819 հիվանդանոցային դեպքի բուժում մոտ 3371.0 մլն դրամ գումարով՝ 2008 թվականի նույն դեպքերի և 2936.4 մլն դրամի դիմաց:

Ծրագրի գծով նախատեսվում է մինչև 7 տարեկան երեխաների հիվանդանոցային բժշկական օգնության իրականացումը՝ անկախ երեխայի հիվանդության ախտորոշումից և սոցիալական կարգավիճակից, ինչպես նաև, մինչև 18 տարեկան երեխաների, հիվանդանոցային բժշկական օգնություն պահանջող անհետաձգելի վիճակների և սուր հիվանդությունների դեպքերում, բուժօգնության իրականացումը: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 14.5 %:

- «Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 4572 հիվանդանոցային դեպքի բուժում 401.8 մլն դրամ գումարով՝ ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով հաստատված նույն դեպքերի և 350.0 մլն դրամի դիմաց: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 1.7 %:

«Հանրային առողջապահական ծառայություններ»

Հանրային առողջապահական ծառայությունների իրականացմանը ուղղվող ֆինանսական միջոցները կապահովեն Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարա համաճարակային անվտանգությունը, մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության բացառումը, մարդու և նրա ապագա սերունդների կենսունակության համար բարենպաստ պայմանների ապահովումը:

«Հանրային առողջապահական ծառայություններ»

Դասը ընդգրկում է հետևյալ ծրագրերը.

1. «Հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայություններ »,
2. « Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայություններ»,
3. «Հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման ծառայություններ»,
4. «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ»,
5. «Վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման ծառայություններ»,
6. «Արյան հավաքագրման ծառայություններ»,
7. «Ծխելու դեմ պայքարի պետական ծրագիր»:

«Հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 1905.7 մլն դրամ 2008 թվականի 1814.6 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 5.0 տոկոս:

Նախատեսվում է սանիտարա-քիմիական լաբորատոր հետազոտություններ, մանրեաբանական հետազոտություններ, ֆիզիկական գործոնների հետազոտություններ, խոլերայի նկատմամբ բաց ջրամբարների հետազոտություններ, վարակիչ օջախների ախտահանում և այլն: Աշխատավարձը հաշվարկվել է 451 բժշկի հաստիքային միավորի հաշվով յուրաքանչյուր հաստիքի գծով 58 հազ դրամ միջին ամսական հաշվարկային աշխատավարձ, 1080 բուժքույրի հաստիքային միավորի գծով՝ 47 հազ դրամ, 154 կրտսեր բուժ աշխատողի հաստիքային միավորի գծով՝ 32 հազ դրամ, այլ հաստքային միավորների գծով՝ 582 հաստիք 47 հազ դրամ միջին ամսական հաշվարկային աշխատավարձով: «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան հաշվակվել է 305.8 մլն դրամ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ: Ապրանքների գնման և այլ ծառայությունների վճարման ծախսերը կաճեն մոտ 3.5 տոկոսով:

«Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայություններ» ծրագրով 2008 թվականին նախատեսվում է 220.5 մլն դրամ 2008 թվականի 202.7 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 8.8 տոկոս:

Նախատեսվել է հակահամաճարակային, մանրեաբանական, մանկաբուժական, վիրոսոլոգիական, սանիտարահիգենիկ հետազոտություններ: Աշխատավարձը հաշվարկվել է 52 բժշկի հաստիքային միավորի հաշվով 80.9 հազ դրամ միջին ամսական աշխատավարձ, 28 բուժքույրի հաստիքային միավորի գծով 65.0 հազ դրամ, 8 կրտսեր բուժ աշխատողի հաստիքային միավորի գծով 41.5 հազ դրամ, այլ հաստքային միավորի գծով՝ 61 հաստիք 43.3 հազ դրամ: «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան հաշվակվել է 23.3 մլն դրամ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ: Հաստիքային միավորների ավելացում չի նախատեսվում: Ծրագրով նախատեսվում է իրականացնել համաճարակաբանական հետազոտություններ վարակային հիվանդությունների օջախներում, ազգաբնակչության իմունիզացիայի կատարման նկատմամբ հսկողություն, մանրէաբանական հետազոտությունների իրականացում, վարակիչ և ոչ վարակիչ զանգվածային հիվանդությունների, թունավորումների հաշվառում, համաճարակների, բռնկումների, արտակարգ իրավիճակների ժամանակ հատուկ հակահամաճարակային միջոցառումների իրականացում, մալարիայի դեմ պայքարի և կանխարգելման միջոցառումների իրականացում:

«Իմունականխարգելման ազգային ծրագրով» 2009 թվականին նախատեսվում է 150.0 մլն դրամ 2008 թվականի 120.0 մլն դրամի դիմաց կամ աճը կազմել է 25.0 տոկոս (2008թ. պետական բյուջեով «Իմունականխարգելման ազգային ծրագիրը» ընդգրկված է եղել «Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայություններ» ծրագրում): Ծրագրի շրջանակներում ձեռք կբերվի ԲՑԺ-ի (տուբերկուլոզ) պատվաստանյութ՝ 5.0 մլն դրամ, հեպատիտ Բ՝ 20.0 մլն դրամ, ԱԿԴՓ (դիֆթերիա, փայտացում, կապույտ հազ)՝ 35.0 մլն դրամ, ԱԴՓ-Մ (դիֆթերիա, փայտացում)՝ 20.0 մլն դրամ, պոլիոմելիտ՝ 18.0 մլն դրամ, ԿԿԽ (կարմրուկ, կարմրախտ, խոզուկ)՝ 40.5 մլն դրամ, ինրպես նաև 8.0 մլն դրամի ներարկիչներ, 3.5 մլն դրամի անվտանգ այրման տուփեր և այլ ծախսեր:

«Հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 255.5 մլն դրամ 2008 թվականի 244.9 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 4.3 տոկոս:

Հատուկ վտանգավոր վարակների կենտրոնը իրականացնում է էպիզոոտոլոգիական հետազոտություն հանրապետության տարածքում ժանտախտի, տուլարեմիայի և այլ բնական օջախային վարակների էպիզոոտիաները հայտնաբերելու և մարդկանց մեջ հիվանդացությունը ժամանակին կանխելու նպատակով: Նախատեսվում է էպիզոտոլոգիական, ժանտախտի և էրիզիպելոյիդի, տուլարեմիայի, լեպտոսպիրոզի և այլ հետազոտություններ: Հաշվարկվել է աշխատավարձի ֆոնդի աճ 5.0%, աշխատավարձը հաշվարկվել է 61 բժշկի հաստիքային միավորի հաշվով 79 հազ դրամ ամսական հաշվարկային աշխատավարձ, ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով հաստատված 75.0 հազ դրամի դիմաց, 73.5 բուժքույրի հաստիքային միավորի գծով 52.0 հազ դրամ՝ ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով հաստատված 49.5 հազ դրամ հաշվարկային աշխատավարձի դիմաց: Հաստիքային միավորների ավելացում չի

նախատեսվում: Ապրանքների գնման ու ծառայությունների վճարման ծախսերում ավելացել են մոտ 3.0 տոկոսով:

«ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է մոտ 128.8 մլն դրամ 2008 թվականի 80.3 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 60.4 տոկոս: ՁԻԱՀ/ՄԻԱՎ կանխարգելման հանրապետական կենտրոնը իրականացնում է ՄԻԱՎ վարակի տարածվածության մասին տեղեկատվության ստացում, ընտրված խմբերում վարակի միտումների ընթացիկ հսկողություն: Նախատեսվում է ՄԻԱՎ հակամարմնի հայտնաբերման գծով համաճարակաբանական հետազոտություն՝ իմունոֆերմենտային անալիզի մեթոդով, արագ թեստավորման, ռեֆերենսային մեթոդով և այլն, ինչպես նաև մրից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում:

«Վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 66.7 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում հաշվարկվել է 3706 վարակիչ հիվանդների օջախների ախտահանում յուրաքանչյուրը 18000 դրամով:

«Արյան հավաքագրման ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 211.3 մլն դրամ 2008 թվականի 200.0 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 5.6 տոկոս: Նախատեսվում է հազվագույտ արյան հավաքագրման և պաշարման հետազոտություններ, արյան հիվանդություններով տառապող հիվանդների դիսպանսեր հսկողության իրականացում, ինչպես նաև այլ հետազոտություններ: Նախատեսվել է նաև հանրապետության արյան ծառայություններին կազմակերպչամեթոդական օգնության ցուցաբերում:

«Ծխելու դեմ պայքարի պետական ծրագրի» գծով նախատեսվում է 100.0 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում կիրականացվի ծխախոտի օգտագործման համաճարակաբանական հսկողության համակարգի մշակում և ներդնում, ինչպես նաև հասարակության լայն խավերի համար ծխախոտի օգտագործման և առողջության վրա վերջինիս ազդեցության մասին տեղեկատվության պատրաստում, ներկայացում, ինչպես նաև հակածխախոտային ազգային ռազմավարության, ծխելու տարածվածության և դրանից բխող հետևանքների գնահատման մասին զեկույցի հրապարակում: ՀՀ պետական բյուջեից հատկացվում է ֆինանսական միջոցներ՝ հասարակական կազմակերպություններին որպես դրամաշնորհ տրամադրելու նպատակով՝ հակածխախոտային քարոզարշավների կազմակերպման համար:

«Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)»

«Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր»

Դասը ընդգրկում է հետևյալ ծրագրերը.

1. «Դատաբժշկական և գենետիկ ծառայություններ»,
2. «Պաթանատոմիական ծառայություններ»,
3. «Հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհածախսի փոխհատուցում»,
4. «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ»,

5. «Դեղաքաղաքականությունից բխող փորձագիտական և մեթոդաբանական ծառայություններ»,
6. «Հաշմանդամ երեխաների օրթեզների և կորսետների պատրաստման ծառայություններ»,
7. «Առողջապահության համակարգի զանգվածային տեղեկատվության ծառայություններ»,
8. «Մասնագիտական, խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության ծառայություններ»,
9. «Այլ բուժօգնության և սպասարկման ծառայություններ»,
10. «Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման աշխատանքներ»,
11. «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագիր»,
12. «Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում»:

Ինչպես նաև այս դասում են ընդգրկված առողջապահության ոլորտում միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերը:

«Դատաբժշկական և գենետիկ ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 354.0 մլն դրամ 2008 թվականի 320.0 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 10.6 տոկոս: «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունն իր 11 մարզային բաժիններով սպասարկում է ՀՀ դատախազությանը, ՀՀ արդարադատության և ՀՀ պաշտպանության նախարարություններին, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առնթեր ազգային անվտանգության ծառայությանը և ՀՀ ոստիկանությանը, իրականացնում է դիակների, կենդանի անձանց, իրեղեն ապացույցների, դատաքիմիական, դատաբժշկաքրեագիտական, դատագենետիկ, հյուսվածքաբանական և դատակենսաբանական փորձաքննություններ, ինչպես նաև դիակների արտաշիրիմումներ: Հաշվարկվել է 84 բժշկի հաստիքային միավորի հաշվով 202.1 հազ դրամ ամսական աշխատավարձ, 61 բուժքույրի հաստիքային միավորի գծով 43.7 հազ դրամ ամսական աշխատավարձ:

«Պաթանոտոմիական ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 40.3 մլն դրամ 2008 թվականի 38.3 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 5.3 տոկոս: Ծրագրի միջոցով կիրականացվի հիվանդությունների ճշտված ախտորոշումը՝ սեկցիոն, վիրահատական և բիոպսիոն նյութի հետազոտության միջոցով, մանկական դիակների դիահերձումը, մահվան պատճառների ճշտումը: Կիրականացվի վիրահատական և բիոպսիոն նյութերի հետազոտություն, մանրէաբանական և բջջաբանական հետազոտություններ:

«Հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհածախսի փոխհատուցում» ծրագրով նախատեսվում է 40.4 մլն դրամ, որը համապատասխանում է 2008 թվականի հաստատված բյուջեին: Նախատեսվում է 97 ուղեգրվող հիվանդի ճանապարհածախսի փոխհատուցման գումար (նախատեսվում է նաև ուղեկցողի ճանապարհածախսը): Հաշվարկվել է Մոսկվա ուղեգրվող 62 հիվանդ, Սիմֆերոպլ 8 հիվանդ, Սանկտ Պետերբուրգ 9 հիվանդ, Ուֆա 10 հիվանդ, Սոչի 8 հիվանդ:

«Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրով նախատեսվում է 503.6 մլն դրամ 2008 թվականի 409.5 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 23.0 տոկոս, որը պայմանավորված է 3690 դժվարամատչելի հետազոտությունների դեպքերի ավելացմամբ: 2009 թվականին կիրականացվի 27966 հետազոտություն 2008 թվականի 24276-ի դիմաց, 2007 թվականի փաստացի կատարողականը կազմել է 36759 դեպք: Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ցանկում ընդգրկված են մոտ 73 տեսակի բարդագույն հետազոտություններ, որոնց գների աճ չի նախատեսվում: Ծրագրով նախատեսված գումարը ուղղվելու է յուրահատուկ ու բացառիկ բուժսարքավորումներով և տեխնոլոգիաներով անվճար ախտորոշիչ հետազոտությունների իրականացմանը:

«Դեղաքաղաքականությունից բխող փորձագիտական և մեթոդաբանական ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 24.6 մլն դրամ 2008 թվականի 21.9 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 12.1 տոկոս: Ծրագրի շրջանակներում կիրականացվի դեղագործական քաղաքականությանը վերաբերող աշխատանքներ, հիմնական և հսկվող դեղերի ցուցակների հրապարակում և այլն:

«Հաշմանդամ երեխաների օրթեզների և կորսետների պատրաստման ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 94.0 մլն դրամ 2008 թվականի 81.8 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 14.9 տոկոս: Ծրագրի շրջանակներում կիրականացվի հաշմանդամ երեխաների օրթեզների և կորսետների պատրաստումը:

«Առողջապահության համակարգի զանգվածային տեղեկատվության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 97.0 մլն դրամ 2008 թվականի 90.0 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 7.8 տոկոս: Ծրագիրը ընդգրկում է՝ ամենամյա պետական նպատակային ծրագրերի շրջանակներում «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ կառավարության որոշման ու դրանից բխող ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված և ընդունված նորմատիվային ակտերի լուսաբանման աշխատանքները: Բնակչության առողջության պահպանման, բուժկանխարգելման, առողջապահության ոլորտի կառավարման հարցերի վերաբերյալ մեթոդական ձեռնարկների մշակումը, տպագրումը:

«Մասնագիտական, խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 52.7 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում կիրականացվի՝ շաքարային դիաբետով հիվանդների դիսպանսեր հսկողության, կոնսուլտացիոն և լաբորատոր ախտորոշիչ հետազոտությունների և հիվանդներին դեղերով ապահովման աշխատանքների իրականացումը, հանրապետության ուռուցքաբանական ծառայություններին կազմակերպչամեթոդական օգնության ցուցաբերումը, ակտիվ, ոչ ակտիվ և ախտորոշումը չճշտված տուբերկուլյոզով հիվանդների կոնսուլտացիոն բուժօգնության և ախտորոշիչ հետազոտությունների, ինչպես նաև դիսպանսեր հսկողության իրականացումը, նարկոլոգիական, հոգեկան, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով հիվանդների դիսպանսեր հսկողության իրականացումը, նախազորակոչային և զորակոչային

տարիքի անձանց նյարդահոգեբանական փորձաքննության իրականացումը, ինչպես նաև հաշվառման մեջ գտնվող հոգեկան հիվանդների դիսպանսեր հսկողության իրականացումը, պրոֆեսիոնալ հիվանդություններով տառապող հիվանդների կազմակերպչամեթոդական օգնության իրականացումը, սպինալ հիվանդների դիսպանսեր հսկողության իրականացումը:

«Այլ բուժօգնության և սպասարկման ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 15.0 մլն դրամ:

«Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման աշխատանքներ» ծրագրով նախատեսվում է 45.0 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում կիրականացվի մարդասիրական օգնության կարգով ստացվող, հսկվող դեղերի և դեղագործական արտադրանքի փաստաթղթային և լաբորատորային դեղագրքային փորձաքննություն ու եզրակացության իրականացումը:

«Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրով» նախատեսվում է 40.0 մլն դրամ: Ծրագրի նպատակն է բնակչությանը պահպանել տուբերկուլյոզի տարածման վտանգից, ապահովել հիվանդության վաղ հայտնաբերումը: Ծրագրում նախատեսված է «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության պահպանման ծախսերը:

2009 թվականին «Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրով նախատեսվում է 1212.0 մլն դրամ, իսկ «Առողջապահական օբյեկտների շինարարություն» ծրագրով՝ 218.0 մլն դրամ:

Բացի այդ, 2009 թվականին առողջապահության ոլորտում նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային ծրագրերը.

<u>1. Թռչնագրիպին հակազդելու ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)</u>

Ծրագրի նպատակն է աջակցել ընտանի թռչունների շրջանում բարձր ախտածին թռչնագրիպի վարակով և կենդանիների այլ հիվանդություններով մարդկանց համար առաջացված վտանգը նվազեցնելու և մարդկանց միջավայրում գրիպի վարակի ու վարակիչ այլ հիվանդությունների բռնկումների հսկողությանն ու արձագանքմանը պատրաստվելու ուղղությամբ:

Ծրագրի շրջանակներում 2009 թվականին նախատեսվում է ձեռք բերել արագ ախտորոշման թեստեր, բժշկական մահճակալներ, սեզոնային գրիպի դեմ պատվաստանյութեր և հակավիրուսային դեղորայք: Նախատեսվում է նաև ՀՀ առողջապահության նախարարության Պետական հիգիենիկ և համաճարակային տեսչության «Սյունիքի մարզային փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոցին տրամադրել ինտերնետային կապ:

<u>2. Առողջապահական համակարգի արդիականացման ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)</u>

Ծրագրի հիմնական նպատակն է բարձրացնել առողջապահության որակն ու մատչելիությունը, բարելավել ընտրված հիվանդանոցային ցանցի որակն ու արդյունավետությունը, մշակել առողջապահության քաղաքականություն:

Ծրագրի շրջանակներում 2009 թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- 120 ընտանեկան բժիշկների վերապատրաստում 12 ամսյա ծրագրով,
- ընտանեկան բժշկի գործնական ուղեցույցների տպագրում,
- ՀՀ Տավուշի մարզի «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի վերանորոգում,
- ՀՀ Կոտայքի մարզի «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի վերանորոգում,
- Մարզային հիվանդանոցների հագեցում բժշկական սարքավորումներով,
- Առողջահության ազգային հաշիվների զեկույցի տպագրություն,
- Առողջապահության ոլորտի գործունեության արդյունավետության գնահատման զեկույցի տպագրություն,
- Առողջապահական թափոնների կառավարման նորմերի տպագրություն,
- 120 ընտանեկան բժիշկների վերապատրաստում 12 ամսյա ծրագրով,
- 240 ընտանեկան բուժքույրերի վերապատրաստում 6 ամսյա ծրագրով,
- 5 համայնքային ամբուլատորիաների վերանորոգում,
- 5 համայնքներում նոր ամբուլատորիաների կառուցում,
- վերանորոգվող ու կառուցվող ամբուլատորիաների նախագծում,
- Կազմակերպչական և իրավական աջակցություն ընտանեկան բժիշկների նորաստեղծ անկախ խմբային պրակտիկաներին:
- ՀՀ Տավուշի մարզի «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ վերանորոգում,
- ՀՀ Կոտայքի մարզի «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ վերանորոգում,
- Մարզային հիվանդանոցների հագեցում բժշկական սարքավորումներով:

2. Առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագրի հիմնական նպատակն է բարձրացնել առողջապահության որակն ու մատչելիությունը, բարելավել ընտրված հիվանդանոցային ցանցի որակն ու արդյունավետությունը, մշակել առողջապահության քաղաքականություն:

Ծրագրի շրջանակներում 2009 թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- 120 ընտանեկան բժիշկների վերապատրաստում 12 ամսյա ծրագրով,
- 240 ընտանեկան բուժքույրերի վերապատրաստում 6 ամսյա ծրագրով,
- 5 համայնքային ամբուլատորիաների վերանորոգում,
- 5 համայնքներում նոր ամբուլատորիաների կառուցում,
- վերանորոգվող ու կառուցվող ամբուլատորիաների նախագծում,

- Կազմակերպչական և իրավական աջակցություն ընտանեկան բժիշկների նորաստեղծ անկախ խմբային պրակտիկաներին:
- Մարզային հինգ հիվանդանոցային հաստատությունների հիմնանորոգման աշխատանքներ,
- Ծրագրում ընդգրկված հիվանդանոցներում որակի ապահովման համակարգի նեդրմանն ուղղված տեխնիկական աջակցություն,
- Ծրագրում ընդգրկված հիվանդանոցներում կառավարման կառուցվածքի վերանայմանն ուղղված տեխնիկական աջակցություն,
- Ծրագրում ընդգրկված հիվանդանոցներում առողջապահական ծառայությունների արդյունքում գոյացած թափոնների կառավարման համակարգի ներդրմանն ուղղված տեխնիկական աջակցություն,
- Միջազգային խորհրդատուի գծով ծառայությունների ձեռքբերում՝ ծրագրում ընդգրկված մարզային հիվանդանոցների ենթակառուցվածքների շինարարական աշխատանքների գնահատման նպատակով:
- Առողջապահության ոլորտի գործունեության արդյունավետության գնահատման զեկույցի մշակում,
- Առողջահության ազգային հաշիվների զեկույցի մշակում,
- Մարդկային ռեսուրսների կառավարման ռազմավարության մշակում,
- Առողջապահության օրենսդրական դաշտի բարելավում,
- Պետական առողջապահական գործակալության կառավարման կարողությունների և կառուցվածքային բարելավման նպատակով խորհրդատվութան իրականացում,
- Աջակցություն ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ու վերահսկմանն ուղղված միջոցառումներին,
- Նախադիպլոմային և հետդիպլոմային բժշկական կրթական ծրագրերի և ստանդարտների վերանայում,
- Բոլոնյան համաձայնագրի համաձայն՝ գիտելիքների գնահատման համակարգի վերանայում,
- Բժշկական մասնագիտական նկարագրերի մշակում,
- Շարունակական բժշկական կրթության համակարգի վերանայում,
- Բժշկական կրթությանը վերաբերող օրենսդրական փաստաթղթերի վերանայում,
- Ուսումնական այցելությունների կազմակերպում:

3. Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ կառավարության քաղաքականությանը՝ բարձրացնելու աղքատների և խոցելի խմբերի կենսամակարդակը՝ բարելավելով որակն ու մատչելիությունը և

մեծացնել համայնքային ենթակառուցվածքների և ծառայությունների տարածվածությունը աղքատության առավել բարձր աստիճան ունեցող համայնքներում և ամենախոցելի խմբերի համար:

Ծրագրի շրջանակներում 2009 թվականին նախատեսվում է շարունակել շինարարական աշխատանքները մոտավորապես 60 միկրոծրագրերում Գեղարքունիքի, Սյունիքի, Լոռվա և Շիրակի մարզերում, ինչպես նաև Երևան քաղաքում:

Միաժամանակ 2009 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ պետական առողջապահության ոլորտում նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային դրամաշնորհային ծրագրերը.

1. Թռչնագրիպին հակազդելու ճապոնական դրամաշնորհային ծրագիր,
2. Թռչնագրիպին հակազդելու ծրագրի համաֆինանսավորման ճապոնական դրամաշնորհային ծրագիր,
3. Առողջապահական համակարգի արդիականացման ծրագրում ճապոնական դրամաշոնրհային ծրագիր:

Առողջապահության բնագավառի ծախսերի համեմատությունը՝ 2007 թվականի փաստացի, 2008 թվականի բյուջետային տարվա համար հաստատված և 2009 թվականի նախատեսվող համապատասխան ցուցանիշների հետ, արտացոլված է սույն բացատրագրի N 10 աղյուսակում:

2009 թվականի Առողջապահության պետական նպատակային ծրագիրը արտացոլված է սույն բացատրագրի N 2 հավելվածում:

<u>Հանգիստ, մշակույթի և կրոնի բնագավառում</u> (առանց պետական կառավարման մարմինների կենտրոնական ապարատի) ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված հատկացումները կազմում են 18533.4 մլն դրամ՝ ՀՀ 2008 թվականի ճշտված պետական բյուջեով նախատեսված (այսուհետ՝ ՀՀ 2008 թվականի) 15372.8 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 3180.6 մլն դրամ (20.7 տոկոս):

Ծախսերի աճը պայմանավորված է՝

- մշակույթի ոլորտի աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը՝ շուրջ 20 տոկոսով բարձրացման հետ կապված ծախսերի աճով՝ 782.3 մլն դրամով (2008 թվականի հուլիսի 1-ից բարձրացվել են միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը՝ շուրջ 20 տոկոսով, իսկ 2009 թվականի հունվարի 1-ից՝ ևս 10 տոկոսով),
- ջեռուցման ծախսերի աճով՝ 25.1 մլն դրամով,
- գործուղման ծախսերի աճով՝ 142.3 մլն դրամով,
- գոյություն ունեցող ծրագրերի գծով ծախսերի աճով՝ 685.8 մլն դրամով,
- նոր նախաձեռնությունների նախատեսմամբ՝ 312.6 մլն դրամ,
- ծրագրերի ավարտմամբ՝ 134.2 մլն դրամ
- մշակութային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների իրականացման ծախսերի աճով՝ 412.0 մլն դրամով,

- Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի նվազմամբ՝ 8.2 մլն դրամով,
- հանգստի և սպորտի գծով ծախսերի աճով՝ 395.1 մլն դրամով,
- ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծախսերի աճով՝ 496.7 մլն դրամով,
- երիտասարդական ծրագրերի գծով ծախսերի աճով՝ 71.1 մլն դրամով:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված հատկացումները ներկայացված են ներքոհիշյալ խմբերում ընդգրկված ծառայությունների, մշակութային, երիտասարդական, սպորտային ծրագրերի, գրականության հրատարակման և ներդրումների ծախսերի տեսքով:

Հանգստի և սպորտի գծով նախատեսված հատկացումները նպատակ ունեն ապահովել ազգաբնակչության առողջության ամրապնդումը, անհատի ներդաշնակ զարգացումը, տարբեր տարիքային և սոցիալական խմբերի համար ֆիզիկական դաստիարակության անընդհատության, հայրենիքի պաշտանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստականության ապահովումը, բարձրակարգ մարզիկների պատրաստումը, պետական ծրագրերի միջոցով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ազգային համակարգի կատարելագործումը:

Հանգստի և սպորտի համար 2009 թվականին նախատեսվում են 1559.5 մլն դրամ հատկացումներ՝ (ՀՀ 2008 թվականի՝ 1164.3 մլն դրամի դիմաց), որոնք ուղղվելու են միջազգային տարբեր մակարդակի միջոցառումներին, ուսումնամարզական հավաքներին, հանրապետական առաջնություններին Հայաստանի հավաքական թիմերի մասնակցության ապահովման նպատակով ՀՀ մարզական ֆեդերացիաներին աջակցմանը, մարզական խաղերի և փառատոնների, համահայկական խաղերի անցկացմանը, Աշխարհի, Եվրոպայի առաջնություններում հաղթողների և մրցանակակիրների պարգևատրման ծախսերի իրականացմանը, հաշմանդամային սպորտին, շախմատիստների պատրաստմանը և նավամոդելային սպորտին աջակցմանը:

Հանգստի և սպորտի գծով ծախսերի աճը՝ 395.1 մլն դրամով, կամ 33.9 տոկոսով պայմանավորված է.

- ՀՀ մարզական ֆեդերացիաներին, հաշմանդամային սպորտին աջակցման գումարի ավելացմամբ, համապատասխանաբար՝ 100.0 և 11.0 մլն դրամով,

- մարզական խաղերի և փառատոնների անցկացմանն ուղղված հատկացումների ավելացմամբ՝ 6.1 մլն դրամով,

- նոր նախաձեռնությունների նախատեսմամբ՝ 291.2 մլն դրամ (Հակադոպինգային համաշխարհային գործակալությանը անդամակցում՝ 2.0 մլն դրամ, ԱՊՀ և մերձբալթյան երկրների միջև պատանեկան խաղերին մասնակցության ապահովում՝ 10.0 մլն դրամ, ձյուդոյի Եվրոպայի երիտասարդների առաջնության կազմակերպում և անցկացում՝ 30.0 մլն դրամ, Համահայկական խաղերի անցկացում՝ 15.0 մլն դրամ, աջակցություն մարզակառույցներին, մարզադպրոցներին և մարզական հասարակական կազմակերպություններին՝ 50.0 մլն դրամ,

օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ Նախագահի անվանական թոշակի հատկացում՝ 150.0 մլն դրամ, բռնցքամարտի աշխարհի պատանեկան առաջնության կազմակերպում և անցկացում՝ 34.2 մլն դրամ),

- գործուղման ծախսերի ավելացմամբ՝ 0.2 մլն դրամով:

Միաժամանակ ծախսերը նվազել են՝ 13.4 մլն դրամով, պայմանավորված սպորտային միջոցառումների իրականացման ժամանակացույցով (Պեկինի 29-րդ օլիմպիական խաղերին մասնակցության ապահովում՝ 71.0 մլն դրամ, «Ռուսանողական մարզական խաղերի անցկացում» և «Եվրոպայի երիտասարդության օլիմպիական փառատոներին մասնակցության ապահովում» ծրագրերի նախատեսում, համապատասխանաբար՝ 18.6 և 39.0 մլն դրամ),

Մշակութային ծառայություններ խմբում ընդգրկված են.

գրադարանները, թանգարանները և ցուցահանդեսները, մշակույթի տները, ակումբները, կենտրոնները, այլ մշակութային կազմակերպությունները, թատերահամերգային կազմակերպությունները, մշակութային միջոցառումները, կինեմատոգրաֆիան, հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնումը և պահպանումը:

Գրադարանների գծով 2009 թվականի համար նախատեսված միջոցները՝ 1894.2 մլն դրամ (ՀՀ 2008 թվականի՝ 1536.4 մլն դրամի դիմաց) ուղղվելու են գրադարանային ծառայությունների (16 գրադարաններ, որից 10-ը մարզկենտրոններում), հրատարակությունների գրանցման, հաշվառման և մատենագիտական ծառայությունների (Հայաստանի ազգային գրապալատ), ներդրումների և գրադարանների հիմնանորոգման և շինարարության աշխատանքների իրականացմանը, համապատասխանաբար՝ 1015.3, 70.5, 154.8 և 653.6 մլն դրամ:

Գրադարանային ծառայությունների իրականացմանը ուղղված հատկացումները նպատակ ունեն ապահովել.

- գրադարանային հավաքածուների պահպանումը և սպասարկումը՝ 910.6 մլն դրամ,
- գրադարանային հավաքածուների համալրումը՝ 63.3 մլն դրամ,
- գրադարանային միջոցառումների և ցուցահանդեսների կազմակերպումը՝ 41.4 մլն դրամ,

Գրադարանների գծով ծախսերի աճը՝ 357.8 մլն դրամով, կամ 23.3 տոկոսով պայմանավորված է.

- աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը 20 տոկոսով բարձրացման հետ կապված ծախսերի աճով՝ 152.4 մլն դրամով,
- ջեռուցման ծախսերի աճով՝ 0.2 մլն դրամով,
- գործուղման ծախսերի աճով՝ 1.2 մլն դրամով,
- գոյություն ունեցող ծրագրերի գծով ծախսերի աճով՝ 109.3 մլն դրամով (ազգային մատենագիտության, ամսագրային և լրագրային հայագիտական հոդվածների մատենագիտական էլեկտրոնային շտեմարանի հրատարակման ծախսերի աճ՝ 25.9 մլն դրամով, որից 8.0 մլն դրամը ներդրումների գծով, ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարանի

տեղեկատու-մատենագիտական ծառայության ավտոմատացման ծախսերի աճ՝ 1.0 մլն դրամով, հնատիպ գրքերի պահպանվածության ապահովման ծախսերի աճ՝ 1.0 մլն դրամով, ՀՀ մշակութային ժառանգության մաս կազմող գրքային հավաքածուների պահպանման ծախսերի աճ՝ 0.5 մլն դրամով, ընթերցասրահների կահավորման ծախսերի աճ՝ 93.8 մլն դրամով, ներդրումների ծախսերի նվազում՝ 12.0 մլն դրամով),

- նոր նախաձեռնությունների նախատեսմամբ՝ 3.5 մլն դրամ («Արև» տեղեկատվական հաղորդակցման ծրագիր՝ 1.2 մլն դրամ, «Ընտանեկան գրադարանավար»՝ 0.7 մլն դրամ, շարժական գրադարանի շահագործում՝ 1.6 մլն դրամ),
- գրադարանների հիմնանորոգման և շինարարության ծախսերի աճով՝ 91.2 մլն դրամով:

Գրադարանների 1226 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2009 թվականին կկազմի 49520 դրամ՝ 2008 թվականի 41250 դրամի դիմաց:

<u>Թանգարանների</u> գծով 2009 թվականի համար նախատեսված միջոցները՝ 1856.6 մլն դրամ (ՀՀ 2008 թվականի՝ 1436.0 մլն դրամի դիմաց) ուղղվելու են թանգարանային ծառայությունների (39 թանգարաններ, որից 12-ը մարզկենտրոններում), ներդրումների և թանգարանների հիմնանորոգման և շինարարության աշխատանքների իրականացմանը, համապատասխանաբար՝ 1564.5 մլն, 115.9 և 176.1 մլն դրամ:

Թանգարանային ծառայությունների իրականացմանը ուղղված հատկացումները նպատակ ունեն ապահովել .

- թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների պահպանությունը՝ 1394.3 մլն դրամ,
- թանգարանային հավաքածուների հրապարակումը (ցուցադրությունների, ցուցահանդեսների, թանգարանային միջոցառումների կազմակերպում)՝ 134.2 մլն դրամ,
- թանգարանային հավաքածուների համալրումը, մշակութային արժեքների, գեղարվեստական ստեղծագործությունների ձեռքբերումը՝ 36.0 մլն դրամ:

Ծախսերի աճը 420.5 մլն դրամով, կամ 29.3 տոկոսով պայմանավորված է.

- աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը շուրջ 20 տոկոսով բարձրացման հետ կապված ծախսերի աճով՝ 168.8 մլն դրամով,
- ջեռուցման ծախսերի աճով՝ 10.7 մլն դրամով,
- գործուղման ծախսերի աճով՝ 56.7 մլն դրամով,
- գոյություն ունեցող ծրագրերի գծով ծախսերի աճով՝ 26.3 մլն դրամով (թանգարանների գիշերային պահակների հավելումների նախատեսում՝ 22.1 մլն դրամ, թանգարանային առարկաների կոնսերվացման և վերականգնման ծախսեր՝ 1.5 հազ.դրամ, «Թամանյանի թանգարան-ինստիտուտի մշտական ցուցադրության կազմակերպում» ծրագրի ծախսեր՝ 2.7 մլն դրամ),
- ծրագրերի ավարտմամբ՝ 34.3 մլն դրամ («Երևան քաղաքի պատմության թանգարանի և Պ.Սևակի տուն-թանգարանի ցուցադրությունների կազմակերպում»՝ 12.6 մլն դրամ, «Թանգարանային առարկաների մասնագիտացված վերականգնման լաբորատորիաների

ստեղծում»՝ 6.0 մլն դրամ, «Գառնի» և «Զվարթնոց» արգելոց-թանգարանների գիշերային գեղարվեստական լուսավորություն և ռադիոֆիկացում»՝ 15.0 մլն դրամ, «Ա. Թամանյանի թանգարան-ինստիտուտի համար սարքերի ձեռքբերում» ՝ 0.7 մլն դրամ)

- նոր նախաձեռնությունների նախատեսմամբ՝ 115.1 մլն դրամ (կրկնատիպերի պատրաստում՝ 6.9 մլն դրամ, կադրերի վերապատրաստում՝ 5.5 մլն դրամ, սենսորային տեղեկատվական կրպակների տեղադրում՝ 11.3 մլն դրամ, «Հայաստանի թանգարանները» քարտեզի հրատակում՝ 3.8 մլն դրամ, Սիլվա Կապուտիկյանի տուն-թանգարանի գործունեության ապահովում՝ 4.1 մլն դրամ, ցուցադրական պատերի ձեռքբերում՝ 2.0 մլն դրամ, Ազգային պատկերասրահի 5 վերելակների ձեռքբերում՝ 81.6 մլն դրամ),

- մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության ծախսերի աճով՝ 77.2 մլն դրամով:

Թանգարանների 1474 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կկազմի 50815 դրամ՝ 2008 թվականի 42317 դրամի դիմաց:

<u>Մշակույթի տների, ակումբների, կենտրոնների</u> գծով 2009 թվականի համար նախատեսված միջոցները՝ 1057.8 մլն դրամ (ՀՀ 2008 թվականի՝ 964.1 մլն դրամի դիմաց) ուղղվելու են մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպմանը (4 կազմակերպություն), ներդրումների իրականացմանը և մշակույթի տների և ակումբների հիմնանորոգման և շինարարության աշխատանքների իրականացմանը, համապատասխանաբար՝ 36.5, 20.0 և 1001.3 մլն դրամ:

Մշակույթի տների, ակումբների, կենտրոնների գծով ծախսերի աճը՝ 93.7 մլն դրամով, կամ 9.7 տոկոսով պայմանավորված է.

- աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը 20 տոկոսով բարձրացման հետ կապված ծախսերի աճով՝ 3.6 մլն դրամով,

- գործուղման ծախսերի աճով՝ 0.2 մլն դրամով,

- գոյություն ունեցող ծրագրերի գծով ծախսերի աճով՝ 8.0 մլն դրամով («Տիկնիկային թատերարվեստի և գուսանական համույթի ստեղծում» ծրագրի ծախսեր՝ 1.0 մլն դրամ, «ՀՀ մարզերում ազգագրության կենտրոնների ստեղծում» ծրագրի ծախսեր՝ 7.0 մլն դրամ),

- ծրագրերի ավարտմամբ՝ 35.2 մլն դրամ («Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին իրականացվող ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում մարզային զարգացման ծրագիր»՝ 34.7 մլն դրամ, «Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոն» ՊՈԱԿ-ի նորմալ գործունեության ապահովման համար տեսախցիկի ձեռքբերում»՝ 0.5 մլն դրամ),

- նոր նախաձեռնության նախատեսմամբ՝ 20.0 մլն դրամ (ներդրումներ «Անդրանիկ Մարգարյանի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ում),

- մշակույթի տների, ակումբների հիմնանորոգման և շինարարության ծախսերի աճով՝ 97.1 մլն դրամով:

2009 թվականին մշակույթի տների, ակումբների, կենտրոնների աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կկազմի 49262 դրամ՝ ՀՀ 2008 թվականի 41052 դրամի դիմաց: Հատկացվող ֆինանսական միջոցներով 2009 թվականին կվարձատրվեն այս ոլորտի 31 աշխատողներ:

Այլ մշակութային կազմակերպությունների գծով 2009 թվականի համար նախատեսված միջոցները՝ 903.5 մլն դրամ (ՀՀ 2008 թվականի՝ 818.0 մլն դրամի դիմաց) ուղղվելու են արխիվային, տեղեկատվական-վերլուծական և հանրային իրազեկման, մշակութային արժեքների փորձաքննության ծառայությունների իրականացմանը, ժողովրդական ստեղծագործության ավանդույթների և ժողարվեստի պահպանմանը, կենդանաբանական այգու ցուցադրությունների կազմակերպմանը՝ 612.2 մլն դրամ, ներդրումների իրականացմանը՝ 89.5 մին դրամ, մշակութային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների և Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի իրականացմանը, համապատասխանաբար՝ 21.8 և 180.0 մլն դրամ:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով այլ մշակութային կազմակերպությունների գծով ծախսերի աճը՝ 85.5 մլն դրամով, կամ 10.5 տոկոսով պայմանավորված է.

- աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը 20 տոկոսով բարձրացման հետ կապված ծախսերի աճով՝ 59.7 մլն դրամով,
- ջեռուցման ծախսերի աճով՝ 0.4 մլն դրամով,
- գործուղումների ծախսերի աճով՝ 0.4 մլն դրամով,
- գոյություն ունեցող ծրագրերի գծով ծախսերի աճով՝ 17.7 մլն դրամով (մշակույթին նվիրված հեռուստահաղորդաշարերի պատրաստման ծրագրի ծախսեր՝ 16.5 մլն դրամ, «Ժողովրդական ստեղծագործության, ավանդական արհեստների տարածում» ծրագրի ծախսեր՝ 1.1 մլն դրամ, Հայոց ավանդական ժառանգության հավաքման, զարգացման և տարածման ծրագրի ծախսեր՝ 0.1 մլն դրամ),
- նոր նախաձեռնությունների նախատեսմամբ՝ 17.9 մլն դրամ («Տեղեկատվական-վերլուծական «Զարկերակ» թերթի հրատարակում»՝ 8.1 մլն դրամ, գորգագործության և ասեղնագործության կենտրոնի հիմնադրում Ճամբարակում՝ 7.0 մլն դրամ, «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի Ֆիզիկոքիմիական լաբորատորիայի ստեղծում՝ 2.8 մլն դրամ),
- մշակութային օբյեկտների հիմնանորոգման ծախսերի նվազմամբ՝ 10.6 մլն դրամով:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով այլ մշակութային կազմակերպությունների աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կկազմի 52205 դրամ՝ ՀՀ 2008 թվականի 43504 դրամի դիմաց: Հատկացվող ֆինանսական միջոցներով 2008 թվականին կվարձատրվեն 498 աշխատողներ:

Արվեստի գծով 2009 թվականի համար նախատեսված միջոցները՝ 4706.3 մլն դրամ (ՀՀ 2008 թվականի՝ 3536.0 մլն դրամի դիմաց) կուղղվեն թատերական ներկայացումների, երաժշտարվեստի և պարարվեստի համերգների իրականացմանը (38 կազմակերպություն), մշա-

կութային միջոցառումների իրականացմանը, ժողովրդական պատվավոր կոչումների արժանացած անձանց պատվովճարի վճարմանը, ներդրումների և մշակութային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների իրականացմանը, համապատասխանաբար՝ 2789.3 մլն, 940.4 մլն, 57.4 մլն, 683.7 մլն և 235.2 մլն դրամ:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով արվեստի գծով նախատեսված ծախսերի աճը ՀՀ 2008 թվականի նկատմամբ՝ 1170.0 մլն դրամով, կամ 33.1 տոկոսով պայմանավորված է՝

- թատրոնների և համերգային կազմակերպությունների աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը շուրջ 20 տոկոսով բարձրացման հետ կապված ծախսերի աճով՝ 370.6 մլն դրամով,
- ջեռուցման ծախսերի աճով՝ 13.8 մլն դրամով,
- գործուղման ծախսերի աճով՝ 81.6 մլն դրամով,
- գոյություն ունեցող ծրագրերի գծով ծախսերի աճով՝ 554.4 մլն դրամով (Արտաշատի Խարազյանի անվան թատրոնի ջեռուցման համակարգի ներդրում՝ 5.5 մլն դրամ, մշակութային միջոցառումների ծախսեր՝ 181.9 մլն դրամ, «Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճարների ծախսեր՝ 3.4 մլն դրամ, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի վերին մեխանիզացիայի տնտեսության նորոգման ծախսեր՝ 320.0 մլն դրամ, «Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի կազմում «Հովեր» կամերային երգչախմբի 27 հաստիքների ընդգրկում՝ 18.4 մլն դրամ, Խամաճիկների թատրոնի պահպանման ծախսեր՝ 1.9 մլն դրամ, Հ.Պարոնյանի թատրոնի ջեռուցման համակարգի շահագործում՝ 23.3 մլն դրամ),
- ծրագրերի ավարտմամբ՝ 34.7 մլն դրամ (թատրոնների և համերգային կազմակերպությունների համար գույքի, սարքերի և սարքավորումների ձեռքբերում),
- նոր նախաձեռնությունների նախատեսմամբ՝ 49.2 մլն դրամ («Փոքր դահլիճ» մշակութային կենտրոնի ստեղծում՝ 11.9 մլն դրամ, Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տան համար վարագույրների ձեռքբերում՝ 6.4 մլն դրամ, Խամաճիկների և Հ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնի տիկնիկների պատրաստում և նորոգում՝ 8.7 մլն դրամ, աջակցություն Վենետիկի Հայ-համաեվրոպական մշակույթի երկխոսության միջազգային կենտրոնին՝ 22.1 մլն դրամ):
- մշակութային օբյեկտների հիմնանորգման ծախսերի աճով՝ 135.1 մլն դրամով:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող թատրոնների և համերգային կազմակերպությունների կազմակերպությունների աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը կկազմի 46371 դրամ՝ ՀՀ 2008 թվականի՝ 38116 դրամի դիմաց: Հատկացվող ֆինանսական միջոցներով 2008 թվականին կվարձատրվեն թատրոնների և համերգային կազմակերպությունների 2648 աշխատողներ:

<u>Կինեմատոգրաֆիային</u> ուղղված հատկացումները նպատակ ունեն ապահովել միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ հայրենական կինոարտադրության, մանուկների և պատա-

նիների համար հայկական կինոնկարների արտադրության և հասարակական-քաղաքական իրադարձությունների, կինոտարեգրության վավերագրման խթանումը:

Կինեմատոգրաֆիայի գծով 2009 թվականի համար նախատեսված հատկացումները՝ 685.2 մլն դրամ (ՀՀ 2008 թվականի՝ 626.6 մլն դրամի դիմաց), կուղղվեն կինոարտադրության կազմակերպմանը՝ 455.5 մլն դրամ, կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանմանն ու համալրմանը՝ 13.7 մլն. դրամ (հայկական ֆիլմերի նոր պատճենների ձեռքբերում) և ազգային կինոծրագրերի իրականացմանը՝ 216.0 մլն դրամ :

Կինեմատոգրաֆիայի գծով 2009 թվականի ծախսերի նվազումը ՀՀ 2008 թվականի մակարդակի նկատմամբ՝ 58.6 մլն դրամով, կամ 9.4 տոկոսով պայմանավորված է .

- «Հայաստանի ազգային կինոկենտրոն»-ի և «Հայկ» կինոստուդիայի աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը 20 տոկոսով բարձրացման հետ կապված ծախսերի աճով՝ 19.9 մլն դրամով,
- գոյություն ունեցող ծրագրերի գծով ծախսերի աճով՝ 10.5 մլն դրամով (դեբյուտային վավերագրական կինոնկարների արտադրությանը ուղղված ծախսեր, կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանման գծով գործուղման ծախսեր՝ 0.5 մլն դրամ),
- ծրագրերի ավարտմամբ՝ 30.0 մլն դրամ («Վավերագրական կինոնկարների արտադրություն կինոժապավենի վրա»),
- «Մասնակցություն կինոշուկաներին և կինոփառատոներին» ծրագրի տեղափոխմամբ «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագիր՝ 40.4 մլն դրամ,
- նոր նախաձեռնության նախատեսմամբ՝ 98.6 մլն դրամ («Կինոթատրոն անիվների վրա»):

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կկազմի 81476 դրամ՝ ՀՀ 2008 թվականի՝ 67897 դրամի դիմաց: Հատկացվող ֆինանսական միջոցներով 2009 թվականին կվարձատրվեն 108 աշխատողներ:

<u>Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման</u> գծով 2009 թվականի համար նախատեսված հատկացումները՝ 602.5 մլն դրամ (ՀՀ 2008 թվականի՝ 570.9 մլն դրամի դիմաց) կուղղվեն ՀՀ տարածքում պատմության և մշակույթի հուշարձանների պետական հաշվառմանը, պահպանական գոտիների նախագծերի, հուշարձանների պետական կադաստրի կազմմանը՝ 76.5 մլն դրամ, 25 հուշարձանների համար վերականգնման աշխատանքների իրականացմանը՝ 522.0 մլն դրամ, Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանմանը՝ 4.0 մլն դրամ:

Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման գծով ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի աճը ՀՀ 2008 թվականի նկատմամբ՝ 31.6 մլն դրամով, կամ 5.5 տոկոսով պայմանավորված է.

- Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 20 տոկոսով բարձրացման հետ կապված ծախսերի աճով՝ 7.3 մլն դրամով,

- գործուղումների ծախսերի աճով՝ 2.2 մլն դրամով,
- հուշարձանների վերանորոգման և վերականգնման գծով ծախսերի աճով՝ 22.0 մլն դրամով,
- նոր նախաձեռնության նախատեսմամբ՝ 8.3 մլն դրամ (առավել արժեքավոր և խիստ վտանգված ու վերականգման կարիք ունեցող հուշարձանների տեխնիկական վիճակի մոնիտորինգի կազմակերպում),
- Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի նվազմամբ՝ 8.2 մլն դրամով:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կկազմի 55718 դրամ՝ ՀՀ 2008 թվականի 46431 դրամի դիմաց:

<u>Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայություններ խմբին ուղղված հատկացումները</u> նպատակ ունեն ապահովել քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության, մարզական, զվարճալի և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվություն ստանալու ՀՀ քաղաքացիների իրավունքը, գրահրատարակչական արտադրանքի տեսքով ազգային և համաշխարհային գրական, գիտական, մշակութային արժեքների մատչելիությունը:

«Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների խմբի հատկացումները կուղղվեն հեռուստառադիոհաղորդումների պատրաստման ու հեռարձակման, հրատարակչությունների և խմբագրությունների և տեղեկատվության ձեռքբերման աշխատանքների իրականացմանը:

<u>Հեռուստառադիոհաղորդումների գծով</u> 2009 թվականին նախատեսվում են 3787.2 մլն դրամ հատկացումներ՝ (ՀՀ 2008 թվականի՝ 3206.3 մլն դրամի դիմաց), որոնք ուղղվելու են հանրային հեռուստառադիոհաղորդումների պատրաստմանն ու հեռարձակմանը, հասարակական կարծիքի ուսումնասիրմանը, ԱՊՀ երկրներում հեռուստառահիոծրագրերի հեռարձակմանը, տնտեսական վերլուծությունների, քարոզչական աշխատանքների իրականացմանը և գնումների գործընթացի հրապարակայնության ապահովմանը :

Ծախսերի աճը՝ 580.8 մլն դրամով, կամ 18.1 տոկոսով պայմանավորված է.
- ջեռուցման ծախսերի աճով՝ 2.2 մլն դրամով,
- գործուղման ծախսերի աճով՝ 4.8 մլն դրամով,
- գոյություն ունեցող ծրագրերի գծով ծախսերի աճով՝ 564.0 մլն դրամով (ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակման գծով ծախսեր՝ 7.4 մլն դրամ, ռադիոհաղորդումների հեռարձակման ծախսեր՝ 20.2 մլն դրամ, կապված հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագիր»-ը հանրապետական ցանցով 18 ժամի փոխարեն 24 ժամ հեռարձակման հետ, 24 ժամյա մշակութային հեռուստաալիքի ստեղծման ծախսեր՝ 457.0 մլն դրամ, «Էստրադային սիմֆոնիկ նվագախումբ», «Արամ Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների անսամբլ», «Արևիկ» մանկապատանեկան անսամբլ» ստեղծագործական խմբերը՝ 65 հաստիքներով «Հայաստանի հանրային ռադիոընկերություն»

ՓԲԸ -ի հաստիքացուցակում ընդգրկման հետ կապված ծախսեր՝ 32.2 մլն դրամ, գնումների գործընթացի ապահովման ծախսեր՝ 47.2 մլն դրամ՝ ի հաշիվ «Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններ» ծրագրով նախատեսված հատկացումների),

- նոր նախաձեռնության նախատեսմամբ՝ 28.3 մլն դրամ (քարոզչական աշխատանքներ),

- հեռուստահաղորդումների հեռարձակում արտասահմանի համար ծախսերի նվազմամբ՝ 18.4 մլն դրամով, կապված տարադրամի փոխարժեքի փոփոխության հետ:

2009 թվականին հանրային հեռուստաընկերության և ռադիոընկերության հաղորդումների պատրաստման և հեռարձակման ժամերի միջին օրական ծավալը նախատեսվում է՝ 18 և 50 ժամ, իսկ Շիրակի հեռուստատեսային և ռադիոյի հաղորդումներինը, համապատասխանաբար՝ 8 և 24 ժամ:

<u>Հրատարակչությունների, խմբագրությունների գծով</u> 2009 թվականին նախատեսվում են 817.6 մլն դրամ հատկացումներ՝ (ՀՀ 2008 թվականի՝ 914.7 մլն դրամի դիմաց), որոնք ուղղվելու են գրականության, թերթերի, ամսագրերի, մենագրությունների, պետական և ոչ պետական մամուլի հրատարակմանը և թարգմանչական աշխատանքների իրականացմանը:

Ծախսերի նվազումը 97.1 մլն դրամով, կամ 10.6 տոկոսով պայմանավորված է.

- ծրագրերի ավարտմամբ՝ 159.2 մլն դրամ (հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծախսեր՝ 88.2 մլն դրամ, իրավաբանական տերմինաբանության զարգացման ծախսեր՝ 13.0 մլն դրամ, պաշտոնական հայտարարությունների կայքէջի ստեղծում՝ 35.0 մլն դրամ, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի զարգացման ծախսեր՝ 23.0 մլն դրամ),

- աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը՝ շուրջ 20 տոկոսով բարձրացման հետ կապված ծախսերի աճով՝ 18.4 մլն դրամով,

- գործուղման ծախսերի աճով՝ 0.3 մլն դրամով,

- գոյություն ունեցող ծրագրերի գծով ծախսերի աճով՝ 43.4 մլն դրամով (գիտական գրականության հրատարակման ծախսերի աճ՝ 30.0 մլն դրամով, գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակման ծախսերի աճ՝ 8.8 մլն դրամով, միջազգային պայմանագրերի հրատարակման ծախսերի աճ՝ 5.0 մլն դրամով, մասնավորեցվող պետական գույքի վերաբերյալ տեղեկությունների հրապարակման ծախսերի նվազում՝ 0.4 մլն դրամով):

<u>Տեղեկատվության ձեռքբերման գծով</u> 2009 թվականին նախատեսվում են 69.0 մլն դրամ հատկացումներ՝ (ՀՀ 2008 թվականի՝ 55.8 մլն դրամի դիմաց), որոնք կուղղվեն տեղեկատվության պահպանմանը, արխիվացմանը և պետական կառավարման մարմիններին, զանգվածային լրատվական միջոցներին և օտարերկրյա դեսպանատներին պաշտոնական ինֆորմացիայի հաղորդման նպատակով տեղեկատվության ձեռքբերմանը:

Ծախսերի աճը 13.2 մլն դրամով, կամ 23.7 տոկոսով պայմանավորված է.

- աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը՝ շուրջ 30 տոկոսով բարձրացման հետ կապված ծախսերի աճով՝ 12.8 մլն դրամով,

- գործուղման ծախսերի աճով՝ 0.4 մլն դրամով:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ խմբում ընդգրկված «Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ» ծրագրով նախատեսվում են 20.7 մլն դրամ հատկացումներ՝ (ՀՀ 2008 թվականի՝ 21.0 մլն դրամի դիմաց), որոնք կուղղվեն Եվրոպական հեռարձակողների միությանը Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամակցման ապահովմանը:

Ծախսերի նվազումը 0.3 մլն դրամով, կամ 1.8 տոկոսով պայմանավորված է տարադրամի փոփոխությամբ:

Կրոնական և համայնքային այլ ծառայություններ խմբին ուղղված հատկացումները նպատակ ունեն ապահովել երիտասարդական ծրագրերի իրականացումը և քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, արհմիություններին, ազգային փոքրամասնություններին աջակցության տրամադրումը:

Երիտասարդական ծրագրերի իրականացման համար 2009 թվականին նախատեսվում են 414.0 մլն դրամ հատկացումներ՝ (ՀՀ 2008 թվականի՝ 342.8 մլն դրամի դիմաց), որոնք կուղղվեն հասարակական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցության խթանմանը, երիտասարդների զբաղվածության հնարավորությունների մեծացմանը, երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի խթանմանը, պետական երիտասարդական քաղաքականության իրականացման համագործակցության մակարդակի բարձրացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, ինչպես նաև «Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն» հիմնադրամի գործունեության ապահովմանը:

Ծախսերի աճը 71.1 մլն դրամով, կամ 20.7 տոկոսով պայմանավորված է.

- աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը 30 տոկոսով բարձրացման հետ կապված ծախսերի աճով՝ 4.7 մլն դրամով,
- գործուղման ծախսերի աճով՝ 20.3 մլն դրամով,
- գոյություն ունեցող ծրագրերի գծով ծախսերի աճով՝ 13.6 մլն դրամով (միջազգային երիտասարդական համագործակցության զարգացում, մարզային երիտասարդական կենտրոնների գործարկում, երիտասարդական հեռուստահաղորդաշարի պատրաստում),
- նոր նախաձեռնությունների նախատեսմամբ՝ 32.5 մլն դրամ («Համայնքային կենտրոնների ստեղծում»՝ 20.0 մլն դրամ, «Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներ»՝ 12.5 մլն դրամ):

«Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն» հիմնադրամի հատկացումները կուղղվեն 3 միջոցառումների իրականացմանը՝ 13.8 մլն դրամ (Համահայկական երիտասարդական համաժողով՝ 6.4 մլն դրամ, միջմշակութային երիտասարդական փառատոն՝ 5.7 մլն դրամ, «Միջազգային ուսուցում և միջազգային երիտասարդական աշխատանք» ուսուցողական դասընթաց»՝ 1.7 մլն դրամ) և Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն հիմնադրամի պահպանման ծախսերի իրականացմանը՝ 36.2 մլն դրամ:

Քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, արհմիություններին, ազգային փոքրամասնություններին 2009 թվականին աջակցություն տրամադրելու նպատակով հատկացումները՝ 179.6 մլն դրամ, ինչպես և ՀՀ 2008 թվականին կուղղվեն ազգային փոքրամասնություններին, հասարակական կազմակերպություններին պետական աջակցության և «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի պահանջի համաձայն, ՀՀ Ազգային Ժողովի ընտրություններում 3 և ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին նյութական աջակցության տրամադրմանը, համապատասխանաբար՝ 10.0 մլն, 100.0 մլն և 69.6 մլն դրամ:

Մշակույթի, տեղեկատվության և սպորտի բնագավառի ծախսերի համեմատությունը՝ 2007 թվականի փաստացի և 2008 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ, արտացոլված է սույն բացատրագրի N 11 աղյուսակում:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի 2009 թվականի տարեկան ծրագիրը արտացոլված է սույն բացատրագրի N 3 հավելվածում:

Կրթության ոլորտը, լինելով երկրի կայուն զարգացման, ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը, դիտվում է որպես երկրի զարգացման առաջնային գերակայություններից մեկը :

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված **կրթության բնագավառի** ծախսերը (առանց պետական կառավարման ապարատի պահպանման և գիտության գծով ծախսերի) կազմում են 126396.9 մլն դրամ: Ծախսերի աճը ՀՀ 2008 թվականի ճշտված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 22970.8 մլն դրամ կամ 22.2 տոկոս:

Կրթության բնագավառում հիմնական գերակայություն է համարվում **հանրակրթության ոլորտը**, որին էլ ուղղված են վերջին տարիներին ՀՀ կառավարության կողմից կրթության ոլորտում՝ համակարգի կառավարման ու արդյունավետության բարձրացման, հանրակրթության բովանդակության բարեփոխման ու որակի բարելավման ուղղությամբ իրականացվող միջոցառումները:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով *հանրակրթության գծով* (հանրակրթական, երաժշտական և երեկոյան դպրոցներում ուսուցում) նախատեսվել է 71012.9 մլն դրամ: ՀՀ 2008 թվականի ճշտված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերն աճել են 15898.8 մլն դրամով կամ 28.8 տոկոսով:

Նախագծով 2009 թվականի համար ծրագրվող բյուջետային ծախսերի աճը ՀՀ 2008 թվականի ճշտված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ հիմնականում պայմանավորված է.

ա) մանկավարժական, վարչական, ուսումնաօժանդակ և տնտեսական աշխատողների աշխատավարձերի աճով՝ 12372.6 մլն դրամով (միաժամանակ, երեխաների թվաքանակի նվազման արդյունքում աշխատավարձի ֆոնդի գծով տնտեսվել է 2196.6 մլն դրամ),

բ) պարտադիր սոցիալական ապահովության վճարների աճով՝ 679.1 մլն դրամով՝ կապված աշխատավարձերի բարձրացման հետ,

գ) վառելիքի և ջեռուցման գծով ծախսերի աճով՝ 413.1 մլն դրամով՝ կապված սեփական կաթսայատների միջոցով ջեռուցման կազմակերպման և հեղուկ վառելիքի գնի փոփոխությունը հաշվի առնելու հետ (այն հաշվարկվել է 420 դրամով՝ 2008 թվականի 320 դրամի դիմաց),

դ/ գործուղումների գծով ծախսերի ավելացմամբ՝ 8.4 մլն դրամով,

ե) այլ ծառայությունների ձեռքբերման գծով 4829.0 մլն դրամի չափով ծախսերի նախատեսմամբ:

Միաժամանակ, սովորողների թվաքանակի նվազման արդյունքում մնացած ծախսերը պակասել են 141.4 մլն դրամով, իսկ ավագ դպրոցների մասով սարքավորումների, դպրոցական գույքի ձեռքբերման գծով ծախսերի նվազումը կազմել է 65.4 մլն դրամ (հաշվարկներում 391.8 մլն դրամ է նախատեսվել 22 ավագ դպրոցների ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության լաբորատորիաների համար սարքավորումների ձեռքբերման, ինչպես նաև դպրոցական գույքի և համակարգչային սարքավորումների ձեռքբերման գծով):

Հանրակրթության գծով 2009 թվականի ծախսերը հաշվարկվել են՝ հիմք ընդունելով ՀՀ 2008 թվականի ճշտված պետական բյուջեով նախատեսված աշակերտ/ ուսուցչական դրույք և աշակերտ/ ոչ ուսուցչական դրույք հարաբերակցությունները, համապատասխանաբար՝ 14.5 և 24.1: Դպրոցներում նախատեսվում է աշակերտների օպտիմալ թվաքանակի սահմանում՝ ապահովելով ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 24-ի N 1236 և 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 2047-Ն որոշումների կատարումը (թերհամալրված դասարանների վերահամալրում, խիստ թերհամալրված դասարանների դեպքում՝ երկու, երեք դասարանների համախմբում):

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով հանրակրթության գծով նախատեսված ծախսերում աշխատավարձի գծով հաշվարկված 52221.9 մլն դրամը հնարավորություն կտա մանկավարժական անձնակազմի (27456.1 դրույք՝ ներառյալ զինղեկների և մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպիչների դրույքները) միջին ամսական հաշվարկային աշխատավարձը մեկ դրույքի հաշվով, ներառյալ լրացուցիչ վարձատրությունները, հասցնել 116.3 հազ. դրամի՝ 2008 թվականի 89.6 հազ. դրամի դիմաց, 3973.5 վարչական դրույքների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը՝ 176.1 հազ. դրամի՝ 2008 թվականի 136.0 հազ. դրամի դիմաց, իսկ 12582.7 ուսումնաօժանդակ ու տնտեսական դրույքներինը՝ 36.6 հազ. դրամի, 2008 թվականի 25.4 հազ. դրամի դիմաց (ուսումնաօժանդակ անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձում հաշվի է առնվել նաև հաշվապահների աշխատավարձը, որը հաշվարկվել է վարչական անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձի 50%-ի չափով):

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման համաձայն՝ հանրակրթության գծով ծախսերը նախատեսվել են «01. Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն» խմբի «02. Տարրական ընդհանուր կրթություն» դասում՝ 19610.3 մլն դրամի չափով, ինչպես նաև «02. Միջնակարգ ընդհանուր կրթություն» խմբի «01. Հիմնական ընդհանուր կրթություն» և «02. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն» դասերում, համապատասխանաբար՝ 36695.8 և 14706.8 մլն դրամի չափով:

Հանրակրթության ոլորտում շարունակում է գերակայություն մնալ նաև ***հատուկ կրթության*** համակարգը: Հատուկ կրթությունը ենթադրում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար հավասար պայմանների ստեղծումը և կարիքին համապատասխան որակյալ կրթության հնարավորություն տալը: Պետական ռազմավարությունն այս բնագավառում ուղղված է մի կողմից հատուկ հաստատություններում երեխաների կրթության և խնամքի որակի բարելավմանը, մյուս կողմից՝ այլընտրանքային ծառայությունների ձևավորմանը, ինչը հնարավորություն կտա աստիճանաբար բեռնաթափել հատուկ դպրոցները: Այս ոլորտում կարևորվում է նաև ներառական դպրոցների ցանցի զարգացումը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ հանրակրթական դպրոցում կրթության կազմակերպումը:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով *«Ներառական կրթություն»* ծրագրով նախատեսվել է 352.1 մլն դրամ՝ հանրապետության 26 հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 715 երեխաների ուսուցման կազմակերպման գծով:

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման համաձայն՝ ներառական կրթության գծով ծախսերը նախատեսվել են «01. Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն» խմբի «02. Տարրական ընդհանուր կրթություն» դասում՝ 137.9 մլն դրամի չափով, ինչպես նաև «02. Միջնակարգ ընդհանուր կրթություն» խմբի «01. Հիմնական ընդհանուր կրթություն» և «02. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն» դասերում, համապատասխանաբար՝ 184.3 և 29.9 մլն դրամի չափով:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով հատուկ կրթության գծով ծախսերը նախատեսվել են «Հատուկ կրթություն», «Արտակարգ ունակություններ դրսևորած երեխաների հանրակրթության կազմակերպում» և «Արտակարգ ունակություններ դրսևորած երեխաների կրթաթոշակ» ծրագրերով՝ 4677.5 մլն դրամի չափով: Հատուկ կրթության գծով ծախսերը ՀՀ 2008 թվականի ճշտված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճել են 960.9 մլն դրամով կամ 25.9 տոկոսով:

Ծախսերի աճը 2008 թվականի նկատմամբ հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի բարձրացման գծով լրացուցիչ միջոցների նախատեսմամբ (աշխատավարձերի բարձրացումը հաշվարկվել է հանրակրթության համակարգում նախատեսվող աշխատավարձերի բարձրացումների ընդհանուր սկզբունքներով), ինչպես նաև սովորողների սննդի կազմակերպման համար նախատեսված հաշվարկային նորմատիվի 20%-ով բարձրացմամբ, որը գիշերող

սովորողների համար կկազմի 1128 դրամ, երթևեկների համար՝ 679 դրամ՝ 2008 թվականի համապատասխանաբար 940 և 566 դրամի դիմաց : Հաշվարկներում հաշվի է առնվել նաև հեղուկ վառելիքի գնի փոփոխությունը:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով հատուկ կրթության գծով նախատեսված ծախսերում աշխատավարձի գծով հաշվարկված 2724.2 մլն դրամը հնարավորություն կտա 1379.1 մանկավարժական դրույքների (ներառյալ զինղեկների և մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպիչների դրույքները) միջին ամսական հաշվարկային աշխատավարձը մեկ դրույքի հաշվով, ներառյալ լրացուցիչ վարձատրությունները, հասցնել 116.6 հազ. դրամի՝ 2008 թվականի 89.6 հազ. դրամի դիմաց, 126.5 վարչական դրույքներինը՝ 176.4 հազ. դրամի՝ 2008 թվականի 135.7 հազ. դրամի դիմաց, իսկ 1300.3 ուսումնաօժանդակ և տնտեսական դրույքների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը՝ 33.7 հազ. դրամի՝ 2008 թվականի 26.7 հազ. դրամի դիմաց:

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման համաձայն՝ հատուկ կրթության գծով ծախսերը նախատեսվել են «01. Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն» խմբի «02. Տարրական ընդհանուր կրթություն» դասում՝ 924.0 մլն դրամի չափով, ինչպես նաև «02. Միջնակարգ ընդհանուր կրթություն» խմբի «01. Հիմնական ընդհանուր կրթություն» և «02. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն» դասերում, համապատասխանաբար՝ 2646.3 և 1107.2 մլն դրամի չափով:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով «**Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն»** դասի գծով նախատեսվել է 1984.3 մլն դրամ, որը ՀՀ 2008 թվականի ճշտված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճել է 304.0 մլն դրամով կամ 18.1 տոկոսով: Աճը ՀՀ 2008 թվականի ճշտված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ հիմնականում պայմանավորված է համակարգի աշխատողների աշխատավարձերի նախատեսվող բարձրացմամբ, որը կիրականացվի հանրակրթության համակարգում իրականացվող աշխատավարձերի բարձրացումների ընդհանուր սկզբունքներով: Հաշվարկներում հաշվի է առնվել նաև հեղուկ վառելիքի գնի փոփոխությունը, ինչպես նաև 35.3 մլն դրամ է նախատեսվել Վանաձորի N 1 ուսումնարանի գծով (վերջինս ՀՀ 2008 թվականի ճշտված պետական բյուջեով նախատեսված չի եղել):

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի նախագծով նախնական մասնագիտական (արհեստագործական) հաստատությունների ծախսերում աշխատավարձի գծով հաշվարկված 1334.4 մլն դրամը հնարավորություն կտա 741.1 մանկավարժական դրույքների (ներառյալ զինղեկների և մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպիչների դրույքները) միջին ամսական հաշվարկային աշխատավարձը մեկ դրույքի հաշվով, ներառյալ լրացուցիչ վարձատրությունները, հասցնել 104.8 հազ. դրամի՝ 2008 թվականի 80.8 հազ. դրամի դիմաց, 70.5 վարչական դրույքներինը՝ 157.8 հազ. դրամի՝ 2008 թվականի 121.9 հազ. դրամի դիմաց և 678.4 ուսումնաօժանդակ ու տնտեսական դրույքներինը՝ 33.0 հազ. դրամի՝ 2008 թվականի 25.7 հազ. դրամի դիմաց:

«Միջին մասնագիտական կրթություն» դասի գծով ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 3051.3 մլն դրամ: Աճը ՀՀ 2008 թվականի ճշտված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 624.1 մլն դրամ կամ 25.7 տոկոս:

ՀՀ 2008 թվականի ճշտված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է՝

- աշխատավարձերի նախատեսվող բարձրացմամբ (աշխատավարձերի բարձրացումները հաշվարկվել են հանրակրթության համակարգում առաջարկվող բարձրացումների տոկոսներով, որով պայմանավորված աշխատավարձի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ծախսերն աճել են 415.1 մլն դրամով):

- Սննդամթերքի ձեռքբերման գծով ծախսերի ավելացմամբ՝ 129.7 մլն դրամով, պայմանավորված սննդի հաշվարկային նորմատիվի բարձրացմամբ (ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայության մարզական քոլեջներում սովորողների սննդի հաշվարկային նորմատիվը նախատեսվել է. երթևեկ սովորողների համար՝ 1500 դրամ, գիշերողների համար՝ 2000 դրամ՝ 2008 թվականի համապատասխանաբար, 1000 և 1500 դրամի դիմաց, իսկ ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության քոլեջների երթևեկ սովորողների համար՝ 679 դրամ՝ 2008 թվականի 566 դրամի դիմաց):

Նախագծի հաշվարկներում ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի գծով նախատեսվել է 49.5 մլն դրամ՝ ինքնաթիռի վարձակալության հետ կապված: ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը նախատեսվել է 7.3 մլն դրամ, որից 4.3 մլն դրամը՝ սպորտային միջոցառումների, իսկ 3.0 մլն դրամը՝ փափուկ գույքի ձեռքբերման գծով:

Բարձրագույն կրթության գծով ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 7585.5 մլն դրամ, որը ՀՀ 2008 թվականի ճշտված պետական բյուջեի համապատասխան ծախսերի նկատմամբ աճել է 957.1 մլն դրամով կամ 14.4 տոկոսով:

Ծախսերի աճը ՀՀ 2008 թվականի ճշտված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ պայմանավորված է՝

- աշխատավարձի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով լրացուցիչ միջոցների նախատեսմամբ՝ 2009 թվականին հանրապետությունում նվազագույն աշխատավարձի 30.0 հազ. դրամի չափով նախատեսվող սահմանմամբ պայմանավորված և, սովորողների թվաքանակի ավելացման հետ կապված, ծախսերի աճով,

- կրթաթոշակի ֆոնդի գծով ծախսերի աճով՝ սովորողների թվաքանակի ավելացմամբ պայմանավորված:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով **«Արտադպրոցական դաստիարակություն»** դասի գծով նախատեսվել է 2244.6 մլն դրամ, որը ՀՀ 2008 թվականի ճշտված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճել է 536.2 մլն դրամով կամ 31.4 տոկոսով:

Ծախսերի աճը ՀՀ 2008 թվականի ճշտված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի բարձրացման գծով

լրացուցիչ միջոցների նախատեսմամբ (աշխատավարձերի բարձրացումները հաշվարկվել են հանրակրթության համակարգում առաջարկվող բարձրացումների տոկոսներով): Միաժամանակ, լրացուցիչ միջոցներ են նախատեսվել երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային, լարային նվագարանների բաժիններում սովորող 2443 աշակերտի հաշվով (2008 թվականի 1981 աշակերտի դիմաց), ինչպես նաև 13.5 մլն դրամ է նախատեսվել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ չեմպիոնների հավելավճարների գծով: Վերոնշվածներով պայմանավորված՝ աշխատավարձի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ծախսերի աճը կազմել է 471.6 մլն դրամ:

Նախագծի հաշվարկներում կոմունալ ծախսերն աճել են 22.3 մլն դրամով, սպորտային միջոցառումները՝ 37.8 մլն դրամով, որից 11.4 մլն դրամը՝ շախմատի հանրապետական օլիմպիադայի անցկացման գծով, 25.0 մլն դրամը՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայության մարզադպրոցների գծով:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով **«Լրացուցիչ կրթություն»** դասի գծով նախատեսվել է 1274.9 մլն դրամ, որը ՀՀ 2008 թվականի ճշտված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճել է 405.4 մլն դրամով կամ 46.6 տոկոսով:

Ծախսերի աճը ՀՀ 2008 թվականի ճշտված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ հիմնականում պայմանավորված է 2009 թվականին հանրապետությունում նվազագույն աշխատավարձի 30.0 հազ. դրամի չափով նախատեսվող սահմանմամբ, ժամավճարի գծով լրացուցիչ միջոցների նախատեսմամբ (դասախոսական մեկ ժամի արժեքը նախատեսվել է 2400 դրամ՝ ՀՀ 2008 թվականի ճշտված պետական բյուջեի 1200 դրամի դիմաց), ինչպես նաև վերապատրաստման, վերարակավորման ինստիտուտներում և մասնագիտական դասընթացներում վերապատրաստվողների թվաքանակի ավելացման հետ կապված ծախսերի աճով:

Հաշվարկներում լրացուցիչ միջոցներ են նախատեսվել

- ՀՀ դատախազությանը՝ «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ի գծով, 99.2 մլն դրամի չափով, որից 49.6 մլն դրամը վերապատրաստվողների գործուղումների գծով ծախսերն են, 18.0 մլն դրամը՝ էլեկտրոնային ուսուցման, 3.5 մլն դրամը՝ էլեկտրոնային գրադարանի, 13.3 մլն դրամը՝ թրաֆիքինգի գծով ուսուցման, 12.4 մլն դրամը՝ սարքերի, սարքավորումների ձեռքբերման գծով ծախսերը:

- ՀՀ արդարադատության նախարարությանը՝ հատուկ ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման նպատակով՝ 55.7 մլն դրամի չափով:

- ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը՝ համայնքային ծառայողների վերապատրաստման գծով՝ 30.5 մլն դրամի չափով:

Վերապատրաստումների գծով ՀՀ ֆինանսների և ՀՀ առողջապահության նախարարություններին նախատեսված ծախսերն աճել են, համապատասխանաբար՝ 24.0 և 15.0 մլն դրամով: Միաժամանակ, 44.0 մլն դրամ է նախատեսվել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությանը՝ օտարերկրյա պետություններում վերապատրաստումների

գծով, 97.5 մլն դրամ՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությանը՝ Դիվանագիտական դպրոցի գծով, 20.0 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության զինծառայողների վերապատրաստումների գծով (վերջիններս ՀՀ 2008 թվականի ճշտված պետական բյուջեով նախատեսված չեն եղել):

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման համաձայն՝ հանրակրթական ծրագրերի իրականացմանն օժանդակության շրջանակներում իրականացվող մի շարք ծրագրեր, ինչպես նաև մասնագիտական կրթության գծով որոշ ծրագրեր նախատեսվել են ***«Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ»*** դասում:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով զգալի միջոցներ են նախատեսվել ներքոհիշյալ ծրագրերի գծով, այսպես.

- տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում ու ավագ դպրոցների դասագրքերի հրատարակում՝ 764.6 մլն դրամ («Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ պետությունը տարրական ընդհանուր կրթական ծրագրերով սովորող բոլոր երեխաներին անվճար ապահովում է դասագրքերով (բացառությամբ օտար լեզվի և երաժշտության դասագրքերի), իսկ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին՝ տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով): Նշված գումարից 295.3 մլն դրամը ավագ դպրոցների 4 նոր դասագրքերի հրատարակման ծախսն է: Միաժամանակ, « Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» ծրագրով նախատեսվել է 120.3 մլն դրամ (վերջինս ՀՀ 2008 թվականի ճշտված պետական բյուջեով նախատեսված չի եղել):
- դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում՝ 320.6 մլն դրամ (ծախսերը հաշվարկվել են 4500 դպրոցահասակ երեխայի հաշվով՝ 2008 թվականի 3000-ի դիմաց),
- համակարգչային և ինտերնետային կապի ծառայություններ՝ 713.8 մլն դրամ (հաշվարկներում ծախսերը նախատեսվել են ցանցում արդեն իսկ ընդգրկված 644 դպրոցների ինտերնետային ցանցի սպասարկման և պահպանման գծով, ինչպես նաև նշված ցանցում ևս 300 դպրոցի ընդգրկման հետ կապված): Նշված ծրագրով միջոցներ են նախատեսվել նաև կրթական էլեկտրոնային նյութերի ստեղծման, 300-ական ինֆորմատիկայի և դպրոցների ինտերնետային ցանցերը սպասարկող ուսուցիչների (մասնագետների) վերապատրաստման, հեռավար ուսուցման համակարգի ներդրման գծով:
- ներդրումներ հանրակրթական դպրոցները համակարգիչներով համալրելու նպատակով՝ 499.5 մլն դրամ: Նշված միջոցները նախատեսվել են 151 հանրակրթական դպրոցների համակարգչային սարքավորումներով համալրման նպատակով:
- ավարտական փաստաթղթերի, գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադի-տողական պարագաների ձեռքբերում՝ 409.5 մլն դրամ,
- դպրոցականների սպարտակիադայի և օլիմպիադաների անցկացում, համապատաս-խանաբար, 35.0 և 41.2 մլն դրամ,

- փոխհատուցում ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին՝ 83.9 մլն դրամ,
- կրթության բովանդակային և մեթոդական սպասարկում ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում՝ 498.0 մլն դրամ,
- գնահատման և թեստավորման ծառայություններ՝ 559.0 մլն դրամ (նշված ծախսը նախատեսվել է քննությունների թեստերի մշակման, միասնական քննությունների անցկացման, 1-ին և 4-րդ դասարանցիների գնահատման փաստաթղթային ձևերի մշակման և տպագրության նպատակով),
- սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի տրամադրում, ինչպես նաև Ջավախքի դպրոցներին գույքի տրամադրում, համապատասխանաբար, 70.0 մլն և 30.0 մլն դրամ,
- հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում՝ 50.5 մլն դրամ,
- 12-ամյա կրթության անցման կապակցությամբ 6 տարեկան երեխաների ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում՝ 145.0 մլն դրամ,
- Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում զենքի պահման սենյակների ընթացիկ նորոգում և կահավորում՝ 186.3 մլն դրամ (վերջինս ՀՀ 2008 թվականի ճշտված պետական բյուջեով նախատեսված չի եղել):

Վերոնշյալներից բացի՝ ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով համապատասխան միջոցներ են նախատեսվել նաև կրթական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով:

Բացի այդ, 2009 թվականին կրթության ոլորտում նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային ծրագրերը.

1. <u>Կրթության որակի և համապատասխանության ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն),</u> որի նպատակն է՝ ուղղորդել Հայաստանի կրթական համակարգի զարգացումը դեպի համընդհանրացման արդի պայմաններում «գիտելիքների տնտեսության» պահանջները:

Մասնավորապես, 2009 թվականին կշարունակվի և ավարտին կհասցվի ծրագրով նախատեսված միջոցառումներն ու աշխատանքները, որոնք ուղղված են՝ բարձրացնելու հանրակրթության որակը՝ արդիականացնելով հանրակրթության բովանդակությունը և ներդնելով որակի վերահսկման ու գնահատման միասնական համակարգ, ներդնելու տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաները հանրակրթության բնագավառում, բարելավելու ուսուցիչների մասնագիտական գիտելիքները, շարունակելու բարեփոխումները հանրակրթության ոլորտում:

2. <u>Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի</u> նպատակն է աջակցել ՀՀ կառավարության քաղաքականությանը՝ բարձրացնելու աղքատների և խոցելի խմբերի կենսամակարդակը, մեծացնել համայնքային ենթակառուցվածքների և ծառայություն-

ների տարածվածությունը՝ աղքատության առավել բարձր աստիճան ունեցող համայնքներում և ամենախոցելի խմբերի համար:

Ծրագրի շրջանակներում 2009 թվականին նախատեսվում է կենտրոնանալ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երկրորդ վարկային ծրագրի աշխատանքների շարունակման վրա, այսինքն շարունակել մարզերում առավել ցածր կենսամակարդակ ունեցող համայնքներում սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների բարելավման աշխատանքները:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով միջոցներ են նախատեսվել նաև մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող մի շարք ծրագրերի գծով, մասնավորապես.

- բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումներ՝ 80.0 մլն դրամ,
- մասնագիտական կրթության որակի ապահովման ծառայություններ՝ 65.7 մլն դրամ,
- նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումներ՝ 225.0 մլն դրամ:

Կրթության բնագավառի ծախսերի համեմատությունը՝ նախորդ տարվա (2007 թվական) փաստացի և ընթացիկ (2008 թվական) բյուջետային տարվա համար ճշտված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 12 աղյուսակում:

<u>Գիտությունը</u>, որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն գտնվում է պետության հովանավորության ներքո: Հիմք ընդունելով 2007 թվականի հուլիսի 11-ի ՀՀ վարչապետի կողմից վավերացված «Գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգային դրույթները», 2009 թվականին ՀՀ պետական բյուջեով նախատեսված գիտության ծախսերը կուղղվեն.

ա/ գիտության ոլորտում համապատասխան ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման նպատակով գիտական կենտրոնների ստեղծման համար,

բ/ գիտական աշխատողների աշխատավարձի բարձրացմանը,

գ/ պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ ծրագրերում հատուկ երիտասարդական շնորհային մրցույթի կազմակերպմանը,

դ/ նպատակային – ծրագրային ֆինանսավորմամբ նոր պետական ծրագրերի անցկացմանը,

ե/ Միջազգային համագործակցության, այդ թվում եվրոպական գիտական տարածք ինտեգրումն ապահովելուն, ինչպես նաև համաֆինանսավորման ծրագրերն իրականացնելուն, զ/ Սևծովյան երկրների միջև փոխադարձ կապի (BSI) նախագծի համաֆինանսավորմանը,

է/ գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացմանը,

ը/ Եվրոպական իրավունքի ինտեգրման կենտրոնին աջակցմանը,

թ/ գիտական հետազոտությունների իրականացման նորագույն մեթոդների յուրացման, գիտական արդյունքների հրապարակայնացման և առևտրայնացման քաղաքականության ամրապնդման, ինչպես նաև արտերկրի, նաև հայազգի, երիտասարդ գիտնականներին մեր հանրապետության գիտական դաշտին տեղյակ և մասնակից դարձնելու նպատակով ամառային դպրոցների կազմակերպմանը,

ժ/ գիտական հրատարակումների մակարդակի բարձրացման, գրախոսվող ամսագրերի միջազգային ստանդարտներին մոտեցման, գիտական արդյունքների վերլուծության միջազգային տեղեկատվական բազաներում գրանցվելու և հանրապետությունում հրատարակվող գիտական ամսագրերի, հրատարակումների միջազգային ճանաչման խնդրի լուծմանը:

Գիտության ոլորտի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման մեջ գիտության գործուն դեր ունենալը, գիտական հետազոտությունների արդյունքները տնտեսության մեջ արդյունավետ օգտագործելը:

Գիտության զարգացումը պետք է ընթանա «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի և գիտության ու գիտատեխնիկական քաղաքականության հիմնադրույթներով, ըստ որի պետության կողմից գիտության ֆինանսավորումն կիրականացվի

- բազային,
- պայմանագրային (թեմատիկ) ,
- նպատակային-ծրագրային ֆինանսավորման ձևերով:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված գիտության բնագավառի ծախսերը կազմում են **8300.9** մլն դրամ: Ծախսերի աճը ՀՀ 2008 թվականի ճշտված բյուջեի նկատմամբ կազմում է 1433.0 մլն դրամ կամ 20.87 տոկոս:

Գիտության բնագավառի 2009 թվականի ծախսերը միջնաժամկետ ծախսերի ծրագրով այդ տարվա համար նախատեսվածի նկատմամբ աճել են 39.0 մլն դրամով կամ 0.47 տոկոսով: Միջնաժամկետ հեռանկարում գիտության ծախսերը նախատեսվել են. 2010 թվականին՝ 9337.6 մլն դրամի չափով, 2011 թվականին՝ 10577.4 մլն դրամի չափով:

Գիտության ծախսերն ամբողջովին արտացոլված են սույն բացատրագրի NN 23.4, 23.5 աղյուսակներում և ըստ ուղղությունների նախատեսվում են.

Բազային ֆինանսավորում ստացող կազմակերպությունների համար ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է **5130.5** մլն դրամ՝ 2008 թվականի 3893.8 մլն դրամի դիմաց, այդ թվում

- Հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման ծրագրի գծով՝ **2454.8** մլն դրամ, կամ աճը 2008 թվականի նկատմամբ՝ 620.3 մլն դրամ, որը հիմնականում պայմանավորված է գիտաշխատողների միջին հաշվարկային աշխատավարձը մոտ 6%-ով և տնտեսական ու այլ ծախսերը տվյալ գիտական կազմակերպության բազային ֆինանսավորման ընդհանուր ծավալի 20-30%-ի չափով ավելացմամբ,

- Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի գծով՝ **2340.2** մլն դրամ, կամ աճը 2008 թվականի նկատմամբ՝ 832.9 մլն դրամ, որը հիմնականում պայմանավորված է 503.9 մլն դրամի չափով նոր նախաձեռ-նություններին, այդ թվում գիտական կենտրոնների ստեղծման համար 160.4 մլն դրամի չափով, եվրոպական գիտական տարածք ինտեգրումն ապահովելու, ինչպես նաև համաֆինանսավորման ծրագրերն իրականացնելու համար 222.9 մլն դրամի չափով, Սևծովյան երկրների միջև փոխադարձ կապի (BSI) նախագծի համաֆինանսավորման համար 50.0 մլն դրամի չափով, Եվրոպական իրավունքի ինտեգրման կենտրոնին 36.0 մլն դրամի չափով, գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացմանը՝ 12.6 մլն դրամի չափով, ամառային դպրոցների կազմակերպման համար 12.0 մլն դրամի չափով, գիտական հրատա-րակումների մակարդակի բարձրացման համար 10.0 մլն դրամի չափով:պետական աջակցություն ցուցաբերելու հետ, ինչպես նաև գիտաշխատողների միջին հաշվարկային աշխատավարձը մոտ 6%-ով և տնտեսական ու այլ ծախսերը տվյալ գիտական կազմակերպության բազային ֆինանսավորման ընդհանուր ծավալի 20-30%-ի չափով ավելացմամբ, մի քանի գոյություն ունեցող ծրագրերի ընդլայնմամբ, մասնավորապես՝ 34.8 մլն դրամի չափով գիտաժողովների, գիտական կոնֆերանսների, սիմպոզիումների, սեմինարների կազմակերպման և արտերկիր գիտական գործուղումների համար՝ համապատասխանաբար 15.0 մլն դրամ և 19.8 մլն դրամ լրացուցիչ,

- Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրի գծով՝ **241.6** մլն դրամ, կամ 2008 թվականի համեմատ ծախսերի գումարը աճել է 76.8 մլն դրամով, որը պայմանավորված է Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի («Մատենադարան») և Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտաշխատողների միջին ամսական աշխատավարձը 75 հազ.դրամի չափով նախատեսելու հետ:

- Գիտական կադրերի պատրաստման պետական ծրագրի գծով՝ **93.8** մլն դրամ, կամ 2008 թվականի նկատմամբ նվազել է 7.1 մլն դրամով՝ կապված գիտության ոլորտում ներառված ասպիրանտների քանակի պակասեցման պատճառով:

Պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորման համար նախատեսվում է **1073.6** մլն դրամ՝ 2008 թվականի 943.3 մլն դրամի դիմաց, աճը պայմանավորված է 158.4 մլն դրամի չափով ՀՀ պաշտպանության նախարարության պատվերով կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գծով ծախսերի ավելացմամբ, 56.8 մլն դրամի չափով երկու նոր ծրագրերին՝ «Հայկական ազգային ԳՐԻԴ միջավայրի ստեղծում» և «Շենգավիթ», պետական աջակցության համար, միաժամանակ՝ 4.9 մլն դրամի չափով կնվազի «Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ – թանգարան (,,Մատենադարան,,)» ՊՈԱԿ-ին «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց» բազմահատորյակի ստեղծման և հրատարակման ծրագիրը /ծրագրի կատարման ժամանակացույցի համաձայն/ և 2008 թվականին կավարտվեն երկու ծրագրեր՝ 80.0 մլն դրամի չափով:

Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման համար նախատեսվում է 1546.8 մլն դրամ՝ 2008 թվականի 1455.8 մլն դրամի դիմաց, կամ աճը 91.0 մլն դրամ, որը կուղղվի պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ ծրագրերում հատուկ երիտասարդական շնորհային մրցույթի կազմակերպմանը:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով, ինչպես և 2008 թվականին, առանձին ծրագրով նախատեսվում է նաև 549.9 մլն դրամ՝ գիտաշխատողների գիտական աստիճանների համար հավելավճարներ տրամադրելու համար /այն 2008 թվականին գիտության դոկտորների համար սահմանվել է 20 հազ. դրամ, իսկ թեկնածուների համար՝ 10 հազ. դրամ/:

Գիտության բնագավառի ծախսերի համեմատությունը՝ նախորդ տարվա (2007 թվական) փաստացի և ընթացիկ (2008 թվական) բյուջետային տարվա համար ճշտված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 13 աղյուսակում:

Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեում ընդգրկելու նպատակով գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական ծրագրերի ցանկը ներկայացված է սույն բացատրագրի N 7 հավելվածում:

<u>Սոցիալական պաշտպանության</u> ոլորտի համար նախատեսվող միջոցառումներն ուղղվելու են բնակչության սոցիալական ապահովության քաղաքականության հիմնական և գերակա ուղղությունների՝ պետական կենսաթոշակային ապահովության, սոցիալական աջակցության, աշխատանքի, բնակչության զբաղվածության, ընտանիքի, հաշմանդամների և տարեցների սոցիալական պաշտպանության, փախստականների սոցիալական խնդիրների լուծման, օրենսդրության կատարելագործման ու դրա իրականացման ապահովմանը, ինչպես նաև անհատական ծածկագրային համակարգի ներդրման գործընթացի շարունակությանը:

2009 թվականին սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը (առանց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պահպանման) կկազմեն 249655.2 մլն. դրամ կամ 2008 թվականի պետական բյուջեի ծախսերը գերազանցում են 34415.3 մլն. դրամով (2008թ.՝ 215 239.9 մլն. դրամ):

Սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը ըստ խմբերի և դասերի բնութագրվում են հետևյալ կերպ.

Վատառողջություն

-«Աշխատողների աշխատանքային պարտավորությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում» ծրագրով նախատեսվում է 88.9 մլն դրամի չափով ծախս (առանց վճարման ծառայության): 2008թ. նկատմամբ ծախսերի աճը կազմում է 11.4 մլն. դրամ, որը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական

աշխատավարձի կանխատեսվող չափի բարձրացմամբ 5000 դրամով (2008թ.՝ 25000 դրամ): Միաժամանակ վնասի հատուցում ստացող անձանց կանխատեսվող միջին տարեկան թվաքանակը նվազում է 39 մարդով (2008թ. 880 մարդ):

-«Բժշկասոցիալական վերականգնման, աշխատունակության փորձաքննության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 109.6 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 96.8 մլն դրամ): Ծախսերի աճը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ 12.9 մլն. դրամով պայմանավորված է մեկ հիվանդի 1 օրվա բուժման միջին գնի բարձրացմամբ, այն 2009թ. համար սահմանվել է 13000 դրամ (2008թ.՝ 11500 դրամ) և հիվանդների թվաքանակի ավելացմամբ՝ հաշվի է առնվել միայն պրոթեզավորվող հիվանդների նախա և հետպրոթեզավորման բուժման և վերականգնման հետ կապված հիվանդների թվաքանակի աճը 27 մարդով (2008թ. 237 մարդ), որի արդյունքում հիվանդների ընդհանուր թիվը կկազմի 591մարդ (2008թ.՝ 564 մարդ):

Անաշխատունակություն

-«Հոգեկան առողջության վերականգնման ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 73.3 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 64.8 մլն դրամ): Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճել են 8.5 մլն. դրամով պայմանավորված մեկ հիվանդի 1 օրվա բուժման միջին գնի բարձրացմամբ, պահպանելով 2008թ. պետական բյուջեով նախատեսված հիվանդների թվաքանակը՝ 392 մարդ:

-«Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում» ծրագրով նախատեսվում է 888.2 մլն դրամի չափով ծախս (2008թ. առանց հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովման ծախսերի՝ 764.6 մլն դրամ) Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճել են 123.7 մլն. դրամով պայմանավորված հետևյալով.

ա/ պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների թվաքանակի աճով՝ 355 պարագա (2008թ.՝ 14781 պարագա), որից 2009թ. նախատեսվում է արտադրել և բաշխել 13787 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագա, որի ընդհանուր արժեքը կազմում է 766.3 մլն. դրամ, բ/գնվող պարագաների որակի բարձրացման հետ վերանորոգումների թիվը նվազում է 122 պարագայով (2008թ.՝ 1251 պարագա), որի ընդհանուր արժեքը կազմում է 73.9 մլն. դրամ, գ/ 2007թ. դեկտեմբեր ամսում կայացած պարբերական մրցույթի արդյունքում մեկ միավորի գնի փոփոխությամբ (2009թ. համար այն կկազմի 58684.0 դրամ 2008թ. 51727.0 դիմաց) առանձին պարագաների գծով ծախսերի ավելացմամբ, դ/ ձայնաստեղծ սարքերի թվի աճով, այն 2009թ. կկազմի 120 հատ (2008թ.՝ 100 հատ) 42.0 մլն. դրամ արժեքով և աչքի պրոթեզավորում ստացողների թվի աճով, այն 2009թ. կկազմի 100 հատ (2008թ.՝ 50 հատ), որի ծախսը կազմում է 6.0 մլն. դրամ:

-«Հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովում» ծրագրով նախատեսվում է 117.7 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ շուրջ 103.0 մլն դրամ): Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճել են 14.7 մլն. դրամով պայմանավորված հետևյալով.

ՀՀ կառավարության 12.04.2007թ. N453-Ն որոշման համաձայն՝ լսողական սարքերը հատկացվում են երեք տարին մեկ անգամ, ուստի ելնելով ռուսական արտադրության լսողական սարքերի փաստացի բաշխված չափաքանակներից (2005թ.՝ 1337 հատ) 2009թ. համար նախատեսվում է ձեռք բերել 1151 ռուսական արտադրության լսողական սարք, եվրոպական արտադրության լսողական սարքերի թիվը կկազմի 300 հատ, որի ծախսը կազմում է 65.1 մլն. դրամ, այդ թվում «Հավատ» ՀԿ կողմից 1-14 տարեկան 100 երեխաների համար միջազգային կազմակերպության կողմից տրված լսողական սարքերի ամրացման նպատակով յուրաքանչյուր երեխայի համար երկուական ներդիրների ձեռք բերման համար պետության կողմից ֆինանսական աջակցություն կցուցաբերվի 2.5 մլն. դրամի չափով, զ/սայլակների թիվը կկազմի 376 (2007թ. բաշխված սայլակների փաստացի թվաքանակը), որի արժեքը կազմում է 52.6 մլն. դրամ:

-«Դպրոցն ավարտած, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշման-դամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 11.7 մլն դրամի չափով (պահպանվել է 2008թ. պետական բյուջեով հաստատված մակարդակը):

-Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց «Արև» համակարգով ուսուցում ծրագրով նախատեսվում է 8.7 մլն դրամի չափով ծախս:

-«Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց համակարգչային տեխնիկայով և պահեստամասերով ապահովում» ծրագրով նախատեսվում է 8.5 մլն դրամի չափով ծախս:

Վերջին երկու ծրագրերով ծախսերի նվազումը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ կազմում է 2.9 մլն. դրամ, որը պայմանավորված է հաշմանդամներին մատուցվող ծառայության արժեքի նվազմամբ 146.7 հազ. դրամով (2008թ. պետական բյուջեով մեկ շահառուին մատուցվող ծառայության արժեքը՝ 1.0 մլն. դրամ) պահպանելով 2008թ. պետական բյուջեով նախատեսված շահառուների թիվը՝ 20 շահառու:

-Հաշմանդամ երեխաների և պատանիների սոցիալ-վերականգնողական ծառայություն-ներ» ծրագրով նախատեսվում է 16.5 մլն դրամի չափով (պահպանվել է 2008թ. պետական բյուջեով հաստատված մակարդակը): Սույն ծրագրով նախատեսված է աջակցել հաշմանդամ երեխաների ու պատանիների (հիմնականում մտավոր խնդիրներ ունեցող) և նրանց ընտանիք-ների սոցիալական, կրթական և առողջապահական հիմնախնդիրների լուծման միջոցով նրանց

ինտեգրումն է հասարակություն: Պետական բյուջեից հատկացվող միջոցները կուղղվեն «Փրկություն» հասարակական կազմակերպության 24 աշխատողի աշխատավարձերի և սոցիալական ապահովության վճարների վճարմանը:

Ծերություն

-«Սպայական անձնակազմի զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ» ծրագրով (առանց վճարման ծառայության) նախատեսվում է 21494.0 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 19339.4 մլն. դրամ):

Ծախսերի աճը 2008 թվականի նկատմամբ կազմում է 2162.2 մլն դրամ, որը պայմանավորված է՝ ա) բազային կենսաթոշակի 800 դրամով, բ) կենսաթոշակառուների միջին տարեկան թվի 168 մարդով ավելացմամբ (2008թ.՝ 37129 մարդ), գ) բոլոր ուժային կառույցների (առանց թաղման և վճարման ծառայության ծախսերի) կենսաթոշակի միջին ամսական չափի բարձրացմամբ՝ 5067 դրամով, արդյունքում 2009թ. կենսաթոշակի միջին ամսական չափը կկազմի 46985.3 դրամ կամ կաճի շուրջ 11.3 %-ով (2008թ.՝ 42233.9 դրամ):

-«Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ» ծրագրով (առանց վճարման ծառայության) նախատեսվում է 3290.5 մլն դրամի չափով ծախս:

Նախագծի աճը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ շուրջ 12.4 մլն. դրամով պայմանավորված է բազային կենսաթոշակի չափի 800 դրամով բարձրացմամբ (2008թ. պետական բյուջեով 5000 դրամ), կենսաթոշակառուների միջին տարեկան թվի 1749 մարդով նվազման պայմաններում (2008թ.՝ 12740 մարդ), արդյունքում միջին ամսական կենսաթոշակի չափը, առանց թաղման և վճարման ծառայության ծախսերի կկազմի 19919.5 դրամ (2008թ. պետական բյուջեով հաստատված 17599.0դրամ) կամ աճը կկազմի շուրջ 16.0 %:

-«Սոցիալական կենսաթոշակներ» ծրագրով նախատեսվում է 6243.7 մլն դրամի չափով ծախս: Աճը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ 1055.5 մլն. դրամով պայմանավորված է. ա) կենսաթոշակի հիմնական չափի 1150 դրամով բարձրացմամբ (2008թ.՝6800 դրամ), բ) կենսաթոշակառուների թվաքանակի աճով՝ 1002 մարդ (2008թ.՝ 46233 մարդ): Արդյունքում միջին ամսական կենսաթոշակի չափը 2009թ.կկազմի 10147.3 դրամ (2008թ.՝ 8760 դրամ), աճը՝ 15.8%:

-«Ապահովագրական կենսաթոշակներ» ծրագրով նախատեսվում է 148277.5 մլն դրամի չափով ծախս: Աճը 2008թ. նկատմամբ 19873.8 մլն. դրամով պայմանավորված է՝ ա) կենսաթոշակի հիմնական չափի 1150 դրամով բարձրացմամբ (2008թ.՝ 6800 դրամ), բ) ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքի 60 դրամով բարձրացմամբ (2008թ.՝ 395 դրամ), գ) ըստ առանձին միջակայքերի միջին աշխատանքային ստաժ ունեցող կենսաթոշակառուների կենսաթոշակների չափերի հաշվարկման բանաձևով հաշվարկված հավելումա միջին չափերի

բարձրացմամբ: Միաժամանակ կենսաթոշակառուների թվաքանակը նվազում է 1651 մարդով (2008թ.՝ 469801մարդ): Աշխատանքային կենսաթոշակի միջին ամսական չափը (առանց թաղման նպաստի) 21842.2 դրամից կդառնա 25672.5 դրամ կամ կաճի շուրջ 17.5%:

-«ՀՀ օրենքներով և ՀՀ կառավարության որոշումներով նշանակված կենսաթոշակներ» ծրագրով նախատեսվում է 211.8 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի համեմատությամբ աճել են 441.4 մլն.դրամ, որը պայմանավորված նրանով, որ դատավորների կենսաթոշակների չափերի հաշվարկներում հաշվի է առնված կենսաթոշակի հիմնական ու ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքի բարձրացումները, ինչպես նաև «ՀՀ Նախագահի, Ազգային Ժողովի պատգամավորների, վարչապետի, կառավարության անդամների, սահմանադրական դատարանի անդամների, Ազգային Ժողովի վերահսկիչ պալատի նախագահի և դատավորների կողմից իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առընչությամբ զոհվելու կամ աշխատունակությունը լրիվ կորցնելու դեպքում նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նշանակված կենսաթոշակների ծախսերը:

-«Տարեցների շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 1 338.7 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 1 147.1 մլն դրամ): Ծախսերը 2008 թվականի համեմա-տությամբ աճել են 204.9 մլն. դրամով պայմանավորված. 1/ աշխատավարձի ծախսերի աճով 125.7 մլն. դրամով կապված. ա/ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 184 հոդվածի կիրարկումն ապահովելու համար տուն-ինտերնատների գիշերային հերթափոխային աշխատողների աշխատանքի հավելումների վճարման հետ, որի լրացուցիչ ծախսը կազմում է 25.3 մլն. դրամ, բ/ ՀՀ կառավարության 01.02.2007 թ. N 201-Ն որոշմամբ, որով սահմանվում է աշխատանքի առանձնահատուկ բնույթ ունեցող աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկություններ՝ տուն-ինտերնատների առողջապահական բնագավառի աշխատող-ների համար սահմանվել է շաբաթական 36 ժամ տևողության աշխատաժամանակ նախկին 39 ժամվա դիմաց, որի արդյունքում սպասարկող անձնակազմի թվաքանակն ավելացվել է 15 հաստիքային միավորով (լրացուցիչ ծախսը կազմում է 10.1 մլն. դրամ), գ/ աշխատակիցների աշխատավարձի ֆոնդի 20 տոկոսի չափով բարձրացմամբ 90.3 մլն. դրամով (աշխատավարձի հաշվարկներում հաշվի է առնվել նաև ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացումը 5.0 հազ. դրամով 2008թ. 25.0 հազ. դրամի դիմաց), որի արդյունքում միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը կազմում է 61.3 հազ. դրամ (2008թ.՝47.9 հազ. դրամ), 2/սննդի գումարի 20 տոկոսի չափով բարձրացմամբ՝ 76.4 մլն. դրամով, որի արդյունքում մեկ օրվա սննդի ծախսը կկազմի 1243.9 հազ. դրամ 2008թ. 1036.6 հազ. դրամի դիմաց, 3/ գազի սակագնի թանկացումը 12 ամսվա կտրվածքով հաշվելու հետ կապված գների ճշտմամբ ՝2.2 մլն. դրամով, 4/ գործուղման ծախսերի ավելացմամբ՝ 0.5 մլն. դրամով:

-«Ներդրումներ «Տարեցների տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ներում ծրագրով նախատեսվում է 13.2 մլն դրամի չափով ծախս՝ կապիտալ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին (պահպանվել է 2008թ. պետական բյուջեով նախատեսված չափը):

-Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում» ծրագրով նախատեսվում է 90.9 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 79.5 մլն դրամ): Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճել են 11.4 մլն. դրամով, պայմանավորված աշխատակիցների աշխատավարձի ծախսերի 20 տոկոսի չափով բարձրացմամբ, որի արդյունքում միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը կազմում է 42.5 հազ. դրամ 2008թ.՝ 35.4 հազ. դրամի դիմաց (հաշվարկներում հաշվի է առնվել նաև ՀՀ նվազագույն աշխատավարձի չափի բարձրացումը 5.0 հազ. դրամով 2008թ. 25.0 հազ. դրամի դիմաց) պահպանելով 2008թ. պետական բյուջեով հաստատված տնային պայմաններում սոցիալական սպասարկում ստացող 1500 միայնակ տարեցների և հաշմանդամների թվաքանակը::

-«Ներդրումներ «Միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ում ծրագրով նախատեսվում է 3.1 մլն դրամի չափով ծախս՝ կապիտալ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին (պահպանվել է 2008թ. պետական բյուջեով նախատեսված չափը):

-«Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 15.7 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 13.9 մլն դրամ): Ծախսերի աճը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ 1.8 մլն. դրամով պայմանավորված է աշխատակիցների աշխատավարձի ծախսերի 20 տոկոսի չափով բարձրացմամբ 1.5 մլն. դրամի չափով, որի արդյունքում միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը կազմում է 70.8 հազ. դրամ 2008թ.՝ 59.0 հազ. դրամի դիմաց, սննդի գումարի 20% չափով բարձրացմամբ 0.3 մլն. դրամով և գործուղման հետ կապված ծախսերի ավելացմամբ:

-«ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում» ծրագրով նախատեսվում է 197.1 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 127.2 մլն դրամ): Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճել են 69.8 մլն. դրամով, որը պայմանավորված է 3 բարեգործական ճաշարաններից օգտվող փաստացի 3000 շահառուների մեկ օրվա ճաշի համար փաստացի ծախսի 214 դրամի դիմաց 92 դրամի չափով փոխհատուցելու հետ կապված ծախսի ավելացմամբ (253օր *3000 շահառու*92 դրամ=69.8 մլն. դրամ):

-«Վանաձորի տարեցների տանը խնամվողներին շուրջօրյա խնամք և սոցիալական սպասարկում» ծրագրով նախատեսվում է 14.4 մլն դրամի չափով ծախս: «Վանաձորի

տարեցների տուն» հիմնադրամի ծերատունն ունի թվով 27 աշխատող, սպասարկվում են 55 ծերեր, և 10 ծերեր էլ խնամվում են տնային պայմաններում: Կարևորելով տարածաշրջանում միայնակ ծերերի խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների անհրաժեշտությունը և նրա հետագա բնականոն գործունեությունը ապահովելու համար 2009թ. նախատեսվում է պետական աջակցություն ցուցաբերել Հիմնադրամին տարեցների տան աշխատակիցների աշխատավարձերը և սոցիալական ապհովության վճարները վճարելու համար:

Հարազատին կորցրած անձինք

-«Հայաստանի զոհված ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձի ընտանիքներին նպաստ» ծրագրով նախատեսվում է 154.8 մլն. դրամի չափով ծախս: Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճել են 140.4 մլն. դրամով, որը պայմանավորված է. ա/ նպաստառու ընտանիքների թվի աճով՝ 3 ընտանիքով (2008թ. պետական բյուջեով 6 ընտանիք) (հիմք՝ 20.03.08թ. ՀՀ կառավարության N255-Ն որոշումը), ինչպես նաև նպաստի ամսական չափի 50.0 հազ. դրամի չափով բարձրացմամբ (2008թ. պետական բյուջեով 200.0 հազ. դրամ), բ/ «Մարտական խաչ» շքանշանով պարգևատրված՝ զոհված անձի ընտանիքներին նպաստ սահմանելով՝ առաջին աստիճանի Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված 35 անձանց ընտանիքների համար նպաստի չափը կազմում է 150.0 հազ. դրամ, երկրորդ աստիճանի Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված 54 անձանց ընտանիքների համար նպաստի չափը կազմում է 100.0 հազ. դրամ:

-«Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշըպանության մասին» ՀՀ օրենքի (25.05.2005թ. ՀՕ-206-Ն) 36-րդ հոդվածով նախատեսված նպաստի վճարում» ծրագրով նախատեսվում է 6.5 մլն. դրամի չափով ծախս: Աճը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ կազմում է 1.8 մլն. դրամ (2008թ.՝ 5.4 մլն. դրամ), պայմանավորված Հայաստանի Հանրապետությում նվազագույն ամսական աշխատավարձի կանխատեսվող չափի բարձրացմամբ (թաղման նպաստ վճարվում է գործազրկության նպաստի եռապատիկ չափով):

-«ՀՀ կառավարության 18.11.1992թ. N584 որոշման 49-րդ կետով նախատեսված նպաստի վճարում» ծրագրով նախատեսվում է 17.5 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2008թ. պետական բյուջեով հաստատված չափը):

Ընտանիքի անդամներ և զավակներ

-«Ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն» ծրագրով ծախսը կկազմի 32 324.3 մլն դրամ՝ 2008 թվականի 29389.0 մլն դրամի դիմաց: Աճը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ կազմում է 2 935.3 մլն. դրամ, պայմանավորված նրանով, որ հաշվարկներում հաշվի է

առնվել միջին ամսական նպաստի չափի բարձրացումը, այն 2009թ. կկազմի 23629 դրամ (2008թ. պետական բյուջեով 21100 դրամ), նպաստառուների թվաքանակը կնվազի կազմելով 114000 ընտանիք (2008թ.պետական բյուջեով 116204 ընտանիք), պահպանելով նպաստի չափի տարբերակման սկզբունքը և ավելացնելով նպաստի բազային և յուրաքանչյուր երեխայի գծով տրվող հավելման չափերը:

-«Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ» ծրագրով նախատեսվում է շուրջ 1 296.0 մլն. դրամի չափով ծախս (2008թ. պետական բյուջեով 215.3 մլն. դրամ): Ծախսերի աճը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ կազմում է 1080.7 մլն. դրամ, որը պայմանավորված է նրանով, որ հաշվարկներում հաշվի է առնվել նպաստի ամսական չափի փոփոխությունը, որը կկազմի ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի 60%՝ 18.0 հազ. դրամ (2008թ. նպաստի ամսական չափը՝ 3.0 հազ. դրամ), պահպանելով 2008թ. պետական բյուջեով նախատեսված նպաստառուների թիվը՝ 6.0 հազ. ընտանիք:

-«Երեխայի ծննդյան միանվագ նպաստ» ծրագրով նախատեսվում է 4 077.6 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 1 320.0 մլն դրամ): Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճել են 2 757.6 մլն. դրամով, պայմանավորված է նրանով, որ հաշվարկներում հաշվի է առնվել ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված քաղաքականությունը, որով սահմանվում է 2009 թվականից բարձրացնել երեխայի ծննդյան միանվագ՝ ներկայումս գործող նպաստի չափը և ներդնել երեխաների ծննդյան հաջորդականությամբ պայմանավորված խրախուսման ամբողջական համակարգ: Այսպիսով 2009թ. նպաստի չափը 1-ին և 2-րդ երեխայի ծննդյան հետ կապված կկազմի 50.0 հազ. դրամ (2008թ. 35.0 հազ. դրամ), իսկ 3-րդ և ավելի երեխա ունենալու դեպքում՝ 430.0 հազ. դրամ: Միաժամանակ հաշվարկներում հաշվի է առնվել 2007թ. Հայաստանի վիճակագրական տեղեկագրի տվյալները, որով վերջին երեք տարիների ծնելիության միջին աճի տեմպը կազմում է 3.47%, որը կիրառվել է 2007թ. փաստացի ստացողների թվաքանակի՝ 38801 մարդու նկատմամբ, արդյունքում 2009թ. այդ նպատակով սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններ կդիմեն 40147.4 մարդ, որից 3-րդ և ավելի երեխաների թիվը կկազմի 5448:

-«Հղիության և ծննդաբերության նպաստի վճարում» ծրագրով նախատեսվում է 2 047.3 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 1 760.2 մլն դրամ): Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճել են 287.1 մլն. դրամով, պայմանավորված նրանով, որ պահպանվել է՝ ա) հանրապետությունում ծնելիության աճի հանգամանքով պայմանավորված ծննդաբերության նպաստի օրերի թվի աճը կանխատեսվել 7.1%-ով կամ 64240 օր, արդյունքում օրերի թիվը 2009թ. կկազմի 969021 օր (2008թ. բյուջեով նախատեսված 904781 x 7.1%) , բ)պահպանվել է 2008թ. պետական բյուջեով նախատեսված միջին օրական նպաստի չափի աճի տեմպը՝ 8.6% կամ 167.3 դրամ, արդյունքում միջին օրական նպաստի չափը կկազմի 2112.7 դրամ (2008թ. բյուջեով նախատեսված 1945.4 դրամ x 8.6 %):

-«Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 1 660.6 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 1 353.1 մլն դրամ): Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճել են 307.6 մլն. դրամով, պայմանավորված. 1/ աշխատավարձի ծախսերի ավելացմամբ կապված. ա/ մանկատների աշխատավարձի 20 տոկոսի չափով բարձրացմամբ (աշխատավարձի հաշվարկներում հաշվի է առնվել նաև ՀՀ նվազագույն աշխատավարձի չափի բարձրացումը 5.0 հազ. դրամով 2008թ. 25.0 հազ. դրամի դիմաց), բ/ մասնագիտացված մանկատների «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ -172-Ն օրենքի կիրարկմամբ աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ՝ 85.9 մլն. դրամով, որի արդյունքում միջին հաշվարկային ամսական աշխատավարձը կազմում է 135.0 հազ. դրամ 2008թ.112.5 հազ. դրամի դիմաց (այսպիսով մանկատների ընդհանուր միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կկազմի 91.8 հազ. դրամ 2008թ. 74.8 հազ. դրամի դիմաց), գ/ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 184 հոդվածի կիրարկմամբ մանկատների գիշերային հերթափոխային աշխատողների աշխատանքի հավելումների վճարման հետ՝ 31.3 մլն. դրամ, դ/ ՀՀ կառավարության 01.02.2007 թ. N201-Ն որոշման համաձայն, որով սահմանվում է աշխատանքի առանձնահատուկ բնույթ ունեցող աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկություններ՝ մանկատների առողջապահական բնագավառի աշխատողների համար սահմանվել է շաբաթական 36 ժամ տեվողության աշխատաժամանակ նախկին 39 ժամվա դիմաց 45 հաստիքային միավորով ավելացմամբ (2008թ. պետական բյուջեով 809 հաստիքային միավր), որի լրացուցիչ ծախսը կազմում է 39.0 մլն. դրամ, 2. սննդի գումարի 20 տոկոսի չափով բարձրացմամբ՝ 66.0 մլն. դրամ, որի արդյունքում մեկ օրվա սննդի ծախսը կկազմի 1161.2 հազ. դրամ 2008թ. 967.7 հազ. դրամի դիմաց, 3. գազի սակագնի փոփոխությունը 12 ամսվա կտրվածքով հաշվելու հետ կապված և առանձին հոդվածների գծով ծախսերի ներառմամբ՝ 5.4 մլն. դրամ, ինչպես նաև գործուղման հետ կապված ծախսերի ավելացմամբ 0.7 մլն. դրամով:

-«Ներդրումներ «Երեխաների տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ներում» ծրագրով նախատեսվում է 21.4 մլն դրամի չափով ծախս՝ կապիտալ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին ՝ պայմանավորված «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի հին մասնաշենքի վերակառուցմամբ և «Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքի կառուցմամբ, որոնք շահագործման կհանձնվեն 2009 թվականին: Մասնագի-տացված մանկատների նոր մասնաշենքերի կառուցման և վերակառուցման հետևանքով անհրաժեշտ կապիտալ ծախսերը կավելան 14.3 մլն. դրամով (2008թ.՝ 7.1 մլն.դրամ):

-«Երեխաների տուն-ինտերնատներում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին դրամական աջակցության տրամադրում» ծրագրով նախատեսվում է 15.2 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 14.4 մլն.դրամ): Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճել են 0.8 մլն.

դրամով, պայմանավորված մանկատների դպրոցահասակ երեխաների թվի՝ 28-ով (2008թ.՝ 467 երեխա) ավելացմամբ:

-«ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն» ծրագրով նախատեսվում է 42.7 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 43.4 մլն դրամ):

-«ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրում» ծրագրով նախատեսվում է 4.8 մլն դրամի չափով ծախս:

-«ՀՀ մանկական խնամակալական կազմակերպություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու ծառայություններ (բեռնաթափում)» ծրագրով նախատեսվում է 11.8 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2008թ. պետական բյուջեով նախատեսված չափը):

-«Կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին դրամական օժանդակության փաթեթի տրամադրում» ծրագրով նախատեսվում է 8.7 մլն դրամի չափով ծախս (2008թ. 7.8 մլն.դրամ): Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճել են շուրջ 0.9 մլն. դրամով, պայմանավորված օժադակության փաթեթի գումարի ավելացմամբ կապված սննդամթերքի գումարի աճով 20 % չափով, որի արդյունքում օժադակության փաթեթի գումարը կավելանա 16.3 հազ. դրամով (2008թ.՝ տարեկան գումարը յուրաքանչյուր երեխայի համար 156.8 հազ. դրամ), պահպանելով 2008թ. պետական բյուջեով Լոռու մարզում ընտրված 50 ընտանիքների թիվը:

-«Ռիսկի գոտում հայտնված երեխաներին սոցիալական հոգածության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 138.5 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 118.3 մլն դրամ): Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճել են 20.2 մլն. դրամով, պայմանավորված նրանով, որ հաշվարկներում հաշվի է առնվել. ա/ կենտրոնների աշխատակիցների աշխատավարձի աճը 20 տոկոսի չափով 13.5 մլն. դրամի չափով, որի արդյունքում միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կկազմի 61.0 հազ. դրամ 2008թ. 50.0 հազ.դրամի դիմաց, բ/ սննդի գումարի 20% չափով բարձրացումը, որի լրացուցիչ ծախսը կազմում է 4.4 մլն. դրամ, գ/ գազի սակագնի թանկացումը 12 ամսվա կտրվածքով հաշվելու հետ կապված 0.5 մլն. դրամ, դ/ գործուղման հետ կապված ծախսերի ավելացմամբ 1.9 մլն. դրամի չափով:

-«Ներդրումներ «Երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ներում» ծրագրով նախատեսվում է 9.2 մլն դրամի չափով ծախս +533;թ.՝14.4 մլն. դրամ,c կապիտալ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին՝ նվազումը կազմում է շուրջ 5.2 մլն. դրամով պայմանավորված հաշվարկների ճշտմամբ:

-«Երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 896.1 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 805.3 մլն դրամ): Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճել են 90.8 մլն. դրամով, պայմանավորված. 1.աշխատակիցների աշխատավարձի ծախսերի ավելացմամբ 72.1 մլն. դրամով կապված. ա/ աշխատավարձի ծախսերի 20 տոկոսի չափով բարձրացմամբ, որի արդյունքում միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կկազմի 63.0 հազ. դրամ 2008թ.՝ 49.5 հազ. դրամի դիմաց, բ/ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 184 հոդվածի կիրարկումն ապահովելու համար գիշերօթիկ խնամքի և պաշտպանության հաստատությունների գիշերային հերթափոխային աշխատողների աշխատանքի հավելումների վճարման հետ, բ/ ՀՀ կառավարության 01.02.2007թ. N201-Ն որոշման կիրարկմամբ, որով սահմանվում է աշխատանքի առանձնահատուկ բնույթ ունեցող աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկություններ՝ սպասարկող անձնակազմի թվաքանակի ավելացմամբ, 2. սննդի գումարի 20 տոկոսի չափով բարձրացմամբ 12.1 մլն. դրամ, որի արդյունքում մեկ օրվա սննդի ծախսը կկազմի 1161.2 հազ. դրամ 2008թ. 967.7 հազ. դրամի դիմաց, գազի սակագնի թանկացումը 12 ամսվա կտրվածքով հաշվելու հետ կապված 10.0 մլն. դրամով, գործուղման հետ կապված ծախսերի ավելացմամբ 0.6 մլն. դրամի չափով և առանձին հոդվածների գծով ծախսերի փոփոխությամբ՝ 4.1 մլն. դրամով:

-«Ներդրումներ երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության հաստատություն հանդիսացող ՊՈԱԿ-ներում» ծրագրով նախատեսվում է 35.3 մլն դրամի չափով ծախս +533;թ.՝ 55.7 մլն. դրամ ,Շկապիտալ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին՝ նվազումը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ կազմում է շուրջ 20.4 մլն. դրամով պայմանավորված խնամվողների և հաստիքային աշխատողների թվաքանակի փոփոխությամբ:

-«Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից դժվար իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական հոգածության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 51.3 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2008թ. պետական բյուջեով հաստատված մակարդակը): Ծրագրով նախատեսվում է փոխհատուցել կենտրոնի 84 աշխատողների համար աշխատավարձի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով հաշվարկված գումարները: Ծրագրի նպատակն է կենտրոն այցելող 515 հաշմանդամ երեխաների սպասարկման կազմակերպումը, 600 հաշմանդամ երեխաներին սոցիալ-հոգեբանական խորհրդատվության տրամադրումը Տավուշի մարզի՝ Նոյեմբերյան, Իջևան, Դիլիջան և Բերդ տարածաշրջաններում:

-«Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 26.2 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 22.1 մլն դրամ): Ծախսերի աճը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ 4.1 մլն. դրամով պայմանավորված է նրանով, որ հաշվարկներում հաշվի է առնվել երեխաների տուն-ինտերնատներում մեկ երեխայի (հաշմանդամ երեխայի) ապրուստի համար նախատեսված գումարի չափի ավելացումը, այն

կկազմի տարեկան յուրաքանչյուր երեխայի համար 584 հազ. դրամ (2008թ. 490.4 հազ. դրամ), ինչպես նաև խնամատար ծնողների համար նախատեսված ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճը 5.0 հազ. դրամով (2008թ. պետական բյուջեով՝ 25.0 հազ. դրամ), պահպանելով 2008թ. պետական բյուջեով նախատեսված խնամատար ընտանիք տեղափոխվող երեխաների թվաքանակը՝ 25 երեխա:

-Մարդասիրական օգնության կարգով ստացվող պարենամթերքի բաշխման ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 31.1 մլն դրամի չափով ծախս (2008թ. պետական բյուջեով 54.9 մլն. դրամ): Ծախսերի նվազումը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ 23.8 մլն. դրամի չափով պայանավորված է նրանով, որ հաշվարկներում հաշվի է առնվել 2007թ. փաստացի ծախսը (այն կազմել է 16.1 մլն. դրամ 54.9 մլն. դրամի դիմաց) և 2008թ. կատարված վերաբաշխումը, որով ծրագրի ընդհանուր ծախսը նվազել է 23.8 մլն. դրամի չափով:

-«Միանվագ սոցիալական ապահովագրության վճարներ ՀՀ պաշտպանության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին» ծրագրի ծախսը կազմում է 211.0 մլն դրամ կամ 2008թ. պետական բյուջեով հաստատվածի նկատմամբ 29.0 մլն. դրամով ավելի:

-Վարժական հավաքների և զինծառայության և փրկարար ծառայության ընթացքում մահացած (զոհված) զինծառայողների ու փրկարար ծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 370.0 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2008թ. պետական բյուջեով նախատեսված չափը):

-«ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 05-1680 գործով 15.07.2005թ.վճռի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողը կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցման» ծրագրով նախատեսվում է հատկացնել 1.1 մլն դրամ (պահպանվել է 2008թ. պետական բյուջեով նախատեսված չափը):

-«ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 07-3832 գործով 03.11.2007թ. վճռի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողը կորցնելու կապակցությամբ կրած վնասի հատուցում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 0.3 մլն դրամի չափով ծախս:

Գործազրկություն

-«Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով նախատեսվում է 689.5 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2008թ. պետական բյուջեով նախատեսված չափը):

-«Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվական ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 19.7 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 13.8 մլն դրամ): Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճել են 5.8 մլն. դրամով, որը պայմանավորված է. ա/ կենտրոնի աշխատակիցների աշխատավարձի ծախսերի ավելացմամբ 20% չափով, բ/ հաստիքների թվաքանակի ավելացմամբ 4 հաստիքային միավորով (2008թ.՝ 9 մարդ), որը կապված է կենտրոնի կողմից սպասարկվող շահառուների թվաքանակից՝ 5000 մարդ և գործուղման հետ կապված ծախսերի ավելացմամբ շուրջ 1.0 մլն. դրամով:

-«Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամներին տրամադրվող ֆինանսական աջակցություն» ծրագրով նախատեսվում է հատկացնել 2.75 մլն դրամի չափով ծախս, որը պայմանավորված է անհատ ձեռնարկատեր գրանցվելու համար միջին ծախսի 5.5 հազ.դրամով ավելացմամբ (2008թ.՝ 22.0 հազ.դրամ-միջին ամսական ծախսը):

-«Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին» ծրագրով նախատեսվում է հատկացնել 64.8 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճել են 15.9 մլն. դրամ, պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձի կանխատեսվող չափի բարձրացմամբ:

-«Ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչև մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների մասնագիտական ուսուցման և աշխատանքային ունակությունների վերականգնման կազմակերպում» ծրագրով նախատեսվում է 13.1 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճել են 8.1 մլն. դրամ, պայմանավորված մասնագիտական ուսուցում ստացող հաշմանդամների թվաքանակի աճով՝ 36 մարդ (2008թ.՝ 41 մարդ), պահպանել է 2008 թվականին կնքված պայմանագրերով մեկ անձի համար միջին ծախսը 170. 0 հազ.դրամ (ներառյալ կրթաթոշակը) և նվազագույն աշխատավարձի կանխատեսվող բարձրացմամբ պայմանավորված մեկ անձի համար միջին ծախսի 5.0-հազ.դրամով ավելացմամբ:

-«Գործազկության նպաստ» ծրագրով նախատեսվում է հատկացնել 3132.0 մլն դրամի չափով ծախս (2008թ. 2610.0 մլն. դրամ): Ծախսերի աճը 2008թ պետական բյուջեի նկատմամբ կազմում է 522.0 մլն.դրամ կամ 20.0%, որը պայմանավորված է ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացմամբ պայմանավորված գործազրկության նպաստի չափի 3000 դրամով բարձրացմամբ (հաշվարկներում հաշվի է առնվել գործազուրկների միջին տարեկան թվաքանակը, որը կազմում է 14500 մարդ 12 ամսվա կտրվածքով՝ փաստացի գործազրկության նպաստի վճարման միջին տարեկան տևողությունը կազմում է 10 ամիս, արդյունքում նպաստ կվճարվի շուրջ 17400 անձանց:):

-«Գործազուրկների, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի և երկարամյա ծառայության ու արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չզբաղված անձանց մասնագիտական ուսուցում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 232.9 մլն դրամի չափով ծախս (ծրագրում ընդգրկվում են՝ գործազուրկներ, հաշմանդամներ, երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող անձինք): Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճել են 166.9 մլն. դրամ, պայմանավորված 2008 թվականին կնքված պայմանագրերով մեկ անձի միջին տարեկան ծախսին (ներառյալ կրթաթոշակը)՝ 170.0 հազ.դրամ, ավելացվել է նվազագույն աշխատավարձի բարձրացման կապակցությամբ աճի գումարը՝ 5.0 հազ.դրամ, պահպանվել է 2009-2011թթ. ՄԺԾԾ-ով հաստատված թվաքանակը՝ 1370 մարդ:

-«Այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկների նյութական ծախսերի հատուցում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 15.9 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճել են շուրջ 14.7 մլն. դրամով (2008թ.՝ 1.2 մլն. դրամ) պայմանավորված այլ վայր աշխատանքի գործուղվող անձանց թվաքանակի աճով 10 մարդով (2008թ. պետական բյուջեով՝ 20 մարդ), մեկ գործազուրկի հաշվով հաշվարկված փոխհատուցման միջին ծախսի աճով («Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 2335-Ն որոշմամբ սահմանված՝ « ամսական գումար բնակարանային վարձի և կոմունալ ծախսերի համար «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված ամսական աշխատավարձի չափով: 2009 թվականին նախատեսվում է այլ վայր աշխատանքի գործուղել 30 գործազուրկի: Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների ընտանիքի անդամների միջին թիվը հաշվարկվում է 4 անձ, հաշվարկներում հաշվի առնվել նաև գործուղման հետ կապված ծախսերի ավելացումը 0.7 մլն. դրամով:

-«Երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չզբաղված անձանց վերամասնագիտացում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 3.4 մլն դրամ: Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճել են 1.7 մլն.դրամով, որը պայմանավորված է նրանով որ պահպանվել է 2009-2011թթ. ՄԺԾԾ-ով հաստատված թվաքանակը (2008թ.՝ 20 մարդ) և 2008 թվականին կնքված պայմանագրերով մեկ անձի միջին տարեկան ծախսը (ներառյալ կրթաթոշակը)՝ 170.0 հազ.դրամ:

-«Աշխատաշուկայի հետազոտման և կանխատեսման աշխատանքների կազմակերպում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 5.0 մլն դրամի չափով ծախս: Սույն ծրագրի նպատակն է աշխատաշուկայի հետազոտման և կանխատեսման աշխատանքների կազմակերպման համար կատարել ուսումնասիրություն նախնական (արհեստագործական) ուսումնական հաստատու-

թյուններում անվճար ուսուցանվող մասնագիտությունների վերաբեյալ և աշխատաշուկայում զբաղվածության խնդիրները վեր հանելուն ուղղված նպատակային հետազոտություններ (2009-2011թթ. ՄԺԾԾ-ով մեկ հետազոտություն):

«Թափուր աշխատատեղերի տոնավաճառի կազմակերպման ծառայություններ» ծրագրով նախատեսվում է հատկացնել 4.2 մլն դրամ: Սույն ծրագրով նախատեսվում է 2009թ. 5 մարզում և Երևան քաղաքում՝ յուրաքանչյուրում կազմակերպել մեկ աշխատանքի տոնավաճառ, որի համար անհրաժեշտ կլինի `6 x 700.0= 4 200.0հազ. դրամ (մեկ աշխատանքի տոնավաճառ կազմակերպելու համար անհրաժեշտ է 20 ստենդ (մեկ հատը -25,0 հազ դրամ) 20x25.0= 500.0 հազ. դրամ, տարածքի վարձակալության համար – 200.0 հազ. դրամ):

-«Աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտա-կան վերապատրաստման և խորհրդատվության ծառայություններ» ծրագրի ծախսը կազմում է 15.8 մլն. դրամ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության (ՄԶԸ) միջև 2004թ.-ի հուլիսի 30-ին կնքված վարկային համաձայնագրի շրջանակներում Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի (ՍՊՈԿԾ) իրականացման նպատակով նախատեսվում է Գյումրի քաղաքում ստեղծել հաշմանդամ գործազուրկների համար մասնագիտական վերապատրաստման և աշխատանքային վերականգնման կենտրոն: Հաշվարկներում հաշվի է առնվել կենտրոնի շինարարական աշխատանքների ավարտման հետ կապված ժամկետը, որն ըստ պայմանագրի սահմանվել է 05.03.2009թ., հետևապես բոլոր հաշվարկները կատարվել են 10 ամսվա համար: Միաժամանակ, նկատի ունենալով, որ կենտրոնի կողմից սպասարկվող շահառուների թիվը կկազմի 1500 մարդ, հաշվարկներում հիմք է ընդունվել ներկայումս գործող «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվական ծառայություններ» ծրագրի հիմքուն դրված հաշվարկը, որով նույն շահառուների թվի համար հաստիքների թիվը 2008թ. կկազմի 9 մարդ:

-«Ներդրումներ «Հաշմանդամների աշխատանքային վերականգնման Գյումրիու կենտրոն» ՊՈԱԿ-ում» ծրագրով նախատեսվում է շուրջ 7.2 մլն դրամի չափով ծախս՝ կապիտալ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին:

Բնակարանային ապահովում

-«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարանի տրամադրում» ծրագրով նախատեսվում է 124.0 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2008թ. պետական բյուջեով նախատեսված չափը):

-«ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին բնակարանների, կահույքի, կենցաղային սարքերի և սարքավորումների տրամադրում» ծրագրով նախատեսվում է 335.1 մլն դրամի չափով ծախս (2007թ.՝ 368.4 մլն դրամ): Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ նվազում են շուրջ 33.3 մլն. դրամով, պայմանավորված ծրագրի շրջանակներում բնակարանների գնման նպատակով շահառուների թվաքանակի նվազմամբ 5 մարդով (2008թ. 50 շահառու), պահպանելով 2008թ. պետական բյուջեով նախատեսված բնակարանների միջին գինը 6.7 մլն.դրամ:

-«Զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովման և բկարանային պայմանների բարելավման համար» ծրագրով նախատեսվում է հատկացնել 3 000.0 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2008թ. պետական բյուջեով նախատեսված չափը):

-«Բնակարանային ապահովում բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով» ծրագրով նախատեսվում է հատկացնել 3675.0 մլն. դրամ (2008թ. պետական բյուջեով՝ 1630.0 մլն.դրամ):

-«Աղետի գոտում բնակելի շենքերի նորոգում և ամրացում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 770.0 մլն դրամի չափով ծախս:

Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)

-«Անօթևան մարդկանց ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 53.2 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 40.9 մլն դրամ): Ծախսերի աճը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ 12.3 մլն. դրամով պայմանավորված է ա/ կացարանի տեղերը 10 խնամվողով ավելացմամբ (2008թ.՝ 50 խնամվող)՝ 2.6 մլն. դրամ, բ/աշխատավարձի ծախսերի ավելացմամբ 3.3 մլն. դրամով կապված հաստիքների ավելացմամբ՝ 2 միավորով (2008թ.՝ 21 հաստիքային միավոր) և աշխատակիցների աշխատավարձի ծախսերի 20 տոկոսի չափով աճով, գ/սննդի գումարի 20 տոկոսի չափով բարձրացմամբ՝ 7.8 մլն. դրամ, որի արդյունքում մեկ օրվա սննդի ծախսը կկազմի 1161.2 հազ. դրամ 2008թ. 967.7 հազ. դրամի դիմաց, դ/ գազի սակագնի փոփոխությունը 12 ամսվա կտրվածքով հաշվելու հետ կապված՝ 0.2 մլն. դրամ:

-«Ներդրումներ «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում» ծրագրով նախատեսվում է 4.1 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 2.5 մլն. դրամ)՝ կապիտալ դրամաշնորհներ պետական ոչ

առևտրային կազմակերպություններին աճը կազմում է շուրջ 1.6 մլն. դրամով պայմանավորված կացարանի տեղերը 10 խնամվողով ավելացմամբ:

-«Բռնադատված քաղաքացիներին պատճառված վնասի դիմաց միանվագ դրամական փոխհատուցում» ծրագրով նախատեսվում է 1.6 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 2.6 մլն դրամ): Ծախսերի նվազումը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ շուրջ 1.0 մլն. դրամով պայմանավորված է միանվագ դրամական փոխհատուցում ստացող անձանց թվաքանակի 81 մարդով նվազմամբ (2008թ.՝ 214 մարդ):

-«ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում» ծրագրով նախատեսվում է 1566.3 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 1 272.6 մլն դրամ): Ծախսերի աճը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ կազմում է 293.7 մլն. դրամ, որը պայմանավորված է հետևյալով. ծրագրի իրականացման ընթացքում հաշվառված են շուրջ 59392 անձինք փոխհատուցման ենթակա շուրջ 13.2 մլրդ. դրամ գումարով, իսկ 01.07.08թ. դրությամբ վճարվել է 13332 անձանց փոխհատուցման գումարը, որի համար ծախսվել է 2.5 մլրդ դրամ: Հաշվի առնելով անցած տարիներին կատարված վճարումներն այսօր հաշվառված և փոխհատուցման իրենց հերթին սպասող 46059 անձնաց համար պահանջվում է շուրջ 10.6 մլրդ. դրամ ֆինանսական միջոցներ: Այսպիսով «ՀՀ 2006 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածով հաստատված ծրագրի 2-րդ մասով սահմանված առաջնահերթությունների առաջին խումբ «70 տարին լրացած և դրանից բարձր կենսաթոշակառու» սոցիալական խմբով (միայն մեկ սոցիալական խումբ) հաշվառված անձանց փոխհատուցման վճարումները հիմնականում ավարտված են, իսկ երկրորդ խմբի (մինչև 70 տարեկան կենսաթոշակառուներ (անձինք)) վճարումները մասամբ:

-Փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներ ծրագրով ծախս է նախատեսվել 14.1 մլն դրամ (պահպանվել է 2008թ. պետական բյուջեով նախատեսված չափը):

-«Փախստականների կեցության խնդիրների լուծման միջոցառումներ» ծրագրով նախատեսվում է հատկացնել շուրջ 11.0 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 9.7 մլն դրամ): Ծախսերի աճը 2008թ. պետկան բյուջեի նկատմամբ կազմում է 1.3 մլն. դրամ, որը պայմանավորված է նրանով, որ հաշվարկներում հաշվի է առնվել աշխատավարձի ծախսերի 20% չափով աճը՝ 0.8 մլն. դրամ, սննդի ծխասերի 20% չափով բարձրացումը՝ 0.5 մլն. դրամ:

-«Փախստականի կարգավիճակ հայցողին միանվագ նպաստ» ծրագրով ծախս է նախատեսվել 0.5 մլն դրամ (պահպանվել է 2008թ. պետական բյուջեով նախատեսված չափը):

-«Վետերանների պատվովճարներ» ծրագրով նախատեսվում է հատկացնել 924.2 մլն դրամի չափով ծախս: Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճում են 168.3 մլն.դրամի չափով (նկատի ունենալով 01.07.2008-ից վետերանների պատվովճարի ամսական չափի

բարձրացումը 2008թ. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից լրացուցիչ հատկացվեց 279.3, որից ելնելով ճշտված բյուջեի նկատմամբ նվազումը կազմում է 109.3 մլն. դրամ), որը պայմանավորված է 01.07.2008-ից վետերանների պատվովճարի ամսական չափի բարձրացմամբ և բազային բյուջեի ճշտմամբ, միաժամանակ պատվովճար ստացողների թվաքանակը նվազում ՝ 2449 մարդով (2008թ.՝ 6300 մարդ), անփոփոխ է թողնվել վետերանների պատվովճարի ամսական չափը՝ 20.0 հազ. դրամ:

-«Հայրենական Մեծ Պատերազմի վետերաններին, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում նշված պատճառներով հաշմանդամ դարձածներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության տրամադրում» ծրագրով ծախս է նախատեսվել 2513.1 մլն դրամ: Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճում են շուրջ 218.7 մլն.դրամով (2008թ. պետական բյուջեով 2 294.4 մլն. դրամ), որը պայմանավորված է դրամական օգնության չափերի բարձրացմամբ (գազի և ջրի թանկացումից կապված դրամական օգնության չափերը նախատեսվել է բարձրացնել՝

ա/ ՀՊ մասնակիցների նրանց հավասարեցված անձանց՝ 700 դրամով (գործողը՝ 3800 դրամ),

բ/ ՀՊ հաշմանդամներ և նրանց հավասարեցված անձանց, Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների ընտանիքի անդամներ /այրիներ և մանկուց հաշմանդամ երեխաներ՝ 1100 դրամով (գործողը՝ 5700 դրամ),

գ/ Հաշմանդամ զինծառայողներ (նրանց հավասարեցված անձիք) և զոհված (մահացած) զինծառայողների (նրանց հավասարեցված անձանց) ընտանիքներ՝1600դրամով (գործողը՝ 7500 դրամ),

դ/ 5 հոգուց ավելի զոհված (մահացած) զինծառայողների (նրանց հավասարեցված անձանց) ընտանիքների անդամների հինգից ավելի է, հինգից ավելի յուրաքանչյուր անձի համար լրացուցիչ՝ 500 դրամով (գործողը՝ 2500 դրամ):

Միաժամանակ դրամական օգնություն ստացողների թվաքանակը նվազում է 3110 մարդով (2008թ.՝ 29060 մարդ):

Սոցիալական ապշտպանությանը տրամադրող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)

-«Հաշմանդամների տվյալների տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 18.0 մլն. դրամի չափով ծախս (2008թ.՝ 17.8 մլն դրամ): Ծախսերի աճը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ կազմում է 0.2 մլն. դրամ, որը պայմանավորված է գործուղման հետ կապված ծախսերի ավելացմամբ:

-««ԲՍՓ ձևաթղթի տպագրության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 7.1 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2008թ. պետական բյուջեով նախատեսված չափը):

-«Գործազուկների տվյալների տեղեկատվական համակարգի /«Գործ» համակարգ/ վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 21.4 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 20.7 մլն դրամ): Ծախսերի աճը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ կազմում է 0.7 մլն. դրամ, որը պայմանավորված է գործուղման հետ կապված ծախսերի ավելացմամբ:

-«Սոցիալական ապահովության քարտերի համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ծրագրով նախատեսվում է շուրջ 147.0 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 144.6 մլն դրամ): Ծախսերի աճը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ կազմում է 2.4 մլն. դրամ, որը պայմանավորված է գործուղման հետ կապված ծախսերի ավելացմամբ:

-«Երեխաների տվյալների «Մանուկ» տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 15.2 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2008թ. պետական բյուջեով նախատեսված չափը):

-«Սոցիալական ապահովության առանձին ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 518.8 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 418.5 մլն դրամ): Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճել են 100.3 մլն. դրամով, պայմանավորված առանձին ծրագրերով նախատեսված ծախսերի ավելացմամբ (սույն ծրագրում ներառվել են «Հայաստանի զոհված ազգային հերոսների ընտանիքներին նպաստ»՝ 1.9 մլն. դրամ, «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշըպանության մասին» ՀՀ օրենքի (25.05.2005թ. ՀՕ-206-Ն) 36-րդ հոդվածով նախատեսված նպաստի վճարում»՝ շուրջ 0.1 մլն. դրամ, «Ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն»՝ 392.6 մլն. դրամ, «Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ»՝ 15.6 մլն. դրամ, «Երեխայի ծննդյան միանվագ նպաստ»՝ 48.9 մլն. դրամ, «Գործազկության նպաստ»՝ 40.7 մլն. դրամ և «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում»՝ 19.0 մլն. դրամ, ծրագրերով նախատեսված նպատակներին ուղղվող գումարների վճարման հետ կապված վճարման ծառայությունները):

-«Ընտանեկան նպաստի տվյալների տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 31.3 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 31.0 մլն դրամ): Ծախսերի աճը 2008թ. պետական բյուջեի

նկատմամբ կազմում է 0.2 մլն. դրամ, որը պայմանավորված է գործուղման հետ կապված ծախսերի աճով:

-«ՍՕՏԳ ձևաթղթի տպագրության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 17.4 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 11.5 մլն դրամ): Ծախսերի աճը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ կազմում է 5.9 մլն. դրամ, որը պայմանավորված է ձևաթղթերի գների փոփոխությամբ:

-«Երեխայի ծննդյան և խնամքի համար տրամադրվող նպաստների համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 9.5 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 9.1 մլն դրամ): Ծախսերի աճը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ կազմում է 0.4 մլն. դրամ, որը պայմանավորված է գործուղման հետ կապված ծախսերի աճով:

-«Բարեգործական ծրագրերի հաշվառման տեղեկատվական համակարգի համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ծրագրի ծախսը կազմում է 5.2 մլն. դրամ: Բարեգործներին և բարեգործական ծրագրերին վերաբերող տեղեկատվական շտեմարանի վարման նպատակով 2008թ. նախարարությունում կներդրվի համապատասխան տեղեկատվական համակարգ, որի ձևավորման աշխատանքներն սկսվել են դեռևս 2006թ.: Այդ տեղեկատվական համակարգի միջոցով «Բարեգործության մասին» ՀՀ օրենքով և օրենսդրական այլ ակտերով սահմանված կարգով իրականացվելու է սոցիալական ոլորտում նախատեսվող բարեգործական ծրագրերի, դրանցում ընդգրկվող շահառուների հաշվառում, ծրագրերը բարեգործական որակելու վերաբերյալ եզրակացությունների պատրաստում, վերլուծությունների կատարում, իրականացվող ծրագրերի արդյունավետության և հասցեականության ապահովում:

-«ՀՀ աշխատանքի պետական տեսչության տեղեկատվական համակարգի համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ » ծրագրի ծախսը կազմում է 5.7 մլն. դրամ: Նորաստեղծ աշխատանքի պետական տեսչության կողմից հավաքագրվող տեղեկատվության մշակման, աշխատանքների կանոնակարգման և վերահսկողության բարձրացման նպատակով արդեն ստեղծվել և կներդրվի նոր տեղեկատվական համակարգ: Համակարգը նախատեսում է հիմնականում 2 գործառույթների ավտոմատացում, առաջինը՝ գործատուներից ստացվող տեղեկատվության հաշվառումը, երկրորդը՝ ԱՊՏ կողմից իրականացվող ստուգումների արդյունքները:

«Աշխատանքի տեսչություն» տեղեկատվական համակարգի հիմնական նպատակն է Աշխատանքի պետական տեսչության տեղեկատվական հոսքերի արդյունավետ կառավարումը՝ ավելի քան 100000 տնտեսվարող սուբյեկտներին վերաբերվող տեղեկատվության

շրջանառություն ապահովմամբ, օգտագործելով տարածքային և կենտրոնական տվյալների շտեմարանները:

Նշված համակարգը նպատակ ունի հեշտացնել և արդյունավետ դարձնել ԱՊՏ կողմից վարվող վարչական վիճակագրական հաշվետվությունների պատրաստման, ուսումնասիրության, վերլուծության և տեղեկատվության գործընթացը:

-«Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում» ծրագրով նախատեսվում է 84.5 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 62.0 մլն դրամ): Ծախսերի աճը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ կազմում է 22.5 մլն. դրամ, որը պայմանավորված է ա/ Ինստիտուտի աշխատակիցների աշխատավարձի ծախսերի բարձրացմամբ 20% չափով (հաշվարկներում հաշվի է առնվել նաև ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացումը 5.0 հազ. դրամով 2008թ. 25.0 հազ. դրամի դիմաց), որի արդյունքում միջին ամսական աշխատավարձը հաստիքային աշխատողների մասով կկազմի 69.8 հազ. դրամ (2008թ.՝ 58.5 հազ. դրամ), բ/ նոր կառուցված կաթսայատան շահագործման հետ կապված ծախսերի ներառմամբ 7.6 մլն. դրամ, գ/նոր բաղադրիչի՝ «Ժողովրդագրական քաղաքականության ազդեցությունների վերլուծություն և գնահատում» հետազոտության ներառմամբ 12.9 մլն. դրամով, դ/ գործուղման հետ կապված ծախսերի ավելացմամբ շուրջ 2.0 մլն. դրամի չափով:

-«Ներդրումներ «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ում» ծրագրով նախատեսվում է 1.3 մլն դրամի չափով ծախս՝ կապիտալ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին (պահպանվել է 2008թ. պետական բյուջեով նախատեսված չափը):

-«Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսվում է 26.1 մլն դրամի չափով ծախս (2008թ. պետական բյուջեով 15.3 մլն. դրամ): Ծախսերի աճը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ կազմում է 10.8 մլն. դրամ, որը պայմանավորված է հետևայլով.

ա/ 10.0 մլն. դրամի աճը կապված է հեռուստաընկերության կողմից առաջարկված հեռարձակման ռոպեավճարի սակագնի 10.0 հազ.դրամով (2008թ. ռոպեավճարի սակագինը՝ 10.0 հազ.դրամ) բարձրացմամբ, ինչպես նաև նախարարության կողմից հեռուստաընկերության առջև որակյալ հեռուսահաղորդումներ իրականացնելու նպատակով դրվել են լրացուցիչ նոր խնդիրներ՝ հաղորդման գլխագրի պատրաստում, օպերատորների քանակի ավելացում, անոնսների պատրաստում և հեռարձակում, ռեպորտաժներ նկարահանելու նպատակով հանրապետության մարզեր այցելելու համար տրանսպորտային և այլ լրացուցիչ ծախսերի ավելացում:

բ/ 0.8 մլն. դրամի աճը կապված է թրաֆիկինգի դեմ պայքարում բնակչության դիմելիության ավելացման նպատակով լայնորեն տարածել տեղեկատվություն հանրապետությունում տրամադրող սոցիալական աջակցության, զբաղվածության հարցերով և առողջապահական անվճար ծառայությունների մասին տեղեկատվությունը (հիմք՝ ՀՀ կառավարության 06.12.2007թ. N1598-Ն որոշման հավելված N2-ով նախատեսված միջոցառումները):

«Փախստականների և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվության կուտակում» ծրագրով նախատեսվում է 44.1 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 35.5 մլն դրամ): Ծախսերի աճը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ կազմում է 8.7 մլն. դրամ, որը պայմանավորված է նրանով, որ հաշվարկներում ներառվել են աշխատավարձի ծախսերի բարձրացումը 20% չափով (հաշվի է առնվել նաև ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացումը 5.0 հազ. դրամով 2008թ. 25.0 հազ. դրամի դիմաց), որի արդյունքում միջին ամսական աշխատավարձի չափը կկազմի 80.4 հազ. դրամ (2008թ. 67.0 հազ. դրամ) և առանձին հոդվածների գծով ծախսերի ավելացմամբ:

-«Ներդրումներ «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ում» ծրագրով նախատեսվում է 5.4 մլն դրամի չափով ծախս՝ կապիտալ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին:

-«Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարում» ծրագրով նախատեսվում է 2 363.1 մլն դրամի չափով ծախս (2008թ.՝ 2 242.8 մլն դրամ): Ծախսերը 2008 թվականի համեմատությամբ աճել են 120.2 մլն. դրամով, պայմանավորված նրանով, որ պահպանվել է. ա) ժամանակավոր անաշխատունակության 2006 թվականների փաստացի օրերի աճի տեմպը 2005թ. փաստացիի նկատմամբ՝ 1.7%, արդյունքում օրերի թիվը 2009թ. կկազմի 875825 օր (2008թ. բյուջեով նախատեսված 860889 օր x 1.7%), բ) պահպանվել է 2008թ. պետական բյուջեով նախատեսված ժամանակավոր անաշխատունակության միջին օրական նպաստի չափի աճի տեմպը՝ 3.6%, արդյունքում միջին օրական նպաստի չափը կկազմի 2699 դրամ (2008թ. պետական բյուջեով նախատեսված 2605.2 դրամ x 3.6 %):

-«Կենսաթոշակների նշանակման ու վճարման «Արաքս» համակարգչային համակարգի ծրագրային սպասարկման ապահովման ծառայություններ» և «Անհատական (անձնավորված) հաշվառման «Պառնաս» համակարգչային համակարգի ծրագրային սպասարկման ապահովման ծառայություններ» ծրագրերի ծախսերը համապատասխանաբար կազմում են 20.0 մլն. դրամ և 40.0 մլն. դրամ:

Կենսաթոշակաների՝ օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակումը, վերահաշվարկումը և վճարումը իրականացվում է «Արաքս» տեղեկատվական համակարգի

միջոցով, ինչն ապահովում է կենսաթոշակառուների և կենսաթոշակի իրավունք տվող տվյալների հաշվառումը, կենսաթոշակի վճարման ցուցակների տպագրությունը և այլն:

Քաղաքացիների կենսաթոշակային իրավունքները հաշվառելու նպատակով վարվում է նաև «Պառնաս» տեղեկատվական համակարգը, ինչը տվյալներ է ներառում պարտադիր կենսաթոշակային ապահովագրության ենթակա անձանց, նրանց աշխատանքային կենսագործունեության և կատարած պարտադիր սոցիալական ապահովության վճարների չափի մասին: «Պառնաս» տեղեկատվական համակարգի գործառույթային նպատակները, խնդիրները, ներառվող տեղեկատվությունը սահմանված են «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2005թվականի մայիսի 12-ի թիվ 938-Ն որոշմամբ:

Նշված ծրագրերի ծախսերը 2008 թվականին ներառվել է ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության ապարատի պահպանման ծախսերում:

-«Ժամանակավոր անաշխատունակության թերթիկների տպագրություն» և «Կենսաթոշակի նշանակման և վճարման համար անհրաժեշտ ձևաթղթերի տպագրություն» ծրագրերի ծախսերը համապատասխանաբար կազմում են 21.6 մլն. դրամ և 2.0 մլն. դրամ:

Համաձայն «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի՝ ապահովագրական նպաստի (հղիության և ծննդաբերչության նպաստ, ժամանակավոր անաշխատունակության նպաստ) նշանակման համար հիմք է համարվում բժշկական հաստատության կողմից տրվող ժամանակավոր անաշխատունակության թերթիկը, իսկ ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 30-ի N 571-Ն որոշման N 7 հավելվածի համաձայն՝ ժամանակավոր անաշխատունակության թերթիկների ձևաթղթերի տրամադրումն ապահովում է ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամը (ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1531-Ն որոշմամբ վերակազմակերպվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության):

Քաղաքացիներին կենսաթոշակ նշանակելու, վերահաշվարկելու և վճարելու գործընթացում կիրառվում են ձևաթղթեր (դիմումի ձև, կենսաթոշակառուի վկայական, ծանուցագրեր և այլն, շուրջ 8 ձևաթուղթ), որոնց ձևերը սահմանված են ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 29-ի թիվ 793-Ն որոշմամբ:

-«Կենսաթոշակային ապահովության և ապահովագրության ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների ձեռբերում» ծրագրով նախատեսվում է 2 312.1 մլն դրամի չափով ծախս (2008թ. պետական բյուջեով 2 052.1 մլն. դրամ): Ծախսերի աճը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ 260.0 մլն. դրամով պայմանավորված է կենսաթոշակներին ուղղվող գումարի փոփոխությամբ (սույն ծրագրում ներառվել են «Սպայական անձնակազմի զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ»՝ 99.8 մլն. դրամ, «Շարքային

զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ»՝ 46.1 մլն. դրամ, «Սոցիալական կենսաթոշակներ»՝ 87.4 մլն. դրամ, «Ապահովագրական կենսաթոշակներ»՝ 2 075.9 մլն. դրամ և «ՀՀ օրենքներով և կառավարության որոշումներով նշանակված կենսաթոշակներ»՝ շուրջ 3.0 մլն. դրամ ծրագրերով նախատեսված կենսաթոշակներին ուղղվող գումարների վճարման հետ կապված վճարման ծառայությունները):

-«Ընտանեկան նպաստի և դրամական օգնության տրամադրման հետ կապված վարչարարական ծառայություններ» ծրագրով ուղեկցման ծախսերի համար գումար է նախատեսվում է 23.7 մլն. դրամ, որը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ աճում է 4.6 մլն. դրամով կապված գործուղման ծախսերի ավելացմամբ:

-«Վարձատրվող հասարակական աշխատանքների կատարման հետ կապված վարչարարական ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 10.5 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2008թ. պետական բյուջեով նախատեսված չափը):

-«Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 10.06.1993 թ. ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 14.6 մլն դրամի չափով ծախս (2008թ. պետական բյուջեով 14.1 մլն. դրամ): Ծախսերի աճը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ կազմում է 0.5 մլն. դրամ պայմանավորված գործուղման հետ կապված ծախսերի ավելացմամբ:

-«Վետերանների պատվովճարի և ՀՀ պատերազմի վետերաններին ու 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում նշված անձանց ընտանիքներին դրամական օգնության տրամադրման հետ կապված վճարման ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 39.4 մլն դրամի չափով ծախս (2008թ. պետական բյուջեով 35.5 մլն. դրամ): Ծախսերի աճը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ 3.9 մլն. դրամով պայմանավորված է պատվովճարի և դրամական օժանդակությանն ուղղվող գումարների ավելացմամբ (սույն ծրագրում ներառվել են «Վետերանների պատվովճարի»՝ 9.2 մլն. դրամ և «ՀՄ պատերազմի վետերաններին, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում. նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության տրամադրում»՝ 30.2 մլն. դրամ ծրագրերով նախատեսված վճարման հետ կապված վճարման ծառայությունները):

-«Սոցիալական ապահովության քարտերի համակարգի հետ կապված վարչարարական ծառայություններ» ծրագրով ուղեկցման ծախսերի համար գումար է նախատեսվում է 6.5 մլն. դրամ (2008թ. պետական բյուջեով 5.6 մլն. դրամ), որը 2008թ. պետական բյուջեի նկատմամբ աճում է 0.9 մլն. դրամով կապված գործուղման ծախսերի ավելացմամբ:

-«Թրաֆիքինգի դեմ պայքարի նպատակով բրոշուրների, տեղեկատվական թերթոնների մշակում և հրատարակում» ծրագրի համար ծախսը կազմում է 6.0 մլն. դրամ:

-«Թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ» ծրագրի ծախսը կազմում է 16.4 մլն. դրամ: Վերականգնողական և աջակցության կենտրոնի նպատակն է՝ ապահովել թրաֆիքինգի զոհերի պաշտպանությունը և նրանց մատչելի, բազմակողմանի և օպերատիվ աջակցության կազմակերպումը: Ծրագիրը «Ամքոր» միջազգային հասարակական կազմակերպության հետ իրականացվելու է 50% համաֆինանսավորման սկզբունքով (ամբողջ ծրագրի արժեքը կազմում է 32.89 մլն.դրամ):

-«Աշխատողների աշխատանքային պարտավորությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման հետ կապված վճարման ծառայություններ» ծրագրի ծախսը կազմում է 1.2 մլն. դրամ (2008թ. պետական բյուջեով մլն. դրամ): Ծախսերի աճը 2008թ. նկատմամբ 0.2 մլն. դրամով պայմանավորված է վնասի փոխհատուցմանն ուղղվող գումարի փոփոխությամբ:

-«Այլ օբյեկտների շինարարություն» ծրագրով նախատեսվում է 266.2 մլն. դրամի չափով ծախս, որով նախատեսվում է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի նոր ննջարանային և Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքերի կառուցում:

-«Այլ օբյեկտների հիմնանորգում» ծրագրով նախատեսվում է շուրջ 80.0 մլն. դրամի չափով ծախս, որով նախատեսվում է «Միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վետերան օթևան» կացարանի կողմից զբաղեցված շենքի հիմնանորոգում:

Բացի այդ, 2009 թվականին սոցիալական ապահովության ոլորտում Համաշխարհային բանկի աջակցությամբ նախատեսվում է իրականացնել նաև **Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման վարկային ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն),** որի նպատակն է բնակչության աղքատ և խոցելի խավի սոցիալական պաշտպանվածության բարձրացումը: Ծրագիրն ուղղված է ժամանակակից սոցիալական ապահովության կառավարման համակարգի ստեղծմանը, որը հնարավորություն կտա ոչ միայն պետական սոցիալական ծրագրերի արդյունավետ կառավարման և վերահսկողության իրականացման համար, այլ նաև հիմք կհանդիսանա աղքատ ընտանիքներին և բնակչության առանձին խմբերին բարելավված սոցիալական ծառայություններ մատուցելու համար:

Ծրագրի շրջանակներում 2009 թվականին նախատեսվում է շարունակել և ավարտին հասցնել ընդհանուր աջակցության տրամադրումը սոցիալական պաշտպանության ոլորտին, այդ թվում՝ տեղեկատվական հոսքերի կորպորատիվ ցանցի ստեղծում և ներդրում, ոլորտում կառավարման տեղեկատվական համակարգի կատարելագործում, զբաղվածության ծառայությունների բարելավում, հաշմանդամ գործազուրկների համար աշխատանքային վերականգնման կենտրոնների ստեղծում, գործազուրկ երիտասարդների համար մասնագիտական կողմնորոշման ծառայությունների մատուցում, ՀՀ աշխատանքի պետական տեսչության տեխնիկական հզորացում, կենսաթոշակային արդիական համակարգի ստեղծման նպատակով կենտրոնացված գրանցման համակարգի ստեղծում, սոցիալական աջակցության կենտրոնական և տեղական բաժանմունքների աշխատակիցների ուսուցում, գործազուրկների վերապատրաստման դասընթացների կազմակերպում, խորհրդատվական և ուսուցողական այլ աշխատանքների իրականացում:

Սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերի համեմատությունը՝ 2007 թվականի փաստացի, 2008 թվականի և 2009 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ, արտացոլված են սույն բացատրագրի N14 աղյուսակում:

Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2009 թվականի տարեկան ծրագիրը, երեխաների իրավունքների պաշտպանության 2009 թվականի տարեկան ծրագիրը և զբաղվածության կարգավորման 2009 թվականի պետական ծրագիրը արտացոլված են սույն բացատրագրի համապատասխանաբար NN 4-րդ, 5-րդ և 6-րդ հավելվածներում:

➡Հ<u>այաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ոլորտի «Աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին»</u> ծախսային ծրագրի իրականացման համար Նախագծով նախատեսվել է 573.5 մլն դրամ, որի հաշվին նախատեսվում է իրականացնել ծրագրային միջոցառումների գծով հայտերում ընդգրկված հետևյալ աշխատանքների ֆինանսավորումը՝

- ՓՄՁ ԶԱԿ կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի ամրապնդում ու դրանց գործունեության ընդլայնում՝ 63.5 մլն դրամ,
- ՓՄՁ սուբյեկտների կապիտալի ֆինանսավորման ծրագիր 240,0 մլն դրամ,
- Արտահանող ՓՄՁ սուբյեկտների ֆորվարդային համաձայնագրերի ֆինանսավորման ծրագիր՝ 60.0 մլն դրամ,
- սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն՝ 60.0 մլն դրամ,
- ՓՄՁ սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն՝ 5.0 մլն դրամ,
- ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջմղմանն աջակցություն՝ 18.0 մլն դրամ,
- ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն՝ 19.0 մլն դրամ,
- ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական աջակցություն՝ 8,0 մլն դրամ,

- Ծրագիրն իրականացնող անձնակազմի և փորձագետների վարձատրությանն ուղղված միջոցներ՝ 100.0 մլն դրամ:

Ծրագրի իրականացման նպատակն է՝ ՓՄՁ սուբյեկտներին տեխնիկական, ֆինանսական և ներդրումային աջակցության ցուցաբերում:

➡**«ՀՀ զբոսաշրջության ոլորտի»** իրականացման համար Նախագծով նախատեսվել է՝ 263.0 մլն դրամ, այդ թվում՝

- **«Զբոսաշրջության աջակցության ծառայություններ»** ծախսային ծրագրի գծով Նախագծով նախատեսվել է՝80.0 մլն դրամ: Նշված հատկացումների հաշվին նախատեսվում է իրականացնել զբոսաշրջային ոլորտի.

ա) գովազդա-տեղեկատվական ապահովման համակարգի կատարելագործում՝ 42.4 մլն դրամ, որից՝

- գովազդային նյութերի մշակում, պատրաստում, տպագրում և բաշխում՝5.8 մլն դրամ,
- օտարերկրյա լրագրողների և տուրօպերատորների Հայաստան այցելությունների կազմակերպում՝ 5.2 մլն դրամ,
- զբոսաշրջային ցուցահանդեսներին մասնակցություն՝ 27.0 մլն դրամ,
- ավանդական տոնակատարությունների կազմակերպում և անցկացում՝ 4.4 մլն դրամ,

բ) զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային ուսումնասիրությունների իրականացում՝ 7.2 մլն դրամ:

գ) Միջազգային համագործակցություն՝ 8.7 մլն դրամ:

դ) Ծրագրային միջոցառումների իրականացման աշխատանքների վարձատրություն՝ 21.7 մլն դրամ:

- **«Հայաստանը միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջային երկիր»** գովազդային ծառայություններ ծախսային ծրագրով Նախագծով նախատեսվել է՝ 158.0 մլն դրամ, որից 2009թ. ընթացքում նախատեսվում է նպատակաուղղել՝

- ՍԻ ԷՆ ԷՆ և Եվրոնյուզ հեռուստաալիքներով Հայաստանը ներկայացնող և գովազդող հոլովակների պարբերաբար հեռարձակմանը, այդ թվում՝
- ՍԻ ԷՆ ԷՆ հեռուստաալիքով հեռարձակմանը՝ 91.0 մլն դրամ,
- Եվրոնյուզ հեռուստաալիքով հեռարձակմանը՝ 67.0 մլն դրամ:

- **«Հայաստանը ներկայացնող վավերագրական ֆիլմի նկարահանում և միջազգային հեղինակավոր հեռուստաալիքով հեռարձակում»** ծախսային ծրագրի գծով Նախագծով նախատեսվել է՝ 25.0 մլն դրամ: Ծրագրի իրականացման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 17.04.08թ. N 412-ն որոշման 1-ին մասի 3-րդ կետի դրույթը, համաձայն որի նախատեսված է պայմանագրային գնի (225.0 հազ եվրո) 25 %-ը վճարել 2009 թ- ին /փոխարժեքը հաշվարկվել է՝1- ԵՎՐՈՆ = 442.89 ՀՀ դրամ/, իսկ անհրաժեշտ գումարը նախատեսել 2009 թ-ի բյուջեի հայտով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվել է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- 52 որպե տևողությամբ վավերգրական կինոնկար,
- Հայաստանը ներկայացնող 120 վայրկյան տևողությամբ հոլովակ:

➡<u>Ստանդարտացման ոլորտի «Ստանդարտների մշակման ծառայություններ»</u> ծախսային ծրագիրը շարունակական է: Ծրագրի իրականացման համար Նախագծով նախատեսվել է՝ 41.0 մլն դրամ, որից նախատեսվել է ուղղել ծրագրային հետևյալ միջոցառումների ֆինանսավորմանը.

1. 20.0 մլն դրամ՝ Ազգային ստանդարտների մշակմանը,
2. 5.0 մլն դրամ՝ Միջպետական և միջազգային ստանդարտացման աշխատանքների կազմակերպմանը.
3. 8.6 մլն դրամ՝ Ստանդարտացման ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքների կազմակերպմանը:

Ծրագրի իրականացման նպատակն է՝ ՀՀ ստանդարտացման բնագավառի միջազգային և եվրոպական համակարգերին ինտեգրումն է, որը կնպաստի սպառողների շահերի պաշտպանությանը՝ անվտանգ ապրանքների ձեռք բերման հարցերում, կապահովի հայրենական արտադրողների կողմից մրցունակ ապրանքների արտադրմանը և ծառայությունների մատուցմանը:

➡<u>Չափագիտության ոլորտի</u> **«Չափումների միասնակայնության ապահովման ծառայություններ»** ծախսային ծրագիրը նույնպես շարունակական է: Նշված ծրագրի իրականացման համար Նախագծով նախատեսված է՝ 21.5 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվել է նպատակաուղղել.

⇝ 10.7մլն դրամ՝ ազգային էտալոնների ստեղծման, ձեռքբերման, կատալերագործման, պահպանման, տեխնիկական սպասարկման և միջպետական էտալոնների բաղդատման, միասնական ժամանակի և հաճախականության չափումների ապահովմանը,

⇝ 7.0 մլն դրամ՝ հետազոտական աշխատանքների կատարմանը,

⇝ 3.0 մլն դրամ չափագիտության բնագավառի նորմատիվ, իրավական փաստաթղթերի մշակմանը:

Ծրագրի իրականացման նպատակն է՝

⇒ ապահովել օրենսդրորեն կանոնակարգվող ոլորտներում չափումների միասնականության ապահովման պահանջվող ճշտությունը, հավաստիությունը և համադրելիությունը,

⇒ ապահովել տնտեսության առավել կարևոր ճյուղերում ներդրվող ժամանակակից տեխնոլոգիաների չափագիտական սպասարկումը,

⇒ բացառել հանրապետության կախվածությունը այլ երկրներից՝ բարձր ճշտության ճափումների կատարման հարցում:

➡<u>ՀՀ տեխնիկական կանոնակարգերի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման վերահսկողության ոլորտի «Արտադրանքի որակի փորձաքննության ծառայություններ»</u> ծախսային ծրագիրը շարունակական է, որի իրականացման համար Նախագծով նախատեսվել է՝ 61.0 մլն դրամ: Նշված ծախսային ծրագրով նախատեսված

գումարը նպատակաուղղվելու է արդյունաբերական ապրանքների փորձանմուշների գնմանը և հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում դրանց փորձարկումների իրականացմանը:

Ծրագրի իրականացման նպատակն է՝ ՀՀ-ում ապրանք արտադրողների և ծառայություն մատուցողների կողմից սպառողներին իրացվող արտադրանքի նկատմամաբ պետական վերասկողության իրականացումը ստանդարտացման և չափագիտական նորմերի ապահովման միջոցով, ինչպես նաև «Երկրի համբավ» տեսանկյունից արտահանվող արտադրանքի նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջներին համապատասխանության վերահսկողության իրականացման ապահովումը:

➡**«Գյումրիում գործարար միջավայրի զարգացման ոլորտի «Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման»** ծախսային ծրագիրը շարունակական է: Ծրագրի իրականացման համար Նախագծով նախատեսվել է՝ 80.0 մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվել է իրականացնել ծրագրային հետևյալ միջոցառումները.

- տեխտոպարկի գործունեության կառավարում՝ 9.0 մլն դրամ,
- տեղական և միջազգային ճանաչում ունեցող ընկերությունների հետ համատեղ ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաների համաֆինանսավորում՝ 30.0 մլն դրամ,
- գիտահետազոետական ծրագրերի անցկացում՝ 41.0 մլն դրամ:

Ծրագրի իրականացման նպատակն է՝ Գյումրու Տեխնոպարկի ներքո ինովացիոն համակարգի ձևավորումը:

➡**Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) զարգացման ոլորտի «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ»** ծախսային ծրգիրը նույնպես շարունակական է: Նախագծով նշված ծրագրի իրականացման համար նախատեսվել է՝ 250.0մլն դրամ : Այս ծրագրի շրջանակներում նախատեսվել է.

↱ Երևանի մերձակայքում ՏՀԲՏ տեխնոլոգիական ավանի հիմնման նախագծում՝ 100.0 մլն դրամ,

↱ ՏՏ ձեռներեցության զարգացման ներդրումային հիմնադրամի հիմնման նախագծում 50.0 մլն դրամ,

↱ Հայաստանում և արտերկրում ՏՏ ոլորտի ներկայացման և խթանման, միջազգային համագործակցության, հետազոտության, հասարակական իրազեկում՝ 100.0 մլն դրամ:

Ծրագրի իրականացման նպատակն է՝ նպաստավոր միջավայր ապահովել Հայաստանում գիտատար տնտեսության զարգացման, ընդհանուր տնտեսության մրցունակության բարձրացման, ՏՀՏ կիրառման ընդլայնման համար:

➡ «**Շանհայ էքսպո 2010» համաշխարհային ցուցահանդեսի կազմակերպման»** ծախսային ծրագիրը նոր ծրագիր է, որի իրականացման համար Նախագծով նախատեսվել է՝ 85.8մլն դրամ:

Ծրագրի իրականացման նպատակն է՝ ներկայացնելու պետության հայացքները, տեղը համաշխարհային ինտեգրման համակարգում, մշակույթը, պատմությունը, տնտեսական և մտավոր ներուժը, ինչպես նաև ստեղծել գործարար կապեր, ցուցադրել հայկական արտադրանքը, բացահայտել հայկական արտադրանքի նոր շուկաներ:

Այս ոլորտների Նախագծով նախատեսված ծախսերի համեմատությունը՝ 2007թ. բյուջետային տարվա փաստացի և 2008թ. բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված են սույն բացատրագրի N0 3 աղյուսակում:

➡**Տեխնիկական անվտանգության կանոնակարգման» ոլորտի «Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ»** ծախսային ծրագիրը շարունակական է, որի իրականացման համար Նախագծով նախատեսվել է՝ 52.3 մլն դրամ: Նշված ծրագրի անհրաժեշտությունը պայմանավորված է 24.10.2005թ. ընդունված և 01.01.2006թ. ուժի մեջ մտած «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի պահանջներով:

Ծրագրի իրականացման նպատակը «Հայաստանի Հանրապետության տարածքում տեխնածին վթարների կանխարգելումն է, դրանց հետևանքների վերացումը, նման վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցումը, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Այս ոլորտի Նախագծով նախատեսված ծախսերի համեմատությունը՝ 2007թ. բյուջետային տարվա փաստացի և 2008թ. բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված են սույն բացատրագրի N0 3ա աղյուսակում (առանց վարկային ծրագրերի):

Գյուղատնտեսության ոլորտի համար (առանց նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ստացվող միջոցների և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) ՀՀ 2009թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 8202.3 մլն դրամ, 2008թ. հաստատված բյուջետային տարում սահմանված՝ 7646.4 մլն դրամի դիմաց:

2009 թ. նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը, այդ թվում՝

04.02.01 Գյուղատնտեսության բնագավառում հատկացումներն ուղղվելու են.

1. Հողերի ագրոքիմիական հետազոտությունների կատարման, բերրիության բարձրացման միջոցառումներ՝ 52.6 մլն դրամ – ծախսային ծրագրով նախատեսվող գումարը նպատակաուղղվելու է՝ ագրոքիմիական դաշտային հետազոտություններ՝ 174 համայնքներում, 104.2 հազ. լաբորատոր փորձաքննության կատարում, քարտեզների և մշակաբույսերի պարարտացման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերի կազմում միջոցառումների իրականացմանը:

Նախագծով նախատեսվող գումարի աճը (10,3 մլն դրամի չափով) 2008թ. հաստատված բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ պայմանավորված է աշխատավարձի աճով, ինչպես նաև գործուղման ծախսերի նորմատիվների փոփոխությամբ:

2.*Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանման, բարելավման և ինժեներական կառուցվածքների վերականգնում՝ 844.7 մլն դրամ* - ծախսային ծրագրով նախատեսվում է իրականացնել ՀՀ Արմավիրի մարզում Արաքս գետի 2,2 կմ հատվածի ափապաշտպան կառուցվածքների վերականգնման, Վեդի գետի 8 կմ հատվածի հունի մաքրման և 5 կմ հատվածի ափերի ամրացման աշխատանքներ:

Նախագծով նախատեսված գումարի աճը 2008թ. հաստատված բյուջեի նկատմամբ պայմանավորված է գետերի և հեղեղատարների հուների մաքրման և ափերի ամրացման աշխատանքների ծավալների ավելացմամբ:

3. Բույսերի կարանտինի և գյուղմշակաբույսերի բուսասանիտարական վիճակի մոնիտորինգի, լաբորատոր փորձաքննությունների հիման վրա կանխարգելիչ և ախտորոշիչ ծառայությունների իրականացում՝ 89.0 մլն դրամ – ծախսային ծրագրով նախատեսվող գումարը նպատակաուղղվելու է՝ 246 հազ. հա դաշտային հետազոտության, թունանյութերի 8000 անգամ լաբորատոր փորձաքննության, բույսերի կարանտին առավել վտանգավոր օրգանիզմների վարակի հայտնաբերման նպատակով 600 հատ փորձանմուշների լաբորատոր փորձաքննության միջոցառումների իրականացմանը:

4. Բույսերի պաշտպանության միջոցառումներ՝ 300.0 մլն դրամ - ծախսային ծրագրով նախատեսվող գումարը նպատակաուղղվելու է գյուղատնտեսական մշակաբույսերի զանգվածային տարածված և վնասակար օրգանիզմների դեմ բույսերի պաշտպանության միջոցառումների՝ պայքար մկնանման կրծողների դեմ 40 հազ. հա վրա, պայքար մորեխների դեմ՝ 7 հազ. հա վրա, անտառի վնասակար օրգանիզմների դեմ 18.3 հազ. հա վրա իրականացմանը:

5. Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 1531.4 մլն դրամ և Ներդրումներ «Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ում՝ 54.4 մլն դրամ - ծախսային ծրագրով նախատեսվող գումարը նպատակաուղղվելու է կենդանիների վարակիչ (դաբաղ, սիբիրախտ, խշխշան պալար, տավարի, խոզի ու թռչունների ժանտախտ) և ոչ վարակիչ (բրուցելյոզ, տուբերկուլյոզ, պաստերելյոզ, լեյկոզ) հիվանդությունների կանխատեսման և վերացման միջոցառումների (11069.9 հազ. հակահամաճարակային պատվաստումների իրականացման համար պատվաստանյութերի ձեռքբերում), և ավտոմատ, անասեղ ներարկիչների, վակցինաների պահպանման համար անհրաժեշտ սառնարանների և ռեֆռեժերատորի ձեռքբերման համար:

Նախագծով նախատեսվող գումարի աճը (205 մլն դրամի չափով) 2008թ. հաստատված բյուջեի նկատմամբ պայմանավորված է՝ 2009թ-ից պատվաստանյութերի նկատմամբ ԱԱՀ-ի արտոնության վերացման հետ կապված փոխհատուցման նախատեսմամբ՝ 159.5 մլն դրամ, գործող անասնաբույժների աշխատավարձի ավելացմամբ /37.5 մլն դրամ/ և ավտոմեքենա սառնարանի ձեռքբերմամբ:

6. Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի փորձաքննության միջոցառումների իրականացում՝ 217.4 մլն դրամ: ծախսային ծրագրով նախատեսվող գումարը նպատակաուղղվելու է

անասնաբուժական փորձաքննություններ՝ 169,7 մլն դրամ, դաբաղի և խոզերի ժանտախտի սերոմոնիտորինգ՝ 12.4 մլն դրամ, պատվաստանյութերի և ախտահանիչների պահպանության ու բաշխման համար՝ 2.2 մլն դրամ միջոցառումների իրականացմանը:

Նախագծով նախատեսվող գումարի աճը (33.1 մլն դրամի չափով) 2008թ. հաստատված բյուջեի նկատմամբ պայմանավորված է աշխատավարձի աճով, ինչպես նաև գործուղման ծախսերի նորմատիվների փոփոխությամբ:

7. Անասնաբուժական ոստիկանական դասակի ծառայությունների համար նախատեսվում է հատկացնել 29.9 մլն դրամ՝ ծախսային ծրագրով նախատեսվող գումարը պայմանավորված է ՀՀ ոստիկանության հետ կնքված պայմանագրի համաձայն:

8. Տարածաշրջանային լաբորատորիաների շենքերի հիմնանորոգում - 210.0 մլն դրամ ծախսային ծրագրով նախատեսվում է իրականացնել «Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ի ՀՀ Արագածոտնի մարզի՝ Թալինի, ՀՀ Արարատի մարզի՝ Արարատի, ՀՀ Արմավիրի մարզի՝ էջմիածնի, ՀՀ Շիրակի մարզի՝ Ախուրյանի և Անիի, ՀՀ Վայոց Ձորի մարզի՝ Եղեգնաձորի և ՀՀ Սյունիքի մարզի՝ Մեղրիի տարածաշրջանային անասնաբուժական լաբորատորիաների հիմնանորոգման աշխատանքներ:

9. Հատուկ միջոցառումների իրականացում 1 մլն դրամ - ծախսային ծրագրով նախատեսվող գումարները նպատակաուղղվելու են արտակարգ իրավիճակներում հատուկ միջոցառումների գծով աշխատանքների իրականացմանը:

10. Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման միջոցառումներ - 40,1 մլն դրամ – ծախսային ծրագրի իրականացումը հնարավորություն կտա բարձրակարգ սերմերով ապահովելու գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին ու անհատներին: Նշված գումարների հաշվին իրականացվելու են ծրագրային հետևյալ միջոցառումները.

սելեկցիոն նվաճումների պետական գրանցամատյանի վարում,

բույսերի նոր սորտերի նկարագրությունների և բնութագրերի կազմում,

բույսերի նոր սորտերի դաշտային փորձարկումներ,

բույսերի սերմերի որակի լաբորատոր հետազոտություններ և փաստաթղթավորում:

Նախագծով նախատեսվող գումարի աճը (11.8 մլն դրամի չափով) 2008թ. հաստատված բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ պայմանավորված է աշխատավարձի աճով, ինչպես նաև գործուղման ծախսերի նորմատիվների փոփոխությամբ:

11. Հիդրոօդերևութաբանական ծառայություններ – 2.2 մլն դրամ՝, ծախսային ծրագրով նախատեսվող գումարները նպատակաուղղվելու է՝ ամենօրյա տեղեկագրերի, կլիմայական ամսական տեսությունների և ըստ մարզերի եղանակի կանխատեսումների, տասնօրյակային ագրոօդերևութաբանական տեղեկագրերի տրամադրման միջոցառումների իրականացմանը:

12. Գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորում - 41.5 մլն դրամ, - ծախսային ծրագրով նախատեսվում է մոտ 19.5 հազ. կովերի և 3.2 հազ. գլուխ խոզերի արհեստական սերմնավորման, 350 հազ. չափաբաժին խորը սառեցված սերմնահեղուկի բանկի պահպանման համար:

13. *<u>Ճապոնիայի կառավարության «Պարենային արտադրության աճ»</u>* ծախսային ծրագրի շրջանակներում 2009թ. նախատեսվում է իրականացնել՝

1. Հողերի մելիորատիվ վիճակի պահպանման և բարելավման միջոցառումներ՝ 300 մլն դրամ: Ըստ որի նախատեսվում է հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Աղստեև գետի հունի մաքրում և ափերի ամրացում,

- Հրազդան գետի հունի մաքրում և ափերի ամրացում ՊԿ 28+60-ՊԿ 49+11.5 հատվածում,

- ՀՀ Արարատի մարզի Ոսկետափ, Ավշար և Այգևան համայնքներում մեկական խորքային հորի հորատում:

2 *ՀՀ Լոռու, ՀՀ Կոտայքի, ՀՀ Շիրակի և ՀՀ Տավուշի մարզերի անտառային տարածքների անտառապատում, անտառապատված տարածքների ցանկապատում*, որի համար նախատեսվում է *300 մլն դրամ:*

14 *<u>Գյուղական խորհրդատվական ծառայություններ- 183.2 մլն դրամ</u>* - ծախսային ծրագրով նախատեսվող գումարը պայմանավորված է ՀՀ կառավարության և Համաշխարհային Բանկի միջազգային զարգացման ընկերակցության միջև 20.07.2005թ. ստորագրված «Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման» վարկային համաձայնագրի (վարկ № 4095-AM) 4-րդ հավելվածի 3-րդ կետի «(a)» և «(b)» ենթակետերի պահանջների համաձայն: 2008թ. հաստատված բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ավելացումը պայմանավորված է ԳԱՄԿ - ների և ԳԱՀԿ - ների (ծրագրի իրականացման ժամանակահատվածում վճարովի խորհրդատվության և տեղեկատվության տրամադրումից գոյացած միջոցներով) կողմից գյուղացիների անվճարունակության պատճառով համաֆինանսավորման 20 %-ը չապահովելու հանգանքով:

15. *<u>Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին - 1645 մլն դրամ</u>* ծախսային ծրագրի նպատակն է ընդգրկել հանրապետության գյուղատնտեսության վարման համար առավել անբարենպաստ յոթ մարզերի մեկական տարածաշրջանները՝ ստեղծելու ճյուղի զարգացման համար տնտեսական բարենպաստ միջավայրի նախադրյալներ և աջակցել տնտեսվարող սուբյեկտների արտադրական կարողությունների բարձրացմանը:

16. <u>Տարաժամկետ վճարման պայմանով գյուղացիական տնտեսություններին կենդանիների տրամադրում - 500.0 մլն դրամ</u> - ծախսային ծրագիրն ընդունվել է ՀՀ կառավարության 22.03.2007թ. № 336-Ա որոշմամբ, որի համաձայն նախատեսվել է ներմուծել շվից, սիմենթալ և հոլշտինյան ցեղի երինջներ: Ներկրված տոհմայնի երինջները գյուղական ազգաբնակչությանը կհատկացվեն վարկավորման լիզինգային գործիքի կիրառման եղանակով: Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա որակապես բարելավել տավարաբուծության ուղղությամբ իրականացվող տոհմասելեկցիոն աշխատանքները, նպաստել գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացմանը, աջակցել հանրապետության գյուղացիական տնտեսություններին՝ համաշխարհային բարձր մթերատու տոհմային տավարի դասական լավագույն ցեղերի կենդանիների ձեռքբերմանը:

17. *Ցորենի և գարու սերմնաբուծության զարգացման ծրագիր - 188.3 մլն դրամ* - ծախսայի ծրագիրն ընդունվել է ՀՀ կառավարության 15.03.2007թ. № 451-Ա որոշմամբ, որի համաձայն նախատեսվել է արտերկրից ներկրել 30 տ աշնանացան և գարնանացան ցորենի և գարու սուպերէլիտային և էլիտային սերմեր, ինչպես նաև դրանց արտադրության համար սուբսիդիայի տրամադրում, նպատակ ունենալով բարձր վերարտադրության հացահատիկային մշակաբույսերի սերմերով ապահովել հանրապետության գյուղացիական տնտեսություններին:

18. *Սննդամթերքի լաբորատոր փորձաքննություններ - 51.1 մլն դրամ* ծախսային ծրագրի նպատակն է հանրապետությունում սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության տեսուչների կողմից սննդամթերքի արտադրության, մշակման, վերամշակման և իրացման գծով տնտեսվարող սուբյեկտների օբյեկտներում տեսչական գործառույթներ իրականացնելու ժամանակ վերցրված նմուշների լաբորատոր փորձաքննության աշխատանքների անցկացումը:

Նախագծով նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նոր ծրագրերը.

1. Վտանգների աղբյուրների վերլուծության և կրիտիկական կետերի հսկման (ՎԱՎԿԿՀ) համակարգի ներդրման աջակցություն՝ 52.2 մլն դրամ ծախսային ծրագրի նպատակն է Հանրապետությունում սննդամթերքի անվտանգության առավել բարձր մակարդակ ապահովելու նպատակով աջակցել տնտեսվարող սուբյեկտներին սեփական ուժերով իրենց արտադրություններում ներդնելու ՎԱՎԿԿՀ համակարգը: Նախատեսվում է ըստ արտադրության ոլորտների իրականացնել՝

- մեթոդական ուղեցույցների մշակում և տպագրություն,
- աուդիտի ձեռնարկների մշակում և ուսուցողական դասընթացների կազմակերպում:

2. *Բուսասանիտարական համակարգի բարելավման և մասնագիտական գիտելիքների բարձրացման աջակցություն՝ 5.6 մլն դրամ:* ծախսային ծրագրի իրականացմամբ հնարավորություն կընձեռնվի.

- բուսասանիտարական վերահսկողության կատարելագործմանը,
- կարանտին վնասակար օրգանիզմների ներթափանցման կանխարգելմանը,
- արտադրվող բուսական մթերքի որակի բարձրացմանը:

Նախատեսվում է ծրագրային 2 միջոցառումների իրականացում՝ մեթոդական ուղեցույցների մշակում և տպագրություն, մասնագիտական վերապատրաստման ամենամյա դասընթացների կազմակերպում:

3. *Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման փորձնական նախագիծ՝ 31.3 մլն դրամ* - ծախսային ծրագրի հիմնական նպատակն է թիրախային տարածաշրջանների համայնքներում գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի՝ (վարկերը տրամադրվելու են բացառապես գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ և/կամ վերամշակմամբ և/կամ ագրոտուրիզմով զբաղվելու նպատակով) այդ թվում լիզինգի

տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումը:

04.02.02 Անտառային տնտեսության բնագավառում հատկացումներն ուղղվելու են.

1. Անտառների պահպանության, անտառվերականգնման և անտառաշինական աշխատանքներին՝ 1465,5 մլն դրամ, այդ թվում 735.0 մլն դրամ ընթացիկ և 730.5 կապիտալ ծախսեր: Սույն ծախսային ծրագրով նախատեսվում է 369.4 հազ. հա վրա իրականացնել.

- անտառային պետական ֆոնդի անտառների պահպանության,
- անտառային տնտեսություն վարող կազմակերպությունների պահպանման,
- անտառվերականգնման և անտառշինական աշխատանքներ:

2. Անտառի պետական մոնիտորինգի իրականացում 54 մլն դրամ և Ներդրումներ «Անտառի պետական մոնիտորինգ» ՊՈԱԿ-ում 12 մլն դրամ - ծախսային ծրագրերով նախատեսվող գումարները նպատակաուղղվելու է ապօրինի հատումների ու բնափայտի տեղափոխման, իրացման և այլ բացասական գործողությունների կանխարգելման աշխատանքներին, ինչպես նաև նախատեսվում է այդ նպատակով իրականացնել համապատասխան դիտարկումներ, ուսումնասիրություններ և կատարել պետական անտառային մոնիտորինգ:

Նախագծով նախատեսվող գումարի աճը (13.4 մլն դրամի չափով) 2008թ. հաստատված բյուջեի նկատմամբ պայմանավորված է ընթացիկ ծախսերի գծով՝ (1.4 մլն դրամի չափով) գործուղման ծախսերի նորմատիվների փոփոխությամբ: Իսկ կապիտալ ծախսերի գծով աճը (12 մլն դրամի չափով) պայմանավորված է «Անտառի պետական մոնիտորինգ» ՊՈԱԿ-ի համար 2 բարձր անցողականությամբ մեքենայի ձեռքբերման հանգամանքով:

Գյուղատնտեսության ոլորտի 2009թ. նախատեսվող բյուջետային ծախսերի (առանց նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ստացվող միջոցների և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) համեմատությունը՝ 2007թ. բյուջետային տարվա փաստացի, 2008թ. բյուջետային հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի №̲ 4 աղյուսակում:

Բացի այդ, գյուղատնտսության ոլորտում 2009 թվականին նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային ծրագրերը.

1. Թռչնագրիպին հակազդելու ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագրի նպատակն է աջակցել ընտանի թռչունների շրջանում բարձր ախտածին թռչնագրիպի վարակով և կենդանիների այլ հիվանդություններով մարդկանց համար առաջացված վտանգը նվազեցնելու և մարդկանց միջավայրում գրիպի պանդեմիայի ու վարակիչ այլ հիվանդությունների բռնկումների հսկողությանն ու արձագանքմանը պատրաստվելու ուղղությամբ:

Ծրագրի շրջանակներում գյուղատնտեսության ոլորտում 2009 թվականին նախատեսվում է իրականացնել Ագարակի անասնապահական և բույսերի կարանտինի սահմանային հսկիչ կետի

շինարարական աշխատանքները, բեկարի 16 հորերի շինարարական աշխատանքները, Երևանի անասնաբուժական լաբորատորիայի շենքի վերանորոգման աշխատանքները և թվով 5 մարզային ախտորոշիչ լաբորատորիաների վերանորոգման աշխատանքները: Միաժամանակ նախատեսվում է անասնաբուժական և ախտորոշիչ սարքերի և սարքավորումների ձեռքբերում, տրանսֆերտների տրամադրում գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին և այլ ակտիվների ձեռքբերման ծախսեր:

2. Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագրի նպատակն է՝ աջակցել Հայաստանի փոքր և միջին գյուղական ձեռնարկությունների զարգացմանը՝ ֆերմերների ու գյուղական ձեռնարկատերերի համար շուկաներն առավել մատչելի դարձնելու և գյուղական շրջաններում շուկայամետ և պետական ներդրումներ խթանելու միջոցով:

Ծրագրի շրջանակներում 2009 թվականից նախատեսվում է բույսերի պաշտպանության միջոցառումների և սերմնաբուծության զարգացումը շարունակական դարձնելու համար նախատեսվում է ժամանակակից բազմազան սարքավորումների, սերմերի հիվանդությունների արագ ախտորոշման լաբորատոր սարքերի ձեռքբերման, համապատասխան մասնագետների պատրաստման (ինչպես տեղական այնպես էլ արտասահմանյան գիտական կենտրոններում) միջոցառումների իրականացում: 2009 թվականին նախատեսվում է ավարտել Գյումրիի սելեկցիոն կայանի վերանորոգման աշխատանքները, ինչպես նաև Շաքիի ջրագծի կառուցման աշխատանքները:

Գյուղատնտեսության ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացման համար 2009 թվականին նախատեսվում է նաև մրցակցային հիմունքներով դրամաշնորհների տրամադրում գյուղացիական միջին և փոքր տնտեսություններին, ինչպես նաև դրամաշնորհների տրամադրում համայքների զարգացման և ամրապնդմանն ուղղված նախապես հաստատված ծրագրերի համար: Ծրագրի շրջանակենրում կշարունակվեն առևտրային բանկերի միջոցով ենթավարկերի տրամադրման աշխատանքները շուկայավարող տնտեսություններին:

3. Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագիր (Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ և Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության միջազգային զարգացման հիմնադրամ)

Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության առավել աղքատ 7 լեռնային մարզերում՝ (Տավուշ, Գեղարքունիք, Լոռի, Շիրակ, Վայոց Ձոր, Արագածոտն, Սյունիք) գյուղատնտեսությանն առնչվող տնտեսական գործունեության և նշված մարզերի գյուղաբնակ ազգաբնակչության եկամուտների կայուն աճին միտված միջոցառումների իրականացմանը:

Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրով 2009 թվականի ընթացքում շարունակվելու են և ավարտին են հասցվելու նախօրոք սկսված ենթակառուցվածքների վերականգնման աշխատանքների իրականացումը:

4. «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագիր (Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ)

Նշված ծրագրի հիմնական նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Այդ նպատակին հասնելու համար ծրագրի շրջանակներում 2009 թվականին նախատեսվում է մասնավորապես իրականացնել հետևյալ հիմնական միջոցառումները՝

- Գյուղատնտեսական արտադրանքի ապրանքաարժեքային շղթայի զարգացումը խթանելու նպատակով գյուղատնտեսական վերամշակող մասնավոր ձեռնարկություններին կտրամադրվի բաժնետիրական ֆինանսավորում՝ բաժնեմասը հետագայում ետ գնելու պայմանով,
- Գյուղական աղքատությունը նվազեցնելու նպատակով ֆինանսական միջոցներ կտրամադրվեն Գյուղական ֆինանսավորման կառույցին փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման համար,
- Մանր ֆերմերային տնտեսությունների արտադրողականությունը և արտադրանքի որակը բարձրացնելու նպատակով ենթավարկեր կտրամադրվեն ֆերմերային տնտեսություն-ներին և անհատ ֆերմերներին,
- ՀՀ համայքներում սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների վիճակը բարելավելու նպատակով կիրականացվեն ներդրումներով հիմնավորված ենթակառուցվածք-ների և սոցիալական ենթակառուցվածքների վերականգնման աշխատանքներ:
- Ծրագրի շրջանակներում ներդրումներով հիմնավորված և սոցիալական ենթակառուցվածքների վերականգման ճանապարհով ծրագրային տարածքի 35 համայքներում նախատեսվում է իրականացնել ոռոգման ու խմելու ջրի ցանցերի և ջրարբիացման, միջհամայքային և համայքային ավտոճանապարհների վերանորոգման և գազաֆիկացման կապիտալ նորոգումների և նախագծային աշխատանքներ:

Միաժամանակ գյուղատնտեսության ոլորտում 2009 թվականին Համաշխարհային բանկի և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային դրամաշնորհային ծրագրերը.

1. Թռչնագրիպին հակազդելու ճապոնական դրամաշնորհային ծրագիր,
2. Թռչնագրիպին հակազդելու ծրագրին համաֆինանսավորման նապատակով տրամադրվող դրամաշնորհային ծրագիր,
3. Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ճապոնական դրամաշնորհային ծրագիր,
4. «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» դրամաշնորհային ծրագիր:

Ջրային տնտեսության ոլորտին ՀՀ 2009թ պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 8,743,3 մլն դրամ (առանց նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ստացվող միջոցների և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի)՝ 2009-2011թթ. ՄԺՕՕ-ի 2009թ. համար հաստատված 8543.4 մլն դրամ կողմնորոշիչ չափաքանակի և ՀՀ 2008թ. պետական բյուջեով սահմանված 8484.2 մլն դրամի դիմաց:

Ոլորտում 2009թ. նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

1. *Որոտան-Արփա-Սևան ջրային համակարգի շահագործում, տեխնիկական վիճակի բարելավում (275.76 մլն դրամ)* ծախսային ծրագրով նախատեսվում է իրականացնել միայն ՀՀ կառավարության 04.12.03թ. N 1611 որոշմամբ «Արփա-Սևան» ՓԲԸ հավատարմագրային կառավարման հանձնված Որոտան-Արփա-Սևան հիդրոհանգույցի սպասարկման ծախսերը, որն ավարտվում է 17.08.2009թ.:

Նախագծով նախատեսված գումարի պակասեցումը ՀՀ 2008թ. հաստատված բյուջեի նկատմամբ պայմանավորված է «ՈԱՍ ԹՇ վարչություն» ՊՀ-ի պահպանման ծախսերը «Աբու-Դաբի Զարգացման Հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման» ծրագրի համաֆինանսավորման ծախսերում ներառելու հանգամանքով:

2. Ոռոգման ջրի մատակարարման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում (5250.4 մլն դրամ) ծախսային ծրագրով նախատեսվում է ոռոգման համակարգում ստեղծված 52 ՋՕԸ-երի ընթացիկ ֆինանսական ճեղքվածքի ծածկման նպատակով պետական աջակցություն տրամադրելու համար: Համաձայն ՀՀ կառավարության 08.02.2007թ. «Ջրօգտագործողների ընկերությունների պետական ֆինանսական աջակցության բարեփոխումների հիմնադրույթները և մատակարարված ոռոգման ջրի կորուստների նորմաները հաստատելու մասին» N 188-Ն որոշման, որի հիմքում ընկած է «Հայաստանի Հանրապետության ոռոգման հատվածում ֆինանսական և կառուցվածքային բարեփոխումների իրականացում» խորհրդատվական առաջարկությունները, ՋՕԸ-ների գծով պետական ֆինանսական աջակցության չափաքանակները սահմանվել են 2007-2011թթ. համար:

Նախագծով նախատեսված գումարի աճը ՀՀ 2008թ. հաստատված բյուջեի նկատմամբ (419.5 մլն դրամի չափով) պայմանավորված է հիշյալ որոշման 5.5-րդ կետի պահանջներին համաձայն, ըստ որի ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված ոռոգման ջրի սակագների փոփոխության դեպքում, պայմանագիրը վերանայվում և փոփոխվում է՝ նախորդ տարվա գնովի ջրի ծավալների և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանվող սակագների հավելաճի արտադրյալի չափով:

3. Խմելու ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորում («Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածք) (863,4 մլն դրամ) ծախսային ծրագրով նախատեսվող գումարը պայմանավորված է ՀՀ կառավարության 25.06.04թ. №̲ 942-Ն որոշմամբ, համաձայն որի հաստատվել է ընկերության գործադիր մարմնի լիազորությունները մրցույթում հաղթող ճանաչված մասնավոր կառավարչին՝ ֆրանսիական «Սաուր» կազմակերպությանը կառավարման պայմանագրի հիման վրա փոխանցելու հանգամանքով: Վերոհիշյալ

կառավարման պայմանագրի համաձայն, կանխիկ դրամի բոլոր կարիքները հոգալու համար (որոնք չեն կարող ծածկվել հավաքագրված հասույթներից) կտրամադրվեն գործառնական սուբսիդիաներ կառավարիչի կողմից ներկայացված համապատասխան հիմնավորումների հիման վրա: Բացի այդ, համաձայն վերոնշյալ համաձայնագրի /առդիր 6-ի 2/1/ կետի՝ կառավարիչն աստիճանաբար պետք է բարելավի ընկերության կատարողական ցուցանիշները, որով էլ պայմանավորված է 2008թ. հաստատված բյուջեի նկատմամբ ՀՀ 2009թ. պետական բյուջեի նախագծի պակասեցումը (350.2 մլն դրամի չափով):

4. <u>Խմելու ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորում («Նոր Ակունք» ՓԲԸ-ի սպասարկման տարածք) (38.5 մլն դրամ)</u> ծախսային ծրագրով նախատեսվող գումարները ՀՀ կառավարության 05.08.2004թ. N 1141-Ն որոշման 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն՝ ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև ֆինանսական համագործակցության շրջանակներում 21.06.2000թ. և 12.09.2001թ. կնքված վարկային պայմանագրերի շրջանակներում տրամադրված միջոցների օգտագործումից հետո լրացուցիչ առաջացող ճեղքվածքը ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին պետք է մարվեր: Բացի այդ, համաձայն «Նոր-Ակունք» ՓԲԸ-ի գործունեության բարելավման 2003-2007թթ. միջոցառումներ» ծրագրի (հաստատվել է ՀՀ կառավարության 05.06.2003թ.N 751 որոշմամբ) իրականացման արդյունքում պետք է ապահովվեր ընկերության գործունեության ամբողջովին փոխադրում առևտրային սկզբունքների վրա՝ 2006թ. սկսած ապահովելով ընկերության դրական ընթացիկ հաշվեկշռով գործունեություն, որով էլ պայմանավորված է ՀՀ 2008թ. հաստատված բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ Նախագծով նախատեսվող գումարի պակասեցումը (35 մլն դրամի չափով):

5. <u>Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և ընթացիկ նորոգում (330.0 մլն դրամ)</u> Ծրագրով նախատեսվում է մաքրել և վերանորոգել 303,6կմ երկարությամբ /ընդհանուր երկարության 1055.8 կմ/ կամ 28,5% կոլեկտորադրենաժային ցանցեր, վերջնական արդյունքում շուրջ 19000 հա ոռոգելի գյուղատնտեսական հողատեսքերի մելիորատիվ վիճակը բարելավելու նպատակով:

6. <u>Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքներ (93.7մլն դրամ)</u> ծախսային ծրագրով նախատեսվում է իրականացնել.

- հանրապետության գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշում՝ 21,9 մլն դրամ,
- կոլեկտորադրենաժային ցանցերի տեխնիկական վիճակի պահպանում և շահագործում՝ 62.8 մլն դրամ,
- ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկման աշխատանքներ՝ 7.15 մլն դրամ:

7. <u>Ջրատեխնիկական կառույցների ուսումնասիրություններ (15.3 մլն դրամ) և Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի պահպանման կարողությունների զարգացում (1.1 մլն դրամ)</u> ծխախսային ծրագրով նախատեսվող գումարն

ուղղվելու է ՀՀ ջրային օրենսգրքի 86-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 08.05.03թ. «Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հսկողության և զննման կարգը հաստատելու մասին» № 686 որոշման համաձայն՝ ՀՏԿ-ների զննման, ջրային համակարգերի անվտանգության ապահովման, արդյունավետ օգտագործման և պահպանության ծրագրերի ուսումնասիրության և տվյալ ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ մասնագիտական եզրակացություններ տալու նպատակով, որպես մշտապես գործող մարմին ստեղծված հանձնաժողովի գործունեության ապահովման ծախսերի ֆինանսավորմանը:

Նախագծով նախատեսված գումարի աճը ՀՀ 2008թ. հաստատված բյուջեի նկատմամբ (2.4 մլն դրամի չափով) պայմանավորված է գործուղման ծախսերի նորմատիվների փոփոխությամբ, ինչպես նաև թեոդոլիտ ծրագրի ձեռքբերման ծախսերի ավելացմամբ:

8. <u>Մեծամորի ռեզերվային հորի կառուցման ծրագիր (13.6 մլն դրամ)</u> ծախսային ծրագրով նախատեսվում է Մեծամոր քաղաքի անխափան ջրամատակարարումն ապահովելու նպատակով ռեզերվային հորի հորատում, որի արդյունքում մոտ 68 հազ. մարդ կապահովվի անհրաժեշտ քանակի (միջինը 70լ/անձ/օր) ջրամատակարարամբ: Նշված աշխատանքների իրականացման համար ՀՀ 2008թ. պետական բյուջեով նախատեսվել է 31.2 մլն դրամ, սակայն համաձայն ներկայացված նախահաշվի, պահանջվող գումարը կազմում է 43.7 մլն դրամ: Ուստի նախատեսված աշխատանքներն ավարտելու հանգամանքով պայմանավորված Նախագծով նախատեսվել է 13.6 մլն դրամ:

9. <u>Ոռոգման համակարգերի հիմնանորոգում (1500.2 մլն դրամ)</u> ծախսային ծրագրով նախագծում միջոցների նախատեսումը պայմանավորված է ԱՄՆ-ի Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի և ՀՀ կառավարության միջև վավերացրած Հազարամյակի մարտահրավեր Համաձայնագրի համաձայն, ըստ որի ՀՀ պարատավորվել է իրականացնել ոռոգման համակարգերի ամենամյա նորոգումներ: ՀԲ-ի պատվերով իրականացված «Ոռոգման համակարգերի զարգացում» վարկային ծրագրի շրջանակներում մշակված «Պետական սեփականություն հանդիսացող ոռոգման և դրենաժային համակարգերի տեխնիկական զննման ու 2007-2009 թվականների անհրաժեշտ հիմնանորոգման աշխատանքների արժեքների հաշվարկ» հաշվետվությամբ ներկայացվել է 4.417.7 մլն դրամ հիմնանորոգման գնահատում՝ 2009թ. համար նախատեսվել է 1.500.2 մլն դրամ:

ՀՀ 2009թ. պետական բյուջեով նախագծով նախատեսվում է իրականացնել հետևյալ նոր ծրագիրը.

<u>Խմելու ջրի մատակարարման բարելավում, 361.5 մլն դրամ</u>, այդ թվում՝

1. <u>ՀՀ Սյունիքի մարզի Տեղ գյուղի խմելու ջրի ներքին ցանցի կառուցում (245 մլն.դրամ)</u> ծախսային ծրագրով նախատեսվում է վերակառուցել համայնքի ջրմուղի ներքին ցանցը, կառուցել համապատասխան ծավալով ՕԿՋ և քլորակայան: Ծրագրի իրականացման

արդյունքում նախատեսվում է, որ կբարելավվի համայնքի ջրամատակարարումը, կավելանա տրվող ջիր քանակը, կկրճատվեն հոսակորուստները:

2. <u>ՀՀ Շիրակի մարզի Անիավան կայարանի և Անիպեմզա գյուղերը սնուցող խմելու ջրագծի հիմնանորոգում (116,5 մլն.դրամ)</u> ծախսային ծրագրով Անիավան կայարանի և Անիպեմզա գյուղական համայնքների ջրամատակարարման բարելավման նպատակով նախատեսվում է իրականացնել մեկ խորքային հորի հորատման, կուտակիչ հորի, պոմպակայանի և ջրագծերի կառուցման, ինչպես նաև Անիավան և Անիպեմզա գյուղերում ներքին ցանցերի կառուցման աշխատանքներ:

ՀՀ 2009թ. պետական բյուջեի նախագծով ոլորտում նախատեսվող ծախսերի համեմատականը՝ ՀՀ 2007թ. բյուջետային տարվա փաստացի և ՀՀ 2008թ. բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N0 5 աղյուսակում:

Բացի այդ, 2009 թվականին ջրային տնտեսության ոլորտում նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային ծրագրերը.

<u>1. Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագիր (Գերմանիայի զարգացման վարկերի բանկ)</u>

Ծրագրի նպատակն է՝ Լոռու մարզի բնակչությանը (Վանաձոր քաղաքի և Լոռու մարզի 16 գյուղական բնակավայրերի) մաքուր, հիգիենիկ խմելու ջրի անընդմեջ մատակարարումը, որը կհամապատասխանի պահանջարկին և կապահովի տնտեսական արդյունավետությունը, հոսքային ջրերի հեռացման այնպիսի համակարգի կառուցումը, որը վտանգ չի սպառնա բնակչության առողջությանը:

Ծրագրի շրջանակներում 2009 թվականին նախատեսվում է շարունակել իրականացնել ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի թերությունների վերացման, ինչպես նաև համակարգի ընթացիկ և կապիտալ վերանորոգման ու վերակառուցման աշխատանքները, որի արդյունքում ակնկալվում է 24-ժամյա խմելու որակյալ ջրամատակարարման անխափան ապահովում:

<u>3. Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագիր (Գերմանիայի զարգացման վարկերի բանկ).</u>

Ծրագրի նպատակն է՝ Շիրակի մարզի բնակչությանը (Գյումրի քաղաքի և Շիրակի մարզի 36 գյուղական համայնքների) մաքուր, հիգիենիկ խմելու ջրի անընդմեջ մատակարարումը, որը կհամապատասխանի պահանջարկին և կապահովի տնտեսական արդյունավետությունը, հոսքային ջրերի հեռացման այնպիսի համակարգի կառուցումը, որը վտանգ չի սպառնա բնակչության առողջությանը:

Ծրագրի շրջանակներում 2009 թվականին նախատեսվում է շարունակել իրականացնել ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի թերությունների վերացման, ինչպես նաև

համակարգի ընթացիկ և կապիտալ վերանորոգման ու վերակառուցման աշխատանքները, որի արդյունքում ակնկալվում է 24-ժամյա խմելու որակյալ ջրամատակարարման անխափան ապահովում:

4. Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագրի նպատակն է Երևան քաղաքին ապահովելու շուրջօրյա հուսալի ջրամատակարարմամբ՝ միաժամանակ նվազեցնելով կեղտաջրերի բացթողումներից առաջացող շրջակա միջավայրի աղտոտումը, այսինքն՝ քաղաքի ընդհանուր ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի սկսած բարելավումների շարունակական իրականացումը և ընդհանուր արդյունավետության բարձրացումը:

2009 թվականի ընթացքում նախատեսվում է շարունակել իրականացնել բավական խոշոր ներդրումային աշխատանքներ, մասնավորապես՝ Արզնի ջրաղբյուրների և ջրատարի ներկայումս գոյություն ունեցող ծրագրի նորացում և նոր նախագծում, Ապարանի ջրաղբյուրներից վերցվող ջրաքանակի ավելացում, Գյումուշի ջրաղբյուրներում կորչող ջրի քանակի վերականգնում և պոմպակայանի կառուցում, Գառնիի ջրաղբյուրների պոմպակայանում անարդյունավետ պոմպերի փոխարինում և պոմպակայանից դուրս ջրագծերի օպտիմալ միացումներ, Կաթնաղբյուրի ու Գառնիի ջրատարներներում խողովակների փոխարինում, գյուղական համայնքների ջրային համակարգերի վերականգնում և բարելավում, Երևան քաղաքի տարածքում ջրային համակարգի գոտիավորման և սեկտորիզացման նախագծային ու շնարարական աշխատանքներ, ջրի ամբարման վերականգնում և ընդլայնում (նախատեսվում է վերականգնել Լուկաշինի, Մարաշի, էլեկտրոլամպերի գործարանի, նախկին միսկոմբինատի ու Դինամո լողավազանի հարևանությամբ ջրամբարները), ջրի մաքրման աշխատանքների բարելավում, բազմաբնակարան շենքերի բակային պոմպերի փոխարինում և այլն:

5. Ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագրերի նպատակն է՝ կենսունակ ոռոգման ենթակառուցվածքի ստեղծմամբ և կառուցվածքային բարեփոխումների իրականացմամբ օժանդակել գյուղական ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացմանը: Ծրագրի նպատակներից են նաև հանրապետության ոռոգելի հողատարածքների ջրապահովվածության բարելավումը, ոռոգման համակարգերի շահագործման ծախսերի նվազեցումը, ինչպես նաև համակարգում ջրի հաշվառման և կառավարման կատարելագործումը:

Ծրագրի շրջանակներում 2009 թվականի ընթացքում նախատեսվում է ավարտին հասցնել արդեն իսկ սկսած առավել հրատապություն պահանջող վթարային կառուցվածքների վերականգնման աշխատանքները:

6. Ոռոգման համակարգերի զարգացման երկրորդ ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագրերի նպատակն է՝ կենսունակ ոռոգման ենթակառուցվածքի ստեղծմամբ և կառուցվածքային բարեփոխումների իրականացմամբ օժանդակել գյուղական ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացմանը: Ծրագրի նպատակներից են նաև հանրապետության ոռոգելի հողատարածքների ջրապահովվածության բարելավումը, ոռոգման համակարգերի շահագործման ծախսերի նվազեցումը, ինչպես նաև համակարգում ջրի հաշվառման և կառավարման կատարելագործումը:

Ծրագրի շրջանակներում 2009 թվականի ընթացքում նախատեսվում է համաֆինանսավորել Ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում արդեն իսկ սկսած առավել հրատապություն պահանջող վթարային կառուցվածքների վերականգնման աշխատանքների գծով ծախսերը:

7. Պատվարների անվտանգության ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագրի նպատակն է՝ բարձրացնել այն պատվարների անվտանգությունը, որոնց վթարի հավանականությունը ամենաբարձրն է, ապահովել պատվարների հուսալի շահագործումը, հիմնականում ոռոգման նպատակով օգտագործվող ջրամբարների պատվարների վերականգնումը և պատվարների անվտանգության պահպանման միջոցառումների իրականացումը:

Այդ նպատակով ծրագրի շրջանակներում 2009 թվականին նախատեսվում է ավարտին հասցնել Մարմարիկի պատվարի շինարարական վերականգնողական աշխատանքները և ծրագրով արդեն իսկ իրականացվող այլ պատվարների գծով վերականգնողական միջոցառումները:

8. Պատվարների անվտանգության երկրորդ ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագրի նպատակն է՝ բարձրացնել այն պատվարների անվտանգությունը, որոնց վթարի հավանականությունը ամենաբարձրն է, ապահովել պատվարների հուսալի շահագործումը, հիմնականում ոռոգման նպատակով օգտագործվող ջրամբարների պատվարների վերականգնումը և պատվարների անվտանգության պահպանման միջոցառումների իրականացումը:

Այդ նպատակով ծրագրի շրջանակներում 2009 թվականին նախատեսվում է ավարտել պատվարների շինարարական վերականգնողական աշխատանքները, հիմնական կառուցվածքների վերականգնումը, ինչպես նաև անվտանգության ապահովման սարքավորումների դաշտային տեղադրման աշխատանքները և պատվարների գծով մոտեցնող ճանապարհների բարելավման աշխատանքները:

9. **Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)**

Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ կառավարության քաղաքականությանը՝ բարձրացնելու աղքատների և խոցելի խմբերի կենսամակարդակը՝ բարելավելով որակն ու մատչելիությունը և մեծացնել համայնքային ենթակառուցվածքների և ծառայությունների տարածվածությունը աղքատության առավել բարձր աստիճան ունեցող համայնքներում և ամենախոցելի խմբերի համար:

Ծրագրի շրջանակներում 2009 թվականին նախատեսվում է կենտրոնանալ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երկրորդ վարկային ծրագրի աշխատանքների շարունակման վրա, այսինքն շարունակել մարզերում առավել ցածր կենսամակարդակ ունեցող համայնքներում սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների բարելավման աշխատանքները:

10. <u>Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)</u>

Ծրագրի նպատակն է՝ ջրամատակարարման համակարգի բարելավումը, Հայաստանի հանրապետության բոլոր մարզերում (բացառությամբ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի կողմից իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրերում ընդգրկված տարածաշրջանները՝ Արմավիրի, Լոռու, Շիրակի մի շարք բնակավայրեր) կառուցվածքային բարեփոխումների միջոցով ջրմուղ-կոյուղու կազմակերպությունների առավել արդյունավետ կառավարումը, ծախսվող էլեկտրաէներգիայի կրճատումը, համակարգի ֆինանսական վիճակի առողջացումն ու մասնավոր ներդրողների համար գրավիչ պայմանների ստեղծումը:

Ծրագրի շրջանակներում 2009 թվականի ընթացքում ավարտին է հասցվելու ծրագրով նախատեսված արդեն իսկ իրականացվող աշխատանքները:

11. <u>Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիրն տրամադրվող տեխնիկական աջակցության ծրագիր (Ֆրանսիայի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդ)</u>

Ծրագիրը գործելու է Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր շրջանակներում՝ ջրամատակարարման համակարգի անվտանգության, խմելու ջրի ցանցի օպերատիվ կառավարման և շրջակա միջավայրի բարելավման նպատակով: Ծրագրի շրջանակներում ներդրումը առաջին հերթին ուղղված է Աէրացիա մաքրման կայանի կեղտաջրերի նախնական մաքրման և տիղմի առաջնային մշակման մասի վերականգնմանը:

Ծրագրի շրջանակներում 2009 թվականին նախատեսվում է հիմնականում իրականացնել խորհրդատվական և նախագծահետազոտական բնույթի աշխատանքներ:

12. <u>Սևանա լճի բնապահպանական ծրագիր (Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ)</u>

Ծրագրի նպատակն է՝ Սևանա լճի և լճի հարակից շրջաններում գտնվող 5 քաղաքային համայնքներից Սևանա լճի ներհոսող կեղտաջրերի մաքրման ու վերամշակման, կեղտաջրերի մաքրման կայանների տեղադրման, ինչպես նաև տարածքներով անցնող ջրահեռացման

խողովակների վերանորոգման և փոխարինման միջոցով բնապահպանական խնդիրների բարելավումը:

Ծրագրի շրջանակներում 2009 թվականին նախատեսվում է հիմնականում իրականացնել խորհրդատվական և նախագծահետազոտական բնույթի աշխատանքներ:

13. <u>Ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր (Ասիական զարգացման բանկ)</u>

Ծրագրի նպատակն է համայնքային ջրամատակարարման ենթակառուցվածքների վերանորոգումը, ջրահեռացման համակարգերի և շրջակա միջավայրի բարելավումը, որի շրջանակներում 2009 թվականին նախատեսվում է շարունակել իրականացնել ՀՀ մի շարք բնակավայրերի ջրամատակարման և ջրահեռացման համակարգերի վերականգնողական և անցկացման աշխատանքները:

14. <u>Արփա-Սևան թունելի հիմնանորոգման ծրագիր (Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամ)</u>

Ծրագրի նպատակն է Արփա-Սևան թունելի հիմնանորոգման աշխատանքների իրականացումը, որի նպատակով 2009 թվականից սկսած նախատեսվում է իրականացնել թունելի վերականգնողական, կապիտալ վերանորոգման շինարարական աշխատանքները:

Միաժամանակ 2009 թվականին ջրային տնտեսության ոլորտում Գերմանիայի զարգացման վարկերի բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Ֆրանսիայի Կառավարության աջակցությամբ նախատեսվում է իրականացնել թվով 8 նպատակային դրամաշնորհային ծրագրեր:

<u>ՀՀ էներգետիկայի ոլորտի «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծառայություններ»</u> ծախսային ծրագիրը շարունակական է, որի իրականացման համար Նախագծով նախատեսվել է հատկացնել՝ 28.8 մլն դրամ :

Ծրագրի իրականացման նպատակն է՝ միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրում, ուսումնասիրում, պահպանում, վնասազերծում, թաղում՝ մարդկանց և շրջակա միջավայրի իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից պաշտպանելու համար:

➡ **Բնական պաշարների կառավարման ոլորտի «Ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայություն»** ծախսային ծրագիրը շարունակական է, որի իրականացման համար Նախագծով նախատեսվել է՝ 6.2 մլն դրամ:

Ծրագրի իրականացման նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին երկրաբանական և այլ տեղեկատվության պահպանությունը:

➡ <u>Բնական պաշարների կառավարման ոլորտի «Երկրաբանահետախուզաբանական աշխատանքների աջակցման ծառայություններ»</u> ծախսային ծրագիրը շարունակական է որի իրականացման համար Նախագծով նախատեսվել է՝ 172.0 մլն դրամ : Նշված հատկացումների հաշվին նախատեսվում է իրականացնել ծրագրային հետևյալ միջոցառումները՝

↱ *Գեղամա լեռների հյուսիսային և արևմտյան ստորոտների 1:50000 մասշտաբի երկրաբանական հանույթ (K-38-126- Բ, Գ; K-38-138-Ա,Բ, Բ, Գ թերթեր)*՝ 12.0 մլն դրամ,

↱ *ՀՀ 1:50000 մասշտաբի երկրաբնապահպանական հետազոտություններ և քարտեզագրություն Երևան քաղաքում և նրա մերձակա տարածքներում (K-38-137- ը, Թ, թ; K-38-138-Ը, Թ թերթերի տարածքներ)*՝ 5.0 մլն դրամ,

↱ *ՀՀ տարածքի էկզոգեն (արտածին) երկրաբանական պրոցեսների (սողանքների) մոնիտորինգի վարում և դրանց կադաստրի կազմում (շարունակելի)*՝ 10.0 մլն դրամ,

↱ *«ՀՀ պինդ օգտակար հանածոների հանքավայրերի վերաբերյալ կոմպյուտերացված տեղեկա-տրվական համակարգի ստեղծում»*՝ 5.0 մլն դրամ,

↱ *«ՀՀ տարածքում ռադիոակտիվ, վտանգավոր քիմիական նյութերի ու թափոնների թաղման նպատակով ընդերքի տեղամասերի տեղագրական քարտեզի կազմման աշխատանքներ*՝ 140.0 մլն դրամ:

Ծրագրի իրականացման նպատակն է՝ ընդերքի պահպանության, արդյունավետ օգտագործման ու վերարտադրության ապահովում:

➡ **<u>Բնական պաշարների կառավարման ոլորտի «Ընդերքի պահպանության և օգտագործման քնագավառի օրենսդրական փաստաթղթերի մշակում»</u>** ծախսային ծրագիրը նոր ծրագիր է , որի իրականացման համար Նախագծով նախատեսվել է՝ 20.1 մլն դրամ:

Ծրագրի իրականացման նպատակն է՝ «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի և «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի միջև առկա հակասությունների ու բացթողումների վերացումը և ընդերքն օգտագործման տրամադրման ու ընդերքօգտագործման հետ կապված մեխանիզմների պարզեցումը:

Էներգետիկայի և բնական պաշարների կառավարման ոլորտում, ըստ 2009 թվականի բյուջետային ծախսերի նախատեսվող ցուցանիշների համեմատությունը 2007 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2008 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N<u>0</u> 6 աղյուսակում (առանց վարկային ծրագրերի:

Բացի այդ, էներգետիկայի ոլորտում 2009 թվականին նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային ծրագրերը.

<u>1. Քաղաքային ջեռուցման ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)</u>

Ծրագրի նպատակն է՝ մեծացնել մաքուր, արդյունավետ, ապահով և մատչելի ջեռուցման տեխնոլոգիաների օգտագործումը քաղաքային դպրոցներում և բազմաբնակարան շենքերում:

Ծրագրով 2009 թվականին նախատեսվում է շարունակել հետևյալ գործողությունների իրականացումը.

- Արդյունավետ ու ապահով ջեռուցման ծառայություններ մատուցելու համար նպաստավոր միջավայրի ստեղծում,
- Գազի անվտանգության կանոնակարգերի ու ստանդարտների մշակում,
- Տեղեկատվական արշավների և հանրային իրազեկման իրականացում՝ ջեռուցման նոր տեխնոլոգիաների ներդրման հնարավորության ու դրանց առավելությունների, ապահովության նորմերի ու ստանդարտների, շրջակա միջավայրի առումով մաքուր ու ապահով ջեռուցման տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտության ու առավելությունների ներկայացման ուղղությամբ,
- Ջերմամատակարարման ժամանակակից տեխնոլոգիաներին առնչվող իրավական, տեխնիկական ու ֆինանսական հարցերում մասնավոր հատվածին և համայնքներին խորհրդատվություն,
- Բազմաբնակարան շենքերում բնակվող անապահով ընտանիքների՝ ծրագրին մասնակցության միջոցով ջեռուցման բարելավված ծառայություններից օգտվելը հնարավոր դարձնելու նպատակով՝ կապիտալ դրամաշնորհների տրամադրում,
- Քաղաքային 7 հատուկ դպրոցներում ջեռուցման համակարգերի տեղադրում և դպրոցների շենքերի կապիտալ ջերմամեկուսացման համակարգի վերականգնում:

2. Համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման ծրագիր (Միջազգային համագործակցության ճապոնական բանկ)

Ծրագրի նպատակն է «Երևան ՋԷԿ» ՓԲԸ-ում համակցված շոգեգազային ցիկլով բնական գազով աշխատող նոր էներգաբլոկի կառուցում՝ 234 Մվտ դրվածքային և 189 Մվտ երաշխավորված հզորությամբ, որը զբաղեցնելու է Երևանի ՋԷԿ-ին հարակից տարածքում մոտ 3,6 հա տարածք և օգտագործելու է վերջինիս ենթակառուցվածքը:

2007թ. սեպտեմբերի 30-ին «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ և Mitsui & Co., Ltd and GS Engineering & Construction կոնսորցիումի միջև կնքված Գլխավոր կապալի թիվ YCCPP ARM-P2 TK/C 06 001 CA պայմանագրի համաձայն 2009 թվականի ընթացքում նախատեսվում է շարունակել իրականացնել հետևյալ աշխատանքները.

Հիմնական սարքավորումների՝ գազատուրբինի գեներատորի և օժանդակ սարքավորումների, ջերմաօգտագործիչ կաթսայի և օժանդակ սարքավորումների, շոգետուրբինի և օժանդակ սարքավորումների տեղադրման աշխատանքները, ջերմաօգտագործիչ կաթսայի հիդրավլիկական փորձարկումը և գազատուրբինի սկզբնական փորձարկումը: Իրականացվելու են մանրամասն ինժեներա-նախագծային աշխատանքներ, գազատուրբինի, ջերմաօգտագործիչ կաթսայի, շոգետուրբինի և այլ սարքավորքումների հիմքերի շինարարական աշխատանքներ, ինչպես նաև տուրբինի շենքի, համատեղ արտադրամասերի/պահեստների, կաթսայի և շրջանառու ջրերի պոմպակայանների, ջրերի և կեղտաջրերի մաքրման և վառելիք գազի կոմպրեսորի կայանների կառուցում: Իրականացվելու է գազի մատակարարման համակարգի, կոնդենսատորի և լրասնուցման ջրի համակարգի, հողանցման ջրի մատակարարման

համակարգի, օդի կոմպրեսորի, ինչպես նաև հրշեջ պոմպի, կենտրոնական կառավարման և այլ մեխանիկական սարքավորումների տեղադրման աշխատանքները: 2009 թվականի վերջին նախատեսվում է սկսել կայանի նախագործարկման աշխատանքները:

3. էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման ծրագիր (Միջազգային համագործակցության ճապոնական բանկ)

Ծրագրի նպատակն է՝ էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգերի վերականգնումը, ֆինանսական կարգապահության ուժեղացումը, ճյուղային հաստատություններում հզորությունների կառուցումը, ինչը նախատեսում է 110 կվ հզորությամբ ենթակայանների վերականգնում, հիմնական սարքավորումներով վերազինում, բարձրավոլտ ենթակայանների համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում, ՀՀ էներգահամակարգի նոր SCADA/Կապի համակարգի առաջին փուլի իրականացում, որի արդյունքում կստեղծվի Հայաստանի էներգահամակարգի կառավարման և հեռակառավարման համակարգ:

Ծրագրի շրջանակներում 2009 թվականին մասնավորապես նախատեսվում է վերը նշված աշխատանքների իրականացման համար 2007 թվականին ընտրված կապալառուների հետ համապատասխան պայմանագրերի շրջանակներում կանխավճարների վճարման և աշխատանքների փուլային իրականացման միջոցառումները:

4. էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցման ծրագիր (Գերմանիայի զարգացման վարկերի բանկ)

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև 1998 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված «1997 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրով տրամադրված 27.5 մլն գերմանական մարկ վարկի մնացորդային գումարով և Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև 2004 թվականի ապրիլի 5-ին կնքված «Կովկասյան նախաձեռնության շրջանակներում ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրով նախատեսվող վարկային միջոցներից խնայված 1.3 մլն Եվրո գումարը նախատեսել «Վանաձոր-1» ենթակայանի ամբողջական վերականգնման համար, ինչը հնարավորություն կտա Վանաձոր քաղաքի անխափան էլեկտրամատակարարման աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև մի շարք ենթակայանների միջև նոր սարքավորումներով կապը բարելավելու և ՀՀ էներգահամակարգում SCADA ծրագրի ներդրման համար անհրաժեշտ սարքավորումների փոխարինմամբ:

2009 թվականին կատարվելիք ծախսերի նպատակն է «Տարածաշրջանային էլեկտրաէներգիայի փոխանակում-I, Ալավերդի-Գարդաբանի էլեկտրահաղորդում–200366054» և «էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցում 9865270-Լրացումներ» վարկային ծրագրի շրջանակներում գոյություն ունեցող պարտավորության՝ ետերաշխիքային շուրջ 433 հազար եվրոյին համարժեք գումարի վճարումը:

5. Վերականգնվող էներգետիկայի ծրագիր (Համաշխարհային բանկ, Միջազգային զարգացման ընկերակցություն)

Ծրագրի նպատակն է՝ նոր հողմային կայանների և փոքր հիդրոկայանների կառուցումը և գործող հիդրոկայանների վերականգնումը, որն իրականացվելու է ենթավարկերի տրամադրման միջոցով:

Ծրագրով 2009 թվականին նախատեսվում է շարունակել ենթավարկերի տրամադրումը փոքր ՀԷԿ-երի շինարարության և վերակառուցման նպատակով:

Միաժամանակ ոլորտում նախատեսվում է իրականացնել Համաշխարհային բանկի աջակցությամբ Վերականգնվող էներգետիկայի դրամաշնորհային ծրագիրը:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համակարգի գծով *(առանց նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ստացվող միջոցների և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի*), Նախագծով նախատեսվել է հատկացնել 52.3 մլն դրամ, որից՝

➡**««Պետական աջակցություն «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին կանոնադրական խնդիրների իրականացման և տեխնիկական կանոնակարգերի մշակման»** ծախսային ծրագիրը շարունակական է , որի իրականացման համար Նախագծով նախատեսվել է՝ 52.3 մլն դրամ: Նշված ծրագրի անհրաժեշտությունը պայմանավորված է 24.10.2005թ. ընդունված և 01.01.2006թ. ուժի մեջ մտած «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավոր-ման մասին» ՀՀ օրենքի պահանջներով:

Ծրագրի իրականացման նպատակը «Հայաստանի Հանրապետության տարածքում տեխնածին վթարների կանխարգելումն է, դրանց հետևանքների վերացումը, նման վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցումը, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Արտակարգ իրավիճակների ոլորտում, ըստ 2009 թվականի բյուջետային ծախսերի նախատեսվող ցուցանիշների համեմատությունը 2007 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2008 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի №̲ 6 աղյուսակում (առանց վարկային ծրագրերի), իսկ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության ծրագրերի գծով սույն օրենքի N1 հավելվածով սահմանված բյուջետային հատկացումների բաշխումը ծրագրային դասակարգմամբ արտացոլված է N7 հավելվածի N 4 աղյուսակում:

Տրանսպորտի և կապի ոլորտին 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 27,029.5 մլն դրամ (առանց վարկային ծրագրերի և պետական կառավարման ապարատի) ՀՀ 2008թ. պետական բյուջեով հաստատված 27,109.4 մլն դրամի դիմաց:

2009թ. ոլորտին հատկացված միջոցները ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը, որոնք հիմնականում համապատասխանում են «ՀՀ 2009-2011 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 03.07.08թ. No 704-Ն որոշմամբ 2009թ. համար հաստատված կողմնորոշիչ չափաքանակներին:

«Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» ծրագրով նախատեսվում է իրականացնել ՀՀ Նախագահի և ՀՀ վարչապետի հանձնարարականներով, ՀՀ կառավարության որոշումներով, «Հազարամյակի մարտահրավեր» ծրագրի շրջանակներում կնքված համաձայնագրերով՝ ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունները և գարնանային հեղեղումներից քանդված շուրջ 285 կմ ճանապարհահատվածների վերականգնման աշխատանքների կատարումը, որի համար ՀՀ 2009թ. պետական բյուջեի նախագծով նախատեսված է հատկացնել 15,970.0 մլն դրամ:

«Ավտոճանապարհների պահպանում և շահագործում» ծրագրով նախատեսվում է իրականացնել «Հազարամյակի մարտահրավեր» ծրագրի շրջանակներում կնքված համաձայնագրերով՝ ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունները, որի համար ՀՀ պետական բյուջեից 2009թ. հատկացվելու է 6,126.5 մլն դրամ: Նշված ծրագրով նախատեսվում է իրականացնել 1686.0 կմ միջպետական, 1779.6 կմ հանրապետական և 2276.7 կմ մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ նորոգման և ձմեռային պահպանության, նշագծման աշխատանքները, ինչպես նաև մի շարք կամուրջների և թունելների շահագործումը:

«Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում» ծրագրով նախատեսվում է իրականացնել 1962.0 կմ մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանության, ինչպես նաև ճանապարհների ընթացիկ նորոգման աշխատանքները, որոնց իրականացման համար նախատեսվում է հատկացնել 778.0 մլն դրամ:

«Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» ծրագրով ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 2-ի թիվ 591 որոշման համաձայն պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա վթարային վիճակում գտնվող կամուրջների վերականգնման աշխատանքների իրականացման նպատակով նախատեսվում է ՀՀ պետական բյուջեից 2009թ. համար հատկացնել 500.0 մլն դրամ: Ծախսերը 2008թ. համեմատությամբ նվազել են 600.0 մլն դրամով, որը պայմանավորված է նրանով, որի 2003թ-ից սկսվել է տրանսպորտային օբեկտների հիմնանորոգման ծրագիրը (համաձայն ծրագրի կամուրջների վերականգնման աշխատանքների հիմնական մասը նախատեսվել է իրականացնել 2004-2008թթ. ընթացքում: Հետագա տարիներին պետք է զգացվի այդ աշխատանքների ծավալների զգալի կրճատման միտում և կայունացում):

«Հեռահաղորդակցության և կապի կանոնակարգման ծառայություններ» ծրագրով ՀՀ կառավարության 06.10.2005թ. «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ ստեղծելու մասին No 1807-Ն որոշման համաձայն «ՀՀԿ» ՊՈԱԿ-ի պահպանման համար 2009թ. նախատեսվում է հատկացնել 479.0 մլն. դրամ, որը 9.0 մլն դրամով գերազանցում է «ՀՀ 2009-2011 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ

կառավարության 03.07.08թ. No 704-Ն որոշմամբ 2009թ. համար հաստատված կողմնորոշիչ չափաքանակին՝ պայմանավորված գործուղման ծախսերի նորմատիվների փոփոխությամբ:

«Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայություններ» և ««Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ենթակառուցվածքների նորոգում» ծրագրերով ՀՀ 2009թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար 1,840.0 մլն դրամ և 860.0 մլն դրամ:

«Վերգետնյա էլեկտրոտրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություններ» ծրագրով ՀՀ 2009թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 276.0 մլն դրամ:

«ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիայի տրամադրում» ծրագրով ՀՀ 2009թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 200.0 մլն դրամ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի քաղաքային համայնքին՝ համայնքի քաղաքային հիվանդանոց տանող ճանապարհի վերանորոգման համար:

Այս ոլորտում 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի համեմատությունը՝ ՀՀ 2007թ. բյուջետային տարվա փաստացի և ՀՀ 2008թ. բյուջետային տարվա համար ճշտված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N<u>o</u> 7 աղյուսակում:

Բացի այդ, էներգետիկայի ոլորտում 2009 թվականին նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային ծրագիրը.

<u>Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագիր (Ասիական զարգացման բանկ)</u>

Ծրագրի նպատակն է կենսական նշանակություն ունեցող գյուղական ճանապարհների վերականգնումը, որոնք հիմնական մայրուղիները կապում են մարզկենտրոնների հետ, որի շրջանակներում 2009 թվականին նախատեսվում է շարունակել ծրագրի առաջին փուլով արդեն իսկ սկսված և երկրորդ փուլով նախատեսված ճանապարհների վերականգնման աշխատանքները:

Միաժամանակ 2009 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ նախատեսվում է իրականացնել հետևյալ նպատակային դրամաշնորհային հետևյալ ծրագրերը.

1. Երթևեկության կառավարման և անվտանգության ծրագրի նախապատրաստման դրամաշնորհային ծրագիր,
2. Երկաթուղու կառուցվածքային ծրագրի նախապատրաստման դրամաշնորհային ծրագիր:

<u>Բնապահպանության ոլորտում</u> ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով (առանց նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ստացվող միջոցների և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) նախատեսվում է հատկացնել 1282.4 մլն դրամ (ՀՀ 2008 թվականի հաստատված պետական բյուջեով 1057.1 մլն դրամի դի-

մաց), որից 1199.3 մլն դրամ գումարն ուղղվելու է ընթացիկ ծախսերին, իսկ 83.1 մլն դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին: Ոլորտին հատկացված միջոցներն ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը:

Հանրապետության ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի իրականացման համար նախատեսվում է հատկացնել 112.0 մլն դրամ՝ ՀՀ 2008 թվականի հաստատված պետական բյուջեով նախատեսված ծախսերի նկատմամբ ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող ծախսերի ավելացումը (11.4 մլն դրամի չափով) հիմնականում պայմանավորված է աշխատանքների ծավալների ավելացմամբ (Ծաղկաձորի շրջակա միջավայրի աղտոտվածության վիճակի և Ամբերդում օդի անդրսահմանային աղտոտման մոնիտորիրնգի իրականացման նպատակով), ինչպես նաև աշխատավարձի աճով:

«Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ում սարքավորումների, ինչպես նաև հատուկ սարքավորումների ձեռքբերման նպատակով նախատեսվել է համապատասխանաբար 1.1 մլն դրամ և 82.0 մլն դրամ:

Թափոնների ուսումնասիրության համար նախագծով նախատեսվել է 7.0 մլն դրամ:

Ձկան պաշարների համալրման համար նախատեսվել է 80.0 մլն դրամ, որի հաշվին իրականացվելու է Հայաստանի հազվագյուտ և անհետացող ձկնատեսակների արհեստական վերարտադրությունը և դրանց մանրաձկների վերադարձը Սևանա լիճ:

Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման նպատակով նախատեսվել է 4.0 մլն դրամ:

Բնության հատուկ պահպանվող տարածքների գործունեությունն ապահովելու համար նախատեսվում է 440.4 մլն դրամ, որի շրջանակներում «Սևան» և «Դիլիջան» ազգային պարկերում, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետական արգելոցներում և «Սոսու» պուրակ արգելավայրում, ինչպես նաև «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում կատարվելու են ազգային պարկերի և արգելոցների բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման դիտանցի ապահովումը, բնության հուշարձանների պահպանությունը, ինչպես նաև տնկարկների պահպանության և պաշտպանության իրականացումը: ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող ծախսերի ավելացումը (20.9 մլն դրամի չափով) ՀՀ 2008 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ծախսերի նկատմամբ պայմանավորված է աշխատավարձի աճով (8.2 տոկոսի չափով), ինչպես նաև գործուղման ծախսերի նորմատիվների փոփոխությամբ:

Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման նպատակով նախատեսվել է 257.5 մլն դրամ: Ծախսերի ավելացումը 215. 7 մլն դրամի չափով ՀՀ 2008 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ծախսերի նկատմամբ բացատրվում է աշխատանքների

ծավալների ավելացմամբ՝ ծրագրավորվող տարում նախատեսվում է 600 հա ջրածածկ անտառտնկարկների մաքրում՝ 2008 թվականին նախատեսված 95 հա դիմաց:

ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքի լրամշակման ավարտման նպատակով ՀՀ 2009թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 11.0 մլն դրամ:

Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական-տեղեկատվական ծառայությունների իրականացմանը նախատեսվել է ուղղել 16.9 մլն դրամ: Ծախսերի աճը ՀՀ 2008 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ծախսերի նկատմամբ (2.0 մլն դրամի չափով) պայմանավորված է նախարարության պաշտոնական կայքի, էլեկտրոնային փոստի և ինտերնետ կապի եռալեզու ներկայացման աշխատանքների ծախսերով:

Ջրային պետական կադաստրի տեխնիկական իրականացման ծախսային ծրագրին, ինչպես նաև *ջրային աղբյուրների գույքագրման* նպատակով (Սյունիքի, Վայոց Ձորի, Լոռու և Երևան քաղաքի 946 խորքային հորերի և 750 բնաղբյուրների գույքագրում) նախատեսվել է համապատասխանաբար՝ 23.2 մլն դրամ և 48.7 մլն դրամ:

Բնապահպանության ոլորտում նորմատիվային փաստաթղթերի մշակման նպատակով (այդ թվում՝ թափոնների ոլորտին վերաբերող, ինչպես նաև օդի հիմնական աղտոտիչների ազդեցության հետազոտման և մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների ներգործությունը կարգավորող նորմատիվային փաստաթղթերի մշակում) նախատեսվել է ուղղել 20.2 մլն դրամ:

ՀՀ տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգի վարման աշխատանքների իրականացման նպատակով նախատեսվել է 18.0 մլն դրամ:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով բնապահպանության ոլորտում նախատեսվում է իրականացնել հետևյալ նոր ծրագրերը.

Օդի աղտոտվածության մոնիթորինգի դիտացանցի արդիականացման, մոնիթորինգային տվյալների ներկայացուցչության ապահովման նպատակով ուղղվել է 11.5 մլն դրամ:

Անտառի վնասատուների և հիվանդածին միջատների դեմ պայքարի էկոլոգիապես անվտանգ նոր տեխնոլոգիաների մշակման աշխատանքներին նախատեսվել է 15.0 մլն դրամ:

«*Հայաստանի Հանրապետության ազգային ծրագրի մասին*» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող 6 միջոցառումների իրականացման նպատակով նախատեսվել է 123.6 մլն դրամ:

Սևանա լճի շրջակայքի ջրածածկվող անտառային տարածքների գույքագրման և քարտեզագրման աշխատանքների իրականացման նպատակով նախատեսվել է ուղղել 10.0 մլն դրամ:

Այս ոլորտում ՀՀ 2009թ. պետական բյուջեի նախագծով նախատեսված բյուջետային ծախսերի համեմատությունը՝ 2007թ. բյուջետային տարվա փաստացի և 2008թ. բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 8 աղյուսակում (առանց վարկային ծրագրի և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի):

Բացի այդ, 2009 թվականին ավարտին է հասցվելու **Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման վարկային և դրամաշնորհային ծրագրերը**, որոնց գծով 2009 թվականին նախատեսվում են միայն ծրագրերի աուդիտի և ծրագրի իրականացման գրասենյակի պահպանման ծախսերը, ինչպես նաև **Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի անտառների զարգացման շվեդական դրամաշնորհային ծրագիրը**:

Հիդրոօդերևութաբանության ոլորտում հիդրոօդերևութաբանական ծառայությունների իրականացման համար նախատեսվել է 534.6 մլն դրամ, որի հաշվին իրականացվելու է ՀՀ պետական իշխանության մարմիններին, ազգաբնակչությանը, տնտեսության տարբեր ճյուղերին հիդրոօդերևութաբանական փաստացի պայմանների և դրանց սպասվող փոփոխությունների, կլիմայի ներկա և հետագա վիճակի վերաբերյալ տեղեկատվությամբ ապահովումը: Ծախսերի գերազանցումը 133.7 հազ դրամի չափով ՀՀ 2008թ. հաստատված բյուջեով նախատեսված ծախսերի նկատմամբ պայմանավորված է աշխատավարձի աճով՝ 132.5 մլն դրամի չափով (գործող միջին ամսական աշխատավարձը 34.25 հազ դրամի դիմաց նախատեսվել է 45.9 հազ. դրամ) և գործուղման ծախսերի նորմատիվների փոփոխությամբ պայմանավորված ծախսերի նախատեսմամբ՝ 1.2 մլն դրամ:

Այս ոլորտում ՀՀ 2009թ. պետական բյուջեի նախագծով նախատեսված բյուջետային ծախսերի համեմատությունը՝ 2007թ. բյուջետային տարվա փաստացի և 2008թ. բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 8-ա աղյուսակում:

Պետական գույքի կառավարման բնագավառում ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմված են երկու ծրագրերից.

«Աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքներ» ծրագրի գծով 2009թ. նախատեսվում է 21.5 մլն դրամ, (2008 թվականի բյուջետային տարվա համար հաստատված 19.0 մլն դրամի դիմաց);

«Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների և գնահատման աշխատանքների իրականացում» ծրագրով նախատեսվում է 35.2 մլն դրամ (2008 թվականի բյուջետային տարվա համար հաստատված 30.7 մլն դրամի դիմաց:

Քաղաքաշինության ոլորտի ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով գծով հատկացումները նախատեսվել են՝ հիմնվելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ 2009-2011 թթ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագրի, այլ համապատասխան օրենսդրական և իրավական ակտերի հիման վրա: Նախագծի կազմման հիմքում դրվել են հանրակրթական դպրոցների բարելավման և շինարարության, մշակութային օբյեկտների բարելավման, մարզական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության, երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների և փախստականների բնակապահովման, քաղաքաշինության ոլորտի

նորմատիվատեխնիկական դաշտի կատարելագործման և աղքատության մակարդակի կրճատման սկզբունքները:

Յուրաքանչյուր պետության համար քաղաքաշինությունը ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներից մեկն է, որի զարգացումն էապես կնպաստի պետության առջև ծառացած սոցիալ-տնտեսական մի շարք լուրջ հիմնախնդիրների լուծմանը:

Այս ոլորտում ներկայացված են ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված կապիտալ շինարարության, շինվերանորոգման աշխատանքների, քաղաքաշինության գնագոյացման դաշտի ձևավորման, ՀՀ հանրակրթական դպրոցների, մարզադպրոցների հիմնանորոգման, շինարարության և բարելավման, բնակարանաշինության, մշակութային օբյեկտների հիմնանորոգման և վերականգնման, առողջապահական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման և այլ ծրագրեր:

Քաղաքաշինությունը, լինելով երկրի տարածքային կազմակերպման ու զարգացման, ազգաբնակչության, արտադրողական ուժերի ու միջոցների տեղաբաշխման, բնակավայրերի ու միջբնակավայրային տարածքների կապերի, կառուցապատման ու հատակագծման հիմքը, ընդգրկում է տարածքային պլանավորման, ճարտարապետության, բնակարանային-կոմունալ տնտեսության, շինարարության և շինինդուստրիայի, բնական և տեխնածին երևույթներից տարածքի պաշտպանության ոլորտները: ՀՀ կառավարության ստանձնած պարտավորություններն ապահովելու համար քաղաքաշինության բնագավառի 2009 թվականի համար քաղաքականության հիմնական ուղղություններն ու գերակայություններն են՝

(i) Երկրաշարժի հետևանքով անօթևան ընտանիքների բնակարանով ապահովումը,

(ii) Փախստական ընտանիքների բնակարանային խնդիրների լուծումը,

(iii) Հանրակարթական դպրոցների հիմնանորոգման և բարելավման ծրագրի իրականացումը

(iv) Նոր հանրակրթական դպրոցների շինարարության իրականացումը,

(v) Մարզական օբյեկտների հիմնանորոգումը և նորերի շինարարությունը,

(vi) Մշակութային օբյեկտների հիմնանորոգման և շինարարության իրականացումը,

(vii) Առողջապահական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության աշխատանքների իրականացումը,

(viii) Վարչական օբյեկտների հիմնանորոգումը

(ix) Քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակումը

2009 թվականին առաջնահերթությունը կտրվի շարունակական աշխատանքների հետևյալ ուղղություններին.

1. **Վարչական օբյեկտների շինվերանորոգման** նպատակով նախատեսվել է ընդհանուր առմամբ 2,031,600.0 հազ դրամ, Նախատեսված է վերանորոգել մի շարք պետական մարմինների վարչական շենքեր:

2. **Կրթական օբյեկտների հիմնանորոգման համար** ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 20,006,683.5 հազ դրամ: Նշված գումարից 15,485,291.5 հազ դրամի աշխատանքների պատվիրատու է հանդիսանում ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, 4,521,392.0 հազ դրամինը՝ ՀՀ մարզպետարանները: Հիմնականում նախատեսված են նախորդ տարիներին սկսված ավարտական և շարունակական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքները:

3. **Կրթական օբյեկտների շինարարության նպատակով** նախատեսվել է 2,854,508.7 հազ դրամ որից 2,467,013.7 հազ դրամի պատվիրատուն հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության նախարարությունը և 387,495.0 հազ դրամինը՝ ՀՀ մարզպետարանները: Հիմնականում նախատեսվել են շարունակական օբյեկտներ:

4. **Նոր ավագ դպրոցների հիմնանորոգման** համար նախատեսվել է 2,074.707.0 հազ դրամ:

5. **Միջին մասնագիտական կրթություն** ապահովող օբյեկտների վերանորոգման համար նախատեսվել է 340,700.0 հազ դրամ:

6. **Սպորտ դպրոցների շինվերանորոգման աշխատանքների համար** նախատեսվել է 1,100,000.0 հազ դրամ, այդ թվում շինարարական աշխատանքների համար՝ 252,880.0 հազ և հիմնանորոգման աշխատանքների համար՝ 847,120.0 դրամ: Պատվիրատուն ՀՀ քաղաքաշի-նության նախարարությունն է:

Առաջնորդվելով աղքատության հաղթահարման ռազմավարության ծրագրային գերակայություններով և հիմք ընդունելով «ՀՀ հանրակրթական դպրոցների հիմնանորոգման և բարելավման համալիր ծրագրի» դրույթները՝ հիմնական նպատակի ապահովումն իրականաց-վելու է հետևյալ ուղղություններով նախատեսվող միջոցառումներով.

-հանրակրթական դպրոցների վթարավտանգ մասնաշենքերի վերականգնում-ուժեղացում՝ ապահովելով դրանց շահագործման անվտանգությունը,

-ջեռուցման համակարգերի ներդնում, ապահովելով ջեռուցման ամբողջ սեզոնի ընթացքում ուսումնական գործընթացի անընդհատությունը,

-դպրոցների շենքերի պատշաճ պահպանության ապահովում,

-դպրոցներում սանիտարահիգենիկ անվտանգ պայմանների ապահովում:

7. ***Մշակութային օբյեկտների հիմնանորոգման և բարելավման ծրագրով*** ՀՀ 2009 թ. պետական բյուջեի նախագծով մշակույթային նշանակության օբյեկտների շինվերանորոգման աշխատանքների համար ընդհանուր առմամբ նախատեսվել է 2,088,000.0 հազ դրամ, որից 563,049.3 հազ դրամ նախատեսվել է շինարարության և 1,524,950.7 հազար դրամ հիմնանորոգման համար: Պատվիրատուն հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության նախարարությունը:

8. **Հուշարձանների վերականգնման** համար նախատեսվել է 522.000.0 հազար դրամ:

9. **Սոցիալական նշանակության օբյեկտների հիմնանորոգման և շինարարության** համար նախատեսվել է համապատասխանաբար 79,951.7 հազար դրամ և 266,215.0 հազար դրամ: Նախատեսվում է իրականացնել «Միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կենտրոն»

ՊՈԱԿ-ի «Վետերան օթևան» կացարանի հիմնանորոգման, ինչպես նաև «Գյումրու երեխաների տուն» և «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ների նոր մասնաշենքերի կառուցման աշխատանքներ :

10. **«Առողջպահական օբյեկտների շինվերանորոգման** համար ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 1,430,000.0 հազ դրամ: Հիմնանորոգման համար՝ 1,212,000.0 հազար դրամ, որից 1,081,189.1 հազ դրամի պատվիրատուն ՀՀ քաղաքաշինության նախարարությունն է և 130,810.9 հազար դրամինը ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը: Առողջապահական օբյեկտների շինարարության համար նախատեսվել է 218,000.0 հազար դրամ:

11. **Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարության համար** ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 770.000.0 հազ դրամ: Նախատեսվում է վերակառուցել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան և ՀՀ Շիրակի մարզի Մարալիկ քաղաքների անավարտ շենքեր, ինչպես նաև վերականգնել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի բազմաբնակարան շենք:

12. **Բնակարանային ապահովում՝ բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով** նախատեսվել է 3,675,000.0 հազար դրամ, որից **երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած անձանց** 2,860,000.0 հազար դրամ, իսկ **փախստականներին**՝ 815,000.0 հազար դրամ:

13. **Զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովման և բնակարանային պայմանների բարելավման համար** նախատեսվել է 3000.000.0 հազ դրամ:

14. **Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման** համար նախատեսվել է 41.500.0 հազար դրամ:

15. **Սևանա լճի առափնյա տարածքների ծրագրային փաստաթղթերի մշակման** համար նախատվել է 15,000.0 հազար դրամ:

Այս ոլորտում ՀՀ 2009թ. պետական բյուջեի նախագծով նախատեսված բյուջետային ծախսերի համեմատությունը՝ 2007թ. բյուջետային տարվա փաստացի և 2008թ. բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 9 աղյուսակում (առանց վարկային ծրագրի և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի):

<u>ՀՀ անշարժ գույքի կադաստրի ոլորտում</u>՝ ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է 568,5 մլն դրամ ծախսեր՝ ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով հաստատված 606.1 մլն դրամի դիմաց: Հատկացվող միջոցների հաշվին 2009 թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

1.«Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքների պետական պատվեր՝ 17,000.0 հազար դրամ:

Նախատեսվում է իրականացնել ՀՀ աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի թարմացում և վարում: Իրականացվելու են նաև ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանումների թարմացման և համալրման աշխատանքներ: Հայտով նախատեսվում է նաև իրականացնել ՀՀ սահմաններից դուրս գտնվող թվով 65 հազար աշխարհագրական անվանումների տեղեկատվական բանկի ստեղծման աշխատանքներ: Ներկայացված հաշվարկներում բացակայում են իրականացվելիք աշխատանքների միավոր գների հաշվարկային հիմնավորումները:

2. «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից պետական մասշտաբային շարքի բազային քարտեզների ստեղծման և օդալուսանկարահանման աշխատանքների իրականացման պետական պատվեր՝ 179,124.4 հազ. դրամ:

Նախատեսվում է իրականացնել ՀՀ 3390 քառ.կմ տարածքի 1:10 000 մասշտաբի տեղագրական քարտեզի թարմացման (այդ թվում) և տիեզերալուսանկարահանման, ինչպես նաև ԼՂՀ 1:25 000 մասշտաբի տեղագրական քարտեզների ստեղծում:

3.Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրում՝ 30,000.0 հազ.դրամ:

2009 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել իրավունքների պետական գրանցման մեխանիզմների կատարելագործման և կադաստրային տվյալների մասին տեղեկատվության մատչելիության, անընդհատության և օբյեկտիվության ապահովման աշխատանքներ:

2009 թվականին նախատեսվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 5-ի N0 155 որոշման շրջանակներում տրամադրել շուրջ 60000 անվճար տեղեկատվություն, որի ընդհանուր արժեքը կկազմի մոտավորապես 30,0 մլն դրամ:

4.Անշարժ գույքի կադաստրի վարման ավտոմատացված համակարգի ներդրում, զարգացում և տեղեկատվական բանկի սպասարկում՝ 133,810.0 հազ. դրամ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է համակարգիչների ձեռքբերում (37 հատ՝ յուրաքանչյուրը 680.0 հազ. դրամ), համակարգչային ծրագրային փաթեթների ձեռքբերում և կոմիտեի գերատեսչական ցանցի սպասարկում:

5. Երկրատեղեկատվական համակարգի նախագծում, ներդնում և սպասարկում՝ 87,000.0 հազ. դրամ:

Նախատեսվում է իրականացնել Երեբունու համայնքի բազային երկրատեղեկատվական համակարգի տեղեկատվական բանկի ստեղծում (տեղագրական և կադաստրային 1:2000 մասշտաբի թվային հատակագիծ, ստորգետնյա հաղորդակցուղիների հանութագրում, համակարգի բոլոր տարրերի տվյալների մուտքագրում)

6.«Հողշինմոնիտորինգ»ՊՈԱԿ-ի կողմից անշարժ գույքի գնահատման նոր համակարգի ներդրման նպատակով հողի և դրա վրա գտնվող շենքերի ու շինությունների, անշարժ գույքի շուկայի համակարգված դիտարկումների իրականացման պետական պատվեր՝ 30,000.0 հազ. դրամ:

Նշված ծրագրով 2009 թվականի նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

-Հողամասերի և դրանց վրա կառուցված շենքերի, շինությունների գնային իրավիճակի համակարգված դիտարկումների իրականացում :

- 2009 թվականի ընթացքում անշարժ գույքի շուկայի վերլուծությունների իրականացում ամսական, եռամսյակային, կիսամյակային, 9 ամիսների, 11 ամիսների և տարեկան կտրվածքներով: Վերլուծական ժողովածուներում և համառոտագրերում (հոդվածներում) կներառվեն գրաֆիկական և աղյուսակային գծապատկերներ, կիրականացվի գործարքների քանակական փոփոխությունների միտումների գրաֆիկական վերլուծություն, գների համեմատական փոփոխություններն ու վերլուծությունները կներկայացվեն վիճակագրական վերլուծման համակարգչային վերլուծման SPSS ծրագրային փաթեթի ձևաչափերով (ֆորմատներով):

7.Հասարակության տեղեկատվություն՝ 8,000.0հազ.դրամ:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացվող ընթացիկ և ծրագրային աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը բնակչությանն իրազեկելու նպատակով 2009 թվականին նախատեսվում է պատվիրել՝

- «Կադաստրի տեղակագիր» ամսագրի պատրաստում և հրատարակում 100 օրինակ:
- Բուկլետների պատրաստում և մոնիտորինգի իրականացում և այլն::

8.Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների (համայնքների) սահմանների ամրացում՝ 58,536.0 հազ. դրամ:

Նախատեսվում է Արարատի մարզի 97 համայնքների տեղագրական և համայնքների վարչական սահմանների նկարագրման քարտեզների համադրման և ճշգրտման աշխատանքներ: Համաձայն ներկայացված հիմնավորումների այս ծրագրի աշխատանքների արդյունքում զգալիորեն պետք է ավելանա համայնքային հողերի կառավարելիության, օպտիմալ օգտագործման աստիճանը, ինչպես նաև համայնքային բյուջեների եկամուտները, ուստի ծրագրի իրականացման համար առաջին հերթին շահագրգռված պետք է լինեն համայնքները:

Այս ոլորտում 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված ծախսերի համեմատությունը՝ 2007 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2008 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված են սույն բացատրագրի N 15 աղյուսակում:

Պաշտպանության բնագավառի ծախսերը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են **148,344.9 մլն դրամի** չափով, որից ռազմական կարիքների բավարարմանը՝ **144,159.9 մլն դրամ**:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով պաշտպանության բնագավառի այլ ծախսերը հաշվարկվել են **4,185.0 մլն դրամ**, որից՝

ա) «Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր» ծրագրով՝ **4,129.9 մլն դրամ**,

բ) այլընտրանքային ծառայության կազմակերպման համար՝ **16.2 մլն դրամ**, որից ՀՀ պաշտպանության նախարարության գծով նախատեսվել է՝ **5,7 մլն դրամ**, ՀՀ առողջապահության նախարարության գծով՝ **5.6 մլն դրամ** և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գծով՝ **4.9 մլն դրամ**,

գ) զորակոչիկներին վարորդական իրավունքի վկայականների տրման և քննությունների ընդունման ծախսեր, որի գումարը կազմում է՝ **38.9 մլն դրամ**: Նշված գումարի հաշվարկը կատարվել է 2160 զինվորների հաշվով:

Հասարակական կարգի պահպանության համակարգի ծախսերի ֆինանսավորմանը 2009 թվականի պետական բյուջեից նախատեսվում է ուղղել **49,502.0 մլն դրամ**: Նշված ծախսերը ներառում են ՀՀ ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, պետական պահպանության ծառայության, Հայաստանի փրկարար ծառայության և քրեակատարողական համակարգի ծախսերը: Մասնավորապես՝

ա) ՀՀ Ոստիկանության 2009 թվականի պահպանման ծախսերը նախատեսվել են **24,666.5 մլն դրամի** չափով, որից **22,145.3 մլն դրամն** ուղղվելու է ընթացիկ ծախսերի, իսկ **2,521.2 մլն դրամը**՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը:

Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարները 2009 թվականին ծրագրավորվել են **14,630.1 մլն դրամի** չափով, որը 2008 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **3,773.1 մլն դրամով**, որն էլ իր հերթին պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- **777.2 մլն դրամ** - ՀՀ ոստիկանության թվակազմի ավելացմամբ,
- **2,749.2 մլն դրամ** - ՀՀ ոստիկանության համակարգի զինծառայողների միջին ամսական աշխատավարձերի բարձրացմամբ, մասնավորապես, գլխավոր խումբ՝ 22.2 %-ով, ավագ խումբ՝ 28.1 %-ով, միջին խումբ՝ 20.4 %-ով, կրտսեր խումբ՝ 36.3 %-ով,
- **246.7 մլն դրամ** - ՀՀ ոստիկանության համակարգի տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի և պայմանագրային աշխատողների միջին ամսական աշխատավարձերի համապատասխանաբար՝ 39.4 %-ով և 24.3 %-ով բարձրացմամբ:

Հաշվարկը կատարվել է ՀՀ վարչապետի 1999 թվականի ապրիլի 16-ի N 226, ՀՀ կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 13-ի N 1837-Ն, ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 13-ի N 1554-Ն որոշումներով սահմանված պաշտոնային դրույքաչափերին ու ՀՀ Ոստիկանության թվակազմին համապատասխան:

Այլ վարձատրությունները հաշվարկվել են **1,182.2 մլն դրամի** չափով, որն ուղղվելու է ՀՀ ոստիկանության համակարգի սպաների և ենթասպաների պարենի փոխհատուցմանը և ՀՀ ոստիկանության համակարգի զինծառայողներին համազգեստի դիմաց դրամական փոխհատուց-մանը:

Սոցիալական ապահովության վճարները հաշվարկվել են **212.4 մլն դրամի** չափով՝ «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Շարունակական ծախսերը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1,958.9 մլն դրամի** չափով, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունները **482.3 մլն դրամ**, կոմունալ ծառայությունները՝ **67.5 մլն դրամ,** կապի ծառայությունները՝ **402.4 մլն դրամ**, գույքի և սարքավորումների վարձակալության ծախսերը՝ **71.6 մլն դրամ**, ինչպես նաև արտագերատեսչական (ՀՀ կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 29-ի N 1008-Ն որոշմամբ հաստատված կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանության) ծախսերը՝ **935.1 մլն դրամ**: Նշված ծախսերը հաշվարկվել են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N 298-Ն և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 23-ի N 276-Ն որոշումներով և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2005 թվականի դեկտեմբերի 7-ի N 404-Ն հրամանով սահմանված սակագներին ու նորմաներին համապատասխան:

Գործուղումների գծով ծախսերը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **302.7 մլն դրամի** չափով, որից ներքին գործուղումների գծով՝ **98.7 մլն դրամ**, արտասահմանյան գործուղումների գծով՝ **200.6 մլն դրամ** և այլ տրանսպորտային ծախսերի (զինծառայողների ծառայության նոր վայր տեղափոխվելու) գծով՝ **3.4 մլն դրամի** չափով: Հաշվարկները կատարվել են «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխան:

Պայմանագրային ծառայությունների ձեռքբերման ծախսերը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **117.6 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել վարչական ծառայությունների (մշակութային միջոցառումների անցկացում, վարորդական դասընթացների կազմակերպում և այլ վարչական ծառայություններ) ֆինանսավորմանը՝ **20.9 մլն դրամ**, տեղեկատվական ծառայությունների (գրականության, թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն) ֆինանսավորմանը՝ **8.9 մլն դրամ**, կառավարչական ծառայությունների (արվեստաբանական և մշակութաբանական փորձաքննության ծառայություններ) ֆինանսավորմանը՝ **0.2 մլն դրամ**, կենցաղային և հանրային սննդի ծառայությունների (լվացքատների ծառայություններ) ֆինանսավորմանը՝ **16.0 մլն դրամ**, ներկայացուցչական ծախսերի ֆինանսավորմանը՝ **25.0 մլն դրամ** և ընդհանուր բնույթի այլ ծառայությունների («Երեխայի զարգացման կենտրոն» ՊՈԱԿ-ի, «Արշալույս» առողջարարական ճամբարի

պահպանման և հակահրդեհային անվտանգության համակարգի ծախսեր) ֆինանսավորմանը՝ **46.6 մլն դրամ**:

<u>Ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը</u> ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **57.0 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել.

- **10.0 մլն դրամը**՝ ՀՀ ոստիկանության համակարգի շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (շինանյութերի ձեռքբերում) ֆինանսավորմանը,
- **47.0 մլն դրամը**՝ մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (ՀՀ ոստիկանության համակարգի մեքենաների ընթացիկ նորոգում և տեխնիկական սպասարկում, վերելակների, գույքի և այլ սարքավորումների վերանորոգում) ֆինանսավորմանը:

<u>Նյութերի գծով ծախսերը</u> ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **2,815.8 մլն դրամ** չափով: Նշված գումարից **123.8 մլն դրամը** նախատեսվում է ուղղել գրասենյակային պիտույքների ձեռքբերմանը, **709.9 մլն դրամը**՝ ՀՀ ոստիկանության համակարգի զինծառայողների համազգեստի ձեռքբերմանը, **1,430.1 մլն դրամը**՝ տրանսպորտային նյութերի (բենզինի, դիզելային վառելիքի, յուղերի, ավտոպահեստամասերի) ձեռքբերմանը, **452.8 մլն դրամը**՝ կենցաղային և հանրային սննդի նյութերի (որից 429.4 մլն դրամը՝ ՀՀ ոստիկանության համակարգի զինծառայողների սննդամթերքի, 17.0 մլն դրամը՝ հիգիենիկ նյութերի և 6.4 մլն դրամը՝ կենցաղային ապրանքների) ձեռքբերմանը, և **99.2 մլն դրամը**՝ հատուկ նպատակային այլ նյութերի՝ մեդալների, շքանշանների, ծառայության ընթացքում բարձր ցուցանիշների ապահովման դեպքում՝ հուշանվերների և այլն, ձեռքբերմանը:

<u>Դրամաշնորհները</u> ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **20.8 մլն դրամ**, որից **20.0 մլն դրամը** նախատեսվում է ուղղել «Դինամո» մարզական հասարակական կազմակերպությանը, իսկ **0.8 մլն դրամը**՝ միջազգային առաջնություններին մասնակցելու անդամակցությանը:

<u>Սոցիալական նպաստները</u> ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **164.0 մլն դրամի** չափով, որից.

- **140.0 մլն դրամ** - ՀՀ ոստիկանության համակարգի ծառայողների առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու արձակման նպաստների վճարման համար: Հաշվարկները կատարվել են «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:
- **13.0 մլն դրամ** - ՀՀ ոստիկանության ծառայողների և նրանց ուղեկցող ընտանիքի անդամների արձակուրդի վայր մեկնելու հետ կապված ճանապարհածախսի փոխհատուցման համար,

- **11.0 մլն դրամ** - ՀՀ ոստիկանության ծառայողների առողջարանային բուժման ուղեգրերի ձեռքբերման համար,

<u>Հարկերի, պարտադիր վճարների և տուրքերի</u> գծով ծախսեր ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **6.1 մլն դրամի** չափով, որից.

- **2.1 մլն դրամ** - ՀՀ ոստիկանության համակարգի շենք-շինությունների պետական գրանցման հետ կապված տուրքեր,
- **4.0 մլն դրամ** - ՀՀ ոստիկանության կողմից ձեռքբերվող տրանսպորտային միջոցների գրանցման, հաշվառման, տեխնիկական անձնագրերի և պետավտոհամարանիշների հատկացման գծով տուրքերի վճարմանը:

<u>Այլ ծախսերը</u> ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **677.7 մլն դրամ**, որն ուղվելու է կենսաթոշակառուների նյութական օգնության, մարզական միջոցառումների անցկացման և այլ ծախսերի ֆինանսավորմանը, որն իր մեջ ներառում է ընթացիկ ծախսերի գծով այլ հոդվածներում չընդգրկված ծախսեր, ինչպես նաև տարբեր տեսակի ծառայությունների մատուցման ծախսեր:

<u>Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը</u> ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **2,521.2 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել.

- **30.0 մլն դրամ**՝ ՀՀ ոստիկանության համակարգի զինծառայողների համար թվով 3 բնակարանների ձեռքբերմանը,
- **1,072.3 մլն դրամ**՝ ՀՀ ոստիկանության համակարգի շենքեր և շինությունների կառուցմանը,
- **378.8 մլն դրամ**՝ ՀՀ ոստիկանության համակարգի մի շարք շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգման աշխատանքների ֆինանսավորմանը,
- **542.7 մլն դրամ**՝ տրանսպորտային միջոցների (42 մարդատար, 2 բեռնատար, 3 ավտոբուս, 2 միկրոավտոբուս, 1 տրակտոր և 1 ավտոկռունկ) ձեռքբերման ծախսերի ֆինանսավորմանը,
- **457.4 մլն դրամ**՝ վարչական սարքավորումների (կահույք, համակարգչային սարքավորումներ, կապի սարքավորումներ և այլն) ձեռքբերմանը,
- **40.0 մլն դրամ**՝ նախագծահետազոտական աշխատանքների ֆինանսավորմանը:

Բացի այդ, ՀՀ ոստիկանությանը նախատեսվել է **236.2 մլն դրամ**՝ 03 բաժնի 01 խումբի 01 դասի «Պետավտոհամարանիշների ձեռքբերում» ծրագրով, **173.6 մլն դրամ**՝ 03 բաժնի 01 խումբի 01 դասի «ՀՀ անձնագրերի բլանկների տպագրություն» ծրագրով, **81.9 մլն դրամ**՝ 07 բաժնի 01 խումբի 01 դասի «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողների և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» ծրագրով, **520.3 մլն դրամ**՝ 09 բաժնի 04 խումբի 01 դասի «Բարձրագույն

մասնագիտական կրթություն» և «Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» ծրագրերով:

<u>բ) Հայաստանի փրկարար ծառայության</u> համակարգի պահպանման ծախսերի ֆինանսավորմանը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է ուղղել **4,237.9 մլն դրամ**, որից ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը՝ **4,149.0 մլն դրամ**, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին՝ **88.9 մլն դրամ**: Մասնավորապես.

<u>Աշխատողների աշխատավարձերի, հավելավճարների և քաղաքացիական ծառայողների պարգևատրումները</u> ՀՀ 2009 թվականին ծրագրավորվել են՝ **3,072.1 մլն դրամ** գումարի չափով, որը ՀՀ 2008 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ աճել է **1,145.0 մլն դրամի** չափով, պայմանավորված փրկարարական ծառայողների միջին ամսական աշխատավարձերի զգալի ավելացմամբ, մասնավորապես, գլխավոր խումբ՝ 105.0 %-ով, ավագ խումբ՝ 115.4 %-ով, միջին խումբ՝ 116.6 %-ով, կրտսեր խումբ՝ 76.0 %-ով, ինչպես նաև տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի գծով՝ 30.0 %-ով:

Հաշվարկները կատարվել են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2318-Ն և N 2323-Ն որոշումներով սահմանված Հայաստանի փրկարար ծառայության ծառայողների պաշտոնային դրույքաչափերին և թվակազմին համապատասխան:

<u>Այլ վարձատրությունները</u> հաշվարկվել են **395.3 մլն դրամի** չափով, որն ուղղվելու է փրկարարական ծառայողների պարենի փոխհատուցմանը (յուրաքանչյուր ծառայողին ամսական 10000 դրամ): Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2323-Ն որոշմամբ սահմանված չափին համապատասխան:

<u>Սոցիալական ապահովագրության վճարները</u> հաշվարկվել են **86.0 մլն դրամի** չափով՝ «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

<u>Շարունակական ծախսերը</u> ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **138.0 մլն դրամի** չափով, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունները՝ **67.1 մլն դրամ**, կոմունալ ծառայությունները՝ **28.5 մլն դրամ** և կապի ծառայությունները՝ **42.4 մլն դրամ**: Նշված ծախսերը հաշվարկվել են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N 298-Ն, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 23-ի N 276-Ն և 2005 թվականի օգոստոսի 4-ի N 1171-Ն որոշումներով և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2005 թվականի դեկտեմբերի 7-ի N 404-Ն հրամանով սահմանված սակագներին ու նորմաներին համապատասխան:

<u>Գործուղումների գծով ծախսերը</u> ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել է **34.3 մլն դրամ**, որն ամբողջությամբ ուղղվելու է ներքին գործուղումներին: Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխան:

Ներկայացուցչական ծախսերը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **5.0 մլն դրամ**, որն ուղղվելու է 2009 թվականին թվով 12 միջազգային կազմակերպություններից բնական և տեխնածին աղետների կանխարգելման և հետևանքների վերացման գծով պատվիրակությունների ընդունելությունների ժամանակ ծախսերի ֆինանսավորմանը:

Մասնագիտական ծառայությունները ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել է **4.8 մլն դրամ**, որն ուղղվելու է փրկարար ծառայության համակարգի ավտոմեքենաների տեխնիկական ստուգատեսի անցկացման աշխատանքների ֆինանսավորմանը:

Նյութերի գծով ծախսերը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **322.9 մլն դրամի** չափով: Նշված գումարից **13.6 մլն դրամը** նախատեսվում է ուղղել գրասենյակային պիտույքների, **82.2 մլն դրամը**՝ փրկարարական ծառայողների համազգեստի, **199.3 մլն դրամը**՝ տրանսպորտային նյութերի (բենզին, դիզելային վառելիք և յուղեր), **1.0 մլն դրամը**՝ առողջապահական և լաբորատոր նյութերի (դեղորայք) և **26.8 մլն դրամը**՝ հատուկ նպատակային այլ նյութերի (տարբեր տեսակի փրկարարական պարագաներ) ձեռքբերման ծախսերի ֆինանսավորմանը:

Սոցիալական նպաստները հաշվարկվել են **88.1 մլն դրամի** չափով, որն ուղղվելու է փրկարարական ծառայողներին առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու արձակման նպաստների վճարմանը:

Հարկերի, պարտադիր վճարների և տուրքերի գծով ծախսերը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **2.5 մլն դրամի** չափով, որն ուղղվելու է արտասահմանից ապրանքների տեսքով ստացվող օգնությունների հետ կապված պետական գրանցման ծառայությունների և փրկարար ծառայության կողմից ձեռքբերվող տրանսպորտային միջոցների գրանցման, հաշվառման, տեխնիկական անձնագրերի և պետավտոհամարանիշների հատկացման գծով տուրքերի վճարմանը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են 88.9 մլն դրամի չափով, որը նախատեսվում է ուղղել.

- **56.0 մլն դրամ**՝ տրանսպորտային միջոցների՝ 1 միավոր շտապ օգնության ավտոմեքենա և 1 միավոր 50մ թռիչքով ավտոսանդուղք ձեռքբերմանը,
- **9.0 մլն դրամ**՝ վարչական սարքավորումների (կահույք և համակարգչային տեխնիկա) ձեռքբերմանը,
- **23.9 մլն դրամ**՝ այլ մեքենաների սարքավորումների (ալպինիստական պարանների, լեռնադահուկորդի հանդերձանք, ժայռային սեպեր, գիշերային տեսանելիության

սարքեր, ակուստիկ սարքավորումներ և այլ փրկարարական պարագաներ) ձեռքբերմանը:

Բացի այդ, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը նախատեսվել է 04 բաժնի 09 խմբի 01 դասի «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ծրագրով՝ **143.6 մլն դրամ**, որը նախատեսվում է ուղղել Արմավիրի (թվով 15) և Արագածոտնի (թվով 15) մարզերում տեղակայված արգենտինյան գեներատորների շահագործման և պահպանման ծախսերի ֆինանսավորմանը, ինչպես նաև 09 բաժնի 05 խմբի 02 դասի «Կադրերի պատրաստման և վերապատրաստման ծառայություններ» և «Օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ գործուղված փրկարարական ծառայողների ուսուցում» ծրագրերով համապատասխանաբար՝ **60.6 մլն դրամ** և **18.8 մլն դրամ**:

գ) Քրեակատարողական ծառայության 2009 թվականի պահպանման ծախսերը նախատես-վել են **7,072.5 մլն դրամի** չափով, որից **5,208.0 մլն դրամն** ուղղվելու է ընթացիկ ծախսերի, իսկ **1,864.5 մլն դրամը՝** ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը, մասնավորապես.

Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարները 2009 թվականին ծրագրավորվել են **3,105.9 մլն դրամի** չափով, որը 2008 թվականի նկատմամբ աճել է **972.7 մլն դրամով**, որն էլ, իր հերթին, պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- **328.5 մլն դրամ՝** - Քրեակատարողական ծառայության թվակազմը 428-ով ավելացմամբ,
- **303.4 մլն դրամ՝** - Քրեակատարողական ծառայության աշխատավարձերի բազային դրույքաչափը գործող 12.0 հազար դրամի փոխարեն 2009 թվականին 14.4 հազար դրամ նախատեսմամբ,
- **19.8 մլն դրամ՝** - տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի և տեխնիկական սպասարկում իրականացնող դատապարտյալների նվազագույն աշխատավարձը գործող 25.0 հազար դրամի դիմաց 2009 թվականին 30.0 հազար դրամ սահմանմամբ,
- **321.0 մլն դրամ՝** - Քրեակատարողական ծառայության անձնակազմի միջին ամսական աշխատավարձերի ավելացմամբ, մասնավորապես, գլխավոր խումբ՝ 33.6 %-ով, ավագ խումբ՝ 64.7 %-ով, միջին խումբ՝ 21.0 %-ով, կրտսեր խումբ՝ 2.1 %-ով:

Հաշվարկները կատարվել են «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված աշխատավարձի սանդղակին համապատասխան:

Այլ վարձատրությունները հաշվարկվել են **254.6 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել քրեակատարողական համակարգի սպաների և ենթասպաների պարենի փոխհատուցմանը (յուրաքանչյուր զինծառայողին ամսական 10000 դրամ):

Սոցիալական ապահովագրության վճարները հաշվարկվել են **41.5 մլն դրամի** չափով՝ «Պարտադիր սոցիալական ապահովագրական վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Շարունակական ծախսերը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **337.4 մլն դրամի** չափով, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունները՝ **282.4 մլն դրամ**, կոմունալ ծառայությունները՝ **29.5 մլն դրամ** և կապի ծառայությունները՝ **25.5 մլն դրամ**: Նշված ծախսերը հաշվարկվել են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N 298-Ն և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 23-ի N 276-Ն որոշումներով և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2005 թվականի դեկտեմբերի 7-ի N 404-Ն հրամանով սահմանված սակագներին ու նորմաներին համապատասխան:

Գործուղումների գծով ծախսերը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **16.0 մլն դրամի** չափով, որից ներքին գործուղումների գծով՝ **8.5 մլն դրամ** և արտասահմանյան գործուղումների համար՝ **7.5 մլն դրամ**: Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխան:

Տեղեկատվական ծառայությունները ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **15.0 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել թերթերի, ամսագրերի տեղեկագրերի ձեռքբերմանը, ինչպես նաև տպագրական աշխատանքների ֆինանսավորմանը:

Ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **80.1 մլն դրամ** գումարի չափով, որը նախատեսվում է ուղղել.

- **70.0 մլն դրամը**՝ Քրեակատարողական ծառայության շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (շինանյութերի ձեռքբերում) ֆինանսավորմանը,
- **10.1 մլն դրամը**՝ մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (Քրեակատարողական ծառայության տրանսպորտային միջոցների, ինչպես նաև խոհանոցային էլեկտրական մի շարք սարքերի, էլեկտրագեներատորների, ջրի և գազի հաշվիչների և այլ սարքավորումների վերանորոգման աշխատանքների) ֆինանսավորմանը:

Նյութերի գծով ծախսերը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1,321.6 մլն դրամ** չափով: Նշված գումարից **12.7 մլն դրամը** նախատեսվում է ուղղել գրասենյակային պիտույքների ձեռքբերմանը, **201.2 մլն դրամը**՝ քրեակատարողական ծառայողների և կալանավորների համազգեստի ձեռքբերմանը, **118.3 մլն դրամը**՝ տրանսպորտային նյութերի (բենզին, դիզելային վառելիք, յուղեր) ձեռքբերմանը, **43.0 մլն դրամը**՝ առողջապահական և լաբորատոր նյութերի (դեղորայքի) ձեռքբերմանը, **906.4 մլն դրամը**՝ կենցաղային և հանրային սննդի նյութերի (որից մաքրիչ նյութեր՝ 12.0 մլն դրամ, հիգիենիկ

նյութեր՝ 44.5 մլն դրամ, կալանավորների և դատապարտյալների համար սննդամթերք՝ 795.0 մլն դրամ, տնտեսական նյութեր՝ 9.4 մլն դրամ, կենցաղային այլ նյութեր՝ 45.5 մլն դրամ) ձեռքբերմանը, **39.9 մլն դրամը**՝ հատուկ նպատակային այլ նյութերի (փշալար, կրակմարիչ, կրծքանշան և այլն) ձեռքբերմանը:

Սոցիալական նպաստները հաշվարկվել են **33.5 մլն դրամի** չափով, որից

- **30.0 մլն դրամ** - քրեակատարողական ծառայողների առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու արձակման նպաստների վճարման համար,
- **3.5 մլն դրամ** - քրեակատարողական ծառայողների և նրանց ուղեկցող ընտանիքի անդամների արձակուրդի վայր մեկնելու հետ կապված ճանապարհածախսի փոխհատուցման համար:

Հաշվարկները կատարվել են «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Հարկերի, պարտադիր վճարների և տուրքերի գծով ծախսերը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **2.3 մլն դրամ**, որից **0.8 մլն դրամը**՝ քրեակատարողական համակարգի ավտոմեքենաների գրանցման համար, իսկ **1.5 մլն դրամը**՝ ավտոմեքենաների տեխնիկական զննության գծով հարկերի վճարմանը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1,864.5 մլն դրամի** չափով, մասնավորապես.

- **1,328.7 մլն դրամ**՝ ցմահ դատապարտյալների քրեակատարողական հիմնարկի շինարարական աշխատանքների ֆինանսավորմանը,
- **200.0 մլն դրամ՝** «Կոշ» քրեակատարողական հիմնարկի հիմնանորոգման աշխատանքների ֆինանսավորմանը,
- **180.0 մլն դրամ՝** «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի հիմնանորոգման աշխատանքների ֆինանսավորմանը,
- **35.5 մլն դրամ**՝ տրանսպորտային միջոցների (թվով 6 մարդատար և 4 բեռնատար ավտոմեքենաներ) ձեռքբերմանը,
- **120.0 մլն դրամ**՝ վարչական սարքավորումների (կահույք, տպիչներ, համակարգչային սարքավորումներ, հեռախոսային կայաններ, լուսանկարչական սարքավորումներ, կենցաղային և հասարակական սննդի սարքավորումներ, բժշկական սարքավորումներ և այլ վարչական սարքավորումներ) ձեռքբերմանը,
- **0.3 մլն դրամ**՝ ցմահ դատապարտյալների քրեակատարողական հիմնարկի շինարարական աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի վերանայմանը:

ղ) Ազգային անվտանգության գծով 2009 թվականի ծախսերը նախատեսվել են **13,525.1 մլն դրամ**, որից «Ազգային անվտանգության ապահովում» ծրագրով՝ **12,109.2 մլն դրամ**, իսկ «Պետական պահպանության ապահովում» ծրագրով՝ **1,415.9 մլն դրամ**.

1. «Ազգային անվտանգության ապահովում» ծրագրով 2009 թվականին նախատեսվում է **12,109.2 մլն դրամ**, որից՝ **9,116.9 մլն դրամն** ուղղվելու է ընթացիկ ծախսերի, իսկ **2,992.2 մլն դրամը**՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը: Մասնավորապես.

Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարները 2009 թվականին ծրագրավորվել են **5,060.6 մլն դրամի** չափով, որը 2008 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **360.4 մլն դրամով**, որն էլ, իր հերթին, պայմանավորված է ազգային անվտանգության ծառայողների միջին ամսական աշխատավարձերի բարձրացմամբ, մասնավորապես, ավագ խումբ՝ 60.2 %-ով, միջին խումբ՝ 43.2 %-ով, կրտսեր խումբ՝ 10.4 %-ով,

Այլ վարձատրությունները հաշվարկվել են **628.2 մլն դրամի** չափով, որն ուղղվելու է ազգային անվտանգության համակարգի սպաների և ենթասպաների պարենի փոխհատուցմանը և ազգային անվտանգության համակարգի զինծառայողներին համազգեստի դիմաց դրամական փոխհատուցմանը:

Սոցիալական ապահովագրության վճարները հաշվարկվել են **46.6 մլն դրամի** չափով՝ «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Շարունակական ծախսերը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **730.9 մլն դրամի** չափով, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունները՝ **315.8 մլն դրամ**, կոմունալ ծառայությունները՝ **121.1 մլն դրամ** և կապի ծառայությունները՝ **294.0 մլն դրամ**: Նշված ծախսերը հաշվարկվել են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N 298-Ն և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 23-ի N 276-Ն որոշումներով և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2005 թվականի դեկտեմբերի 7-ի N 404-Ն հրամանով սահմանված սակագներին ու նորմաներին համապատասխան:

Գործուղումների գծով ծախսերը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **400.0 մլն դրամի** չափով, որից ներքին գործուղումների գծով՝ **150.0 մլն դրամ**, իսկ արտասահմանյան գործուղումների գծով՝ **250.0 մլն դրամ**: Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխան:

Պայմանագրային ծառայությունների ձեռքբերման ծախսերը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **33.3 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել վարչական ծառայությունների (մշակութային միջոցառումների անցկացում և այլն) ֆինանսավորմանը՝ **1.9 մլն դրամ**, կենցաղային և հանրային սննդի ծառայությունների (լվացքատների ծառայություններ) ֆինանսավորմանը՝ **6.4 մլն դրամ**, ներկայացուցչական

ծախսերի (տարբեր երկրների հատուկ ծառայությունների ղեկավարների և պատվիրակությունների ընդունելությունների ծախսեր) ֆինանսավորմանը՝ **25.0 մլն դրամ**:

<u>Ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը</u> ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **19.7 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել ազգային անվտանգության համակարգի շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (շինանյութերի ձեռքբերում) ֆինանսավորմանը:

<u>Նյութերի գծով ծախսերը</u> ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1,646.8 մլն դրամ** չափով: Նշված գումարից **55.4 մլն դրամը** նախատեսվում է ուղղել գրասենյակային պիտույքների ձեռքբերմանը, **213.2 մլն դրամը**՝ ազգային անվտանգության համակարգի զինծառայողների համազգեստի ձեռքբերմանը, **793.3 մլն դրամը**՝ տրանսպորտային նյութերի (բենզին, դիզելային վառելիք, յուղեր) ձեռքբերմանը, **578.1 մլն դրամը**՝ կենցաղային և հանրային սննդի նյութերի, (որից 553.1 մլն դրամը՝ սննդամթերքի, 25.0 մլն դրամը՝ կենցաղային այլ նյութերի) ձեռքբերմանը, և **6.8 մլն դրամը**՝ հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերմանը:

<u>Սոցիալական նպաստները</u> հաշվարկվել են **49.7 մլն դրամի** չափով: Նշված գումարները նախատեսվում է ուղղել ազգային անվտանգության համակարգի ծառայողների առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու արձակման նպաստների վճարմանը:

Հաշվարկները կատարվել են «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

<u>Այլ ծախսերը</u> ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **501.2 մլն դրամ** գումարի չափով, որն իր մեջ ներառում է ընթացիկ ծախսերի գծով այլ հոդվածներում չընդգրկված ծախսեր, ինչպես նաև տարբեր տեսակի ծառայությունների մատուցման ծախսեր:

<u>Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը</u> 2009 թվականին նախատեսվել են 2,992.2 մլն դրամի չափով, որը նախատեսվում է ուղղել.

- **330.0 մլն դրամ**՝ ՀՀ միջպետական սահմանի շինարարական աշխատանքների ֆինանսավորմանը,
- **690.2 մլն դրամ**՝ ազգային անվտանգության համակարգի մի շարք շենքեր և շինությունների շինարարական աշխատանքների ֆինանսավորմանը,
- **829.0 մլն դրամ**՝ ազգային անվտանգության ծառայության համակարգի մի շարք շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման աշխատանքների ֆինանսավորմանը,
- **530.7 մլն դրամ**՝ տրանսպորտային միջոցների (մարդատար և բեռնատար ավտոմեքենաների) ձեռքբերման ծախսերի ֆինանսավորմանը
- **537.3 մլն դրամ**՝ վարչական սարքավորումների (կահույք, համակարգչային սարքավորումներ, կապի սարքավորումներ և այլն) ձեռքբերմանը,

- **75.0 մլն դրամ**՝ նախագծահետազոտական աշխատանքների ֆինանսավորմանը:

Բացի այդ, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանը նախատեսվել է **26.8 մլն դրամ**՝ 07 բաժնի 01 խումբի 01 դասի «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողների և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» ծրագրով, **272.7 մլն դրամ**՝ 09 բաժնի 04 խումբի 01 դասի «Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» ծրագրով:

2. «Պետական պահպանության ապահովում» ծրագրով 2009 թվականին նախատեսվում է **1,415.9 մլն դրամ**, որից՝ **1,315.6 մլն դրամն** ուղղվելու է ընթացիկ ծախսերի, իսկ **100.3 մլն դրամը**՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը: Մասնավորապես.

Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարները 2009 թվականին ծրագրավորվել են **810.2 մլն դրամի** չափով, որը 2008 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **259.5 մլն դրամով**, որն էլ իր հերթին պայմանավորված է պետական պահպանության ծառայողների թվակազմի ավելացմամբ, ինչպես նաև միջին ամսական աշխատավարձերի բարձրացմամբ, մասնավորապես, գլխավոր խումբ՝ 32.3 %-ով, ավագ խումբ՝ 20.8 %-ով, միջին խումբ՝ 27.8 %-ով, կրտսեր խումբ՝ 32.1 %-ով,

Այլ վարձատրությունները հաշվարկվել են **68.5 մլն դրամի** չափով, որն ուղղվելու է պետական պահպանության ծառայության համակարգի զինծառայողների պարենի փոխհատուցմանը:

Սոցիալական ապահովագրության վճարները հաշվարկվել են **6.7 մլն դրամի** չափով՝ «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Շարունակական ծախսերը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **41.4 մլն դրամի** չափով, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունները՝ **21.7 մլն դրամ**, կոմունալ ծառայությունները՝ **3.5 մլն դրամ**, կապի ծառայությունները՝ **16.2 մլն դրամ**: Նշված ծախսերը հաշվարկվել են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N 298-Ն և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի մայիսի 23-ի N 276-Ն որոշումներով և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2005 թվականի դեկտեմբերի 7-ի N 404-Ն հրամանով սահմանված սակագներին ու նորմաներին համապատասխան:

Գործուղումների գծով ծախսերը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **95.0 մլն դրամի** չափով, որից ներքին գործուղումների գծով՝ **20.0 մլն դրամ**, իսկ արտասահմանյան գործուղումների գծով՝ **75.0 մլն դրամ**: Հաշվարկը կատարվել է ՀՀ

կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխան:

Պայմանագրային ծառայությունների ձեռքբերման ծախսերը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **6.5 մլն դրամի** չափով, որից **0.5 մլն դրամը** նախատեսվում է ուղղել կենցաղային և հանրային սննդի ծառայությունների (լվացքատների ծառայություններ), իսկ **6.0 մլն դրամը**՝ ընդհանուր բնույթի այլ ծառայությունների ֆինանսավորմանը:

Ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **35.0 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել.

- **5.0 մլն դրամը**՝ պետական պահպանության ծառայության շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի ֆինանսավորմանը,
- **30.0 մլն դրամը**՝ մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (պահեստամասերի ձեռքբերում) ֆինանսավորմանը:

Նյութերի գծով ծախսերը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **169.9 մլն դրամ** չափով: Նշված գումարից **6.4 մլն դրամը** նախատեսվում է ուղղել գրասենյակային պիտույքների ձեռքբերմանը, **29.3 մլն դրամը**՝ պետական պահպանության ծառայության համակարգի զինծառայողների համազգեստի ձեռքբերմանը, **127.9 մլն դրամը**՝ տրանսպորտային նյութերի (բենզին, դիզելային վառելիք, յուղեր) ձեռքբերմանը և **6.3 մլն դրամը**՝ կենցաղային և հանրային սննդի նյութերի ձեռքբերմանը:

Սոցիալական նպաստները հաշվարկվել են **18.1 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել պետական պահպանության ծառայության համակարգի ծառայողների առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու հետ կապված արձակման նպաստների վճարմանը: Հաշվարկները կատարվել են «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Հարկերի, պարտադիր վճարների և տուրքերի գծով ծախսերը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **0.3 մլն դրամ**, որը նախատեսվում է ուղղել պետական պահպանության ծառայության կողմից ձեռքբերվող տրանսպորտային միջոցների գրանցման, հաշվառման, տեխնիկական անձնագրերի և պետավտոհամարանիշների հատկացման, գծով վճարներին:

Այլ ծախսերը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **64.0 մլն դրամ** գումարի չափով, որն իր մեջ ներառում է ընթացիկ ծախսերի գծով այլ հոդվածներում չընդգրկված ծախսեր, ինչպես նաև տարբեր տեսակի ծառայությունների մատուցման ծախսեր:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **100.3 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել.

- **20.0 մլն դրամ**՝ պետական պահպանության ծառայության զինծառայողների համար թվով 2 բնակարանների ձեռքբերման ծախսերի ֆինանսավորմանը,
- **40.0 մլն դրամ**՝ տրանսպորտային միջոցների (թվով 5 արտասահմանյան արտադրության մարդատար ավտոմեքենաներ) ձեռքբերմանը,
- **18.6 մլն դրամ**՝ վարչական սարքավորումների (կահույք, համակարգչային տեխնիկա, կենցաղային սարքավորումներ և այլն) ձեռքբերմանը,
- **21.7 մլն դրամ**՝ այլ մեքենաներ և սարքավորումների (տարբեր տեսակի ռադիոկայաններ, մարտկոցներ, պատճենահանող մեքենա, թուղթ ոչնչացնող սարք) ձեռքբերմանը:

Բացի այդ, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայությանը նախատեսվել է **1.1 մլն դրամ**՝ 07 բաժնի 01 խումբի 01 դասի «Դեղորայքի տրամադրում պետական պահպանության ծառայությանը» ծրագրով, **25.0 մլն դրամ**՝ 07 բաժնի 01 խումբի 03 դասի «Ներդրումներ պետական պահպանության ծառայությունում բժշկական սարքավորումների ձեռքբերման համար» ծրագրով, **20.0 մլն դրամ**՝ 09 բաժնի 05 խումբի 02 դասի «Վերապատրաստման ծառայություններ» ծրագրով:

ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքներին պետական բյուջեից անհատույց և անվերադարձ հատկացումներ կարող են նախատեսվել ֆինանսական համահարթեցման և այլ դոտացիաների, սուբվենցիաների և պետական բյուջեի եկամուտներից մասհանումների տեսքով:

1. Ֆինանսական համահարթեցման և այլ դոտացիաներ.

1.1. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի երկրորդ պարբերությունում բերված դրույթը սահմանում է (համանման սահմանմամբ դրույթ բերված է նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունում), որ պետական բյուջեից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տվյալ տարում տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) հաշվարկվում է հիմք ընդունելով տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի ոչ պակաս քան չորս տոկոսը: 2009 թվականի համար նախորդող երկրորդ բյուջետային տարին՝ 2007 թվականի բյուջետային տարին է, հետևաբար ըստ վերոհիշյալ օրենքների վերը նշված պահանջի՝ 2009

թվականին համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) չպետք է պակաս լինի ՀՀ 2007 թվականի համախմբված բյուջեի փաստացի եկամուտների ընդհանուր գումարի՝ 695.9 մլրդ դրամի 4%-ը կազմող 27,837.1 մլն դրամից, որը և նախատեսվել է ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում: Համայնքներին 2009 թվականին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ համայնքներին տրվող վերը նշված փոխհատուցումները) գերազանցում է ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով հաստատված և տարեկան համապատասխան ցուցանիշը՝ 6,501.1 մլն դրամով կամ 30.5%-ով, իսկ 2007 թվականի փաստացի մակարդակը՝ 9,856.6 մլն դրամով կամ 54.8 %-ով:

2009 թվականին համայնքներին տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով առաջարկվում է ուղղել.

- ֆինանսական համահարթեցման դոտացիաների տրամադրմանը,
- այլ դոտացիաների տրամադրմանը («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համաձայն ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների կիրառման արդյունքում համայնքների 2007 թվականի բյուջեների եկամուտների կորուստները փոխհատուցելու և առանձին համայնքներին պետական աջակցություն տրամադրելու համար):

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեվում է ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրել ընդհանուր գումարով 27,508.2 մլն դրամի դոտացիաներ: Նշված դոտացիաների բաշխումն ըստ առանձին համայնքների նախատեված է իրականացնել «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքին համապատասխան, մասնավորապես.

ա) 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող յուրաքանչյուր համայնքի բյուջեին ՀՀ 2009 թվականի պետական բյուջեից առաջարկվում է ֆինանսական համահարթեցման դոտացիայի տեսքով տրամադրել 2.0 մլն դրամ,

բ) մյուս համայնքներին (բացառությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվաշենի համայնքի) հասանելիք դոտացիաները հաշվարկվել են «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով սահմանված «ա» և «բ» գործոններով: Նշված գործոններով բաշխվող ֆինանսական համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարի 52.3 %-ը առանձնացվել է «ա» գործոնով, իսկ 47.7%-ը՝ «բ» գործոնով դոտացիաների տրամադրման համար (2008 թվականի համապատասխանաբար 52.5 %-ի և 47.5 %-ի դիմաց): Ընդ որում, «ա» գործոնով դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվել են ըստ յուրաքանչյուր համայնքի հաշվարկված հողի հարկի և գույքահարկի 2006 թվականի հաշվարկային ընդհանուր գումարները. այն է՝ 2007 թվականին համայնքների բյուջեներ այդ հարկերի հարկատուների կողմից վճարման ենթակա գումարները, որոնք

- պակասեցվել են 2007 թվականի հունվարի 1-ի դրությամբ այդ հարկերի գծով առկա չմարված ապառքների, տույժերի և տուգանքների, ինչպես նաև 2007 թվականին հաշվարկված տույժերի և տուգանքների գումարների չափով,

- ավելացվել են համայնքների ավագանիների որոշումներով (ավագանիներին օրենքով տրված իրավասության սահմաններում) գույքահարկի գծով տրված արտոնությունների գումարների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցման ենթակա գումարների չափով:

Հարկ է նշել, որ ընթացքի մեջ է ՀՀ հարկային պետական մարմինների կողմից ֆիզիկական անձանց գույքահարկի և հողի հարկի հաշվարկների ավտոմատացված համակարգի հանձնումը համայնքներին: Այդ կապակցությամբ այն համայնքների գծով, որոնց տեղական ինքնակառավարման մարմինները 2008 թվականի հունիսի 1-ի դրությամբ փաստացի իրականացնում են գույքահարկ և հողի հարկ վճարող ֆիզիկական անձանց հաշվառման գործառույթներ, 2009 թվականի ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվել են այդ համայնքների ղեկավարների կողմից տրամադրված գույքահարկի և հողի հարկի գծով ելակետային տվյալները:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվաշենի գյուղական համայնքի համապատասխան ցուցանիշները հայտնի պատճառներով չեն կարող կիրառվել ֆինանսական համահարթեցման դոտացիաների բաշխման հաշվարկներում, նշված համայնքի ղեկավարի աշխատակազմի 2009 թվականի պահպանման ծախսերի գծով ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանին առանձին տողով նախատեսվել են շուրջ 4.2 մլն դրամի չափով հատկացումներ:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4.3-րդ մասի համաձայն ընթացիկ տարվա դոտացիայի հաշվարկներում կիրառված ելակետային տվյալներում կամ կատարված հաշվարկներում մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ը որևէ համայնքի գծով սխալների հայտնաբերման դեպքում լիազորված մարմինը՝ հիմք ընդունելով ընթացիկ տարվա դոտացիայի հաշվարկման ճշգրտված ելակետային տվյալները և (կամ) վերացնելով հաշվարկներում տեղ գտած վրիպումները, կատարում է տվյալ տարվա դոտացիայի գումարների ըստ առանձին համայնքների բաշխման վերահաշվարկ, որի արդյունքները նույն օրենքի 21-րդ հոդվածի 4.5-րդ մասին համապատասխան արտացոլվում են առաջիկա տարվա պետական բյուջեի մասին օրենքի նախագծում: Ընդ որում՝ ընթացիկ տարվա համար յուրաքանչյուր համայնքի գծով վերահաշվարկված և նույն տարվա պետական բյուջեի մասին օրենքով հաստատված դոտացիայի գումարների միջև

ա) բացասական տարբերության առաջացման դեպքում, այդ տարբերությունը (ընթացիկ տարվա համար ավել հաշվարկված գումարը) հետ է գանձվում այդ համայնքից՝ վերջինիս գծով առաջիկա տարվա համար հաշվարկված դոտացիայի գումարը ընթացիկ տարվա համար ավել հաշվարկված գումարի չափով պակասեցման ճանապարհով (ընդ որում, եթե գանձման ենթակա գումարը գերազանցում է առաջիկա տարվա համար հաշվարկված դոտացիայի գումարը ապա այդ գերազանցող չափով գումարի գանձումը նույն եղանակով իրականացվում է նաև առաջիկա տարվան հաջորդող հերթական տարիների ընթացքում),

բ) դրական տարբերության առաջացման դեպքում, այդ տարբերությունը (ընթացիկ տարվա համար պակաս հաշվարկված գումարը) հատկացվում է տվյալ համայնքին առաջիկա տարվա պետական բյուջեով համայնքների միջև բաշխման համար նախատեսված դոտացիայի ընդհանուր գումարի հաշվին՝ այդ համայնքին առաջիկա տարվա համար հաշվարկված դոտացիայի գումարը ընթացիկ տարվա համար պակաս հաշվարկված գումարի չափով ավելացման ճանապարհով:

Նկատի ունենալով, այն հանգամանքը, որ 2008 թվականի դոտացիայի հաշվարկներում կիրառված ելակետային տվյալներում որոշ համայնքների գծով լիազորված մարմին մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ը պատկան մարմինների կողմից ներկայացվել են ճշգրտված ելակետային տվյալներ, հետևաբես հիմք ընդունելով օրենքի վերը նշված դրույթը կատարվել է 2008 թվականի դոտացիայի գումարների ըստ առանձին համայնքների բաշխման վերահաշվարկ:

1.2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքներով համայնքների եկամուտների նվազեցման հետևանքով համայնքների բյուջեներում առաջացող եկամուտների կորուստների գումարները ենթակա են փոխհատուցման պետության կողմից: 2006 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» ՀՀ օրենքը, որը օրենսդրական հիմքերի վրա դրեց համայնքի բյուջեի եկամուտների կորուստների չափերի և դրանց փոխհատուցման գումարների հաշվարկման գործընթացը: Վերը նշված օրենքի պահանջներին համապատասխան կիրառելով ՀՀ արդարադատության նախարարությունից, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունից, տեղական ինքնակառավարման մարմիններից (իրենց իրավասության շրջանակներում) կատարվել են համայնքների 2007 թվականի բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ենթակա գումարների հաշվարկներ: Արդյունքում, համայնքների 2007 թվականի բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ենթակա ընդհանուր գումարը կազմել է շուրջ 328.1 մլն դրամ, որն էլ նախատեսվել է ՀՀ Ազգային ժողով ներկայացված «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի N 2 հավելվածում:

Հարկ է նշել, որ տեղական ինքնակառավարման մարմինները մինչ օրս ճշգրտում են իրենց համայնքների գծով 2007 թվականի բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման և ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների 2009 թվականի հաշվարկներում կիրառելու համար տրամադրված ելակետային տվյալները, հետևապես, ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծի նախնական տարբերակում համայնքների 2007 թվականի բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման գումարները և ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների ըստ առանձին համայնքների ներկայացված բաշխումը ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակի ձևավորման ժամանակ կարող է ենթարկվել փոփոխության:

2. Սուբվենցիաներ.

2.1. ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով համայնքներին նախատեսվել են սուբվենցիաների հատկացումներ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ 2009 թվականին պետական բյուջեից բնապահպանական սուբվենցիաներ ստացող համայնքների ցանկի որոշման և նրանց տրամադրվելիք նշված սուբվենցիաների գումարների չափերի հաշվարկման հիմքում դրվել են.

- համայնքների կողմից ներկայացված ՀՀ բյուջետային օրենսդրությամբ սահմանված 2009 թվականի համապատասխան բյուջետային ֆինանսավորման հայտերը,
- «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված համապատասխան ընկերությունների կողմից 2005-2007 թվականներին պետական բյուջե փաստացի վճարված բնապահպանական վճարների գումարները,
- նշված վճարների գումարների՝ ըստ այդ ընկերությունների գործունեությունից վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների բաշխման համամասնությունները (սահմանված են ՀՀ բնապահպանության նախարարության կողմից),
- նշված վճարների գումարներից 2006-2007 թվականներին այդ համայնքներին արդեն իսկ տրամադրված բնապահպանական սուբվենցիաների գումարները:

Մասնավորապես, ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են ընդհանուր գումարով 196.0 մլն դրամի չափով բնապահպանական սուբվենցիաների հատկացումներ, որից

ա) «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքային համայնքի գծով՝ 31.78 մլն դրամ,

բ) «Արմենիան Քափր Փրոգրամ» ՓԲԸ- ի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող ՀՀ Լոռու մարզի Ալավերդի քաղաքային համայնքի գծով՝ 103.57 մլն դրամ, իսկ նույն մարզի Աքոր, Հաղպատ և Օձուն գյուղական համայնքների գծով՝ համապատասխանաբար՝ 18.47, 9.20 և 8.99 մլն դրամ,

գ) «Արարատ ցեմենտ» ՓԲԸ- ի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքային համայնքի գծով՝ 23.99 մլն դրամ:

Այլ համայնքների գծով վերը նշված օրենքի պահանջներին համապատասխան բնապահպանական սուբվենցիաների տրամադրում ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով չի նախատեսված, նրանց կողմից բյուջետային օրենսդրությամբ սահմանված 2009 թվականի համապատասխան բյուջետային ֆինանսավորման հայտերի չներկայացման, ինչպես նաև «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված որոշ ընկերություններից ՀՀ 2005-2007 թվականների պետական բյուջեներում բնապահպանական վճարների գծով փաստացի մուտքերի բացակայության պատճառով:

2.2. Տարբեր համայնքային ծրագրերի իրականացմանը աջակցելու նպատակով մի շարք համայնքներին ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է շուրջ 339.0 մլն դրամ ընդհանուր գումարով սուբվենցիայի հատկացում:

3. Մասհանումներ պետական բյուջեի եկամուտներից.

ՀՀ 2009 թվականին պետական բյուջեից եկամտահարկի և շահութահարկի գծով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածով սահմանված մասհանումների իրականացում ՀՀ համայնքների բյուջեներին չի նախատեսված՝ հաշվի առնելով համայնքների միջև այդ հարկերի անհամամասնորեն ձևավորումը, պայմանավորված հանրապետությունում տնտեսաարտադրական կարողությունների ու ազգաբնակչության, ըստ համայնքների, տարիներ ի վեր ձևավորվող խիստ անհամաչափ տեղաբաշխման հանգամանքներով: Նման պայմաններում մասհանումների համակարգը միտված կլինի սակավաթիվ, հիմնականում Երևան քաղաքի՝ համայնքների ֆինանսական բազայի ամրապնդմանը՝ էլ ավելի մեծացնելով համայնքների միջև առկա ֆինանսական անհավասարության աստիճանը:

Էականորեն կդժվարացնի և անարդյունավետ կդարձնի մասհանումների գործընթացը հարկ վճարողի եկամուտների ձևավորման վայրի վերաբերյալ հստակ պատկերացում կազմելու անհնարինությունը, քանի որ շատ դեպքերում հարկ վճարողի գրանցման վայրը չի համընկնում հարկ վճարողի գործունեության իրականացման վայրերի հետ: Հարկ է նշել, որ դեռևս 1998-1999 թվականներին օրենքի պահանջի համապատասխան համայնքների բյուջեներին կատարվում էին եկամտահարկի գումարների մասհանումներ: Սակայն վերը նշված հիմնախնդիրների առկայությունը ցույց տվեց մասհանումների իրականացման բացարձակ անարդյունավետությունը, որից ելնելով էլ օրենքում կատարվեցին համապատասխան փոփոխություններ, որոնց համաձայն՝ համայնքների բյուջեներին եկամտահարկից մասհանումների կատարումը 2000 թվականից դադարեցվեց:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, ինչպես նաև համայնքների բյուջեներին շահութահարկի ու եկամտահարկի գումարներից մասհանումների գործընթացն ի սկզբանե չվարկաբեկելու նկատառումով, գտնում ենք, որ մասհանումների կատարման հարցին նպատակահարմար է անդրադառնալ վերը նշված հիմնախնդիրների կարգավորման հստակ մեխանիզմների մշակումից հետո:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով նախատեսվող ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի ծավալը նախատեսված է 15.8 մլրդ դրամ (ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի ընդհանուր ծավալի 1.7 %-ը):

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են նաև հատկացումներ նյութական ռեսուրսների պետական պահուստի պահպանման և ձևավորման, ինչպես նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալության համակար-

գի ստորաբաժանումների պահպանման համար, համապատասխանաբար 108.0 մլն դրամի և 74.1 մլն դրամի չափով:

ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով ոչ ֆինանսական ակտիվների օտարումից բյուջետային մուտքերը ծրագրվել են 13.3 մլրդ դրամի չափով՝ 2008 թվականի հաստատված 8.0 մլրդ դրամի և 2007 թվականին փաստացի գանձված 19.1 մլրդ դրամի դիմաց: 2009 թվականի համար ոչ ֆինանսական ակտիվների օտարումից բյուջետային մուտքերն ակնկալվում է ստանալ Երևան քաղաքում տեղաբաշխված պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարումից, ինչպես նաև շենքերի և շինությունների, պետական սեփականություն հանդիսացող այլ գույքի օտարումից և նախորդ տարիներին կնքված առուվաճառքի պայմանագրերից բխող՝ տարաժամկետ վճարումներից:

ՄԺԾԾ-ով ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը 2009 թվականի համար նախատեսվել են 2.0 մլրդ դրամ, որի տարբերությունը Նախագծով կանխատեսվածից պայմանավորված է Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարումից մուտքերով:

ՀՀ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ԴԵՖԻՑԻՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի գումարը ծրագրավորվում է 40.0 մլրդ դրամի չափով: Դեֆիցիտի ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել ներքին աղբյորների զուտ մուտքերի հաշվին՝ 30.5 մլրդ դրամի և արտաքին աղբյուրների զուտ մուտքերի հաշվին՝ 9.5 մլրդ դրամի չափով:

Զուտ մուտքերը՝ դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներգրավվող միջոցների մուտքերի ընդհանուր գումարի և փոխառու միջոցների տրամադրման կամ մարման ընդհանուր գումարի տարբերությունն է:

Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները դասակարգվում են ներքին և արտաքին աղբյուրներից փոխառու միջոցների և ֆինանսական ակտիվների տեսքով ներրգրավվող միջոցների:

Փոխառու միջոցների ներգրավումը իրականացվում է պետական արժեթղթերի թողարկման և վարկերի ու փոխատվությունների ստացման եղանակով (որոնք հետևապես հետագայում ենթակա են մարման): Ֆինանսական ակտիվներից միջոցների ներգրավումը իրականացվում է արդեն ձեռք բերված՝ սեփականության իրավունքով պետությանը պատկանող բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության, ինչպես նաև տնտեսվարող և այլ սուբյեկտներին պետական բյուջեից տրամադրված վարկերի և փոխատվությունների դիմաց այդ սուբյեկտներից ձեռք բերված պարտավորությունների իրացման եղանակով:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներքին աղբյուներից ներգրավվող փոխառու զուտ միջոցների ընդհանուր գումարը ծրագրավորվում է 23.7 մլրդ դրամի չափով, ընդ որում փոխառու միջոցների մուտքերի ներգրավումը ամբողջությամբ նախատեսվում է ապահովել պետական արժեթղթերի թողարկումից: Ֆինանսական ակտիվներից 2009 թվականի զուտ մուտքերը ծրագրավորվում են 6.8 մլրդ դրամ (ընդ որում տարեսկզբի ազատ մնացորդի միջոցների հաշվին՝ 7.6 մլրդ դրամ): Ինչ վերաբերում է տնտեսվարող և այլ սուբյեկտներին տրամադրված բյուջետային վարկերի և փոխատվությունների գծով զուտ մուտքերին, ապա այդ տեղեկատվությունը ներկայացված է սույն բացատրագրի «Բյուջետային վարկեր» բաժնում:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով արտաքին աղբյուներից ներգրավվող փոխառու զուտ միջոցների ընդհանուր գումարը ծրագրավորվում է 9.5 մլրդ դրամի չափով, ընդ որում այդ գումարը ամբողջությամբ նախատեսվում է ներգրավել միջազգային կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից արտոնյալ վարկերի ստացման (որոնք ունեն հստակ ծրագրային ուղղվածություն) և մինչ այդ արդեն ստացված վարկերի, ըստ վարկային պայմանագրերով նախատեսված ժամկետների, մարման եղանակով (նշված զուտ մուտքերի վերաբերյալ մանրամասն համապատասխան տեղեկատվությունը բերված է սույն բացատրագրի N 1 հավելվածում, NN 16-19 աղյուսակներում և «ՀՀ պետական պարտքը» բաժնում):

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծով զուտ վարկավորման ընդհանուր ծավալը ծրագրավորված է 32.8 մլրդ դրամի չափով: Նշված գումարն իրենից ներկայացնում է ՀՀ պետական բյուջեից տրամադրվելիք բյուջետային վարկերի ընդհանուր գումարի և նախկինում տրամադրված բյուջետային վարկերի մարումներից ստացվելիք մուտքերի ընդհանուր գումարի տարբերությունը:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեից տրամադրվելիք վարկերի ընդհանուր գումարը նախատեսվում է սահմանել 34.5 մլրդ դրամի չափով: Մասնավորապես.

- Հայաստանի Հանրապետության կողմից ցուցաբերվող արտաքին տնտեսական աջակցության շրջանակներում բյուջետային վարկեր տրամադրելու համար առանձնացվել են 33.1 մլրդ դրամի չափով հատկացումներ՝ դրանք ամբողջությամբ ԼՂՀ-ին բյուջետային վարկի տրամադրմանն ուղղելու նպատակով,
- Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի և Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության կողմից իրականացվող գյուղական տարածքների տնտեսական զարգացման, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման, ինչպես նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող վերականգնվող էներգետիկայի ծրագրերի

շրջանակներում ՀՀ պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միջոցով տնտեսվարող սուբյեկտներին նախատեսվում է տրամադրել շուրջ 1,2 մլրդ դրամ բյուջետային վարկեր,

- «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան բռնադատված քաղաքացիներին կամ նրանց առաջին հերթի ժառանգներին բնակարանային պայմանների բարելավման նպատակով երկարաժամկետ արտոնյալ վարկեր տրամադրելու համար նախատեսվել են 0.2 մլրդ դրամի չափով հատկացումներ:

Դրա հետ մեկտեղ ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են 1.7 մլրդ դրամի չափով մուտքեր Վրաստանից, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ից, «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի, «Վանաձորի բաղնիքային տնտեսություն» ՓԲԸ-ից, «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ից, «Անելիք բանկ» ՍՊԸ-ից, «Ակբա - Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ից, «Ինեկոբանկ» ՓԲԸ-ից, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ից, «Կոնվերսբանկ» ՓԲԸ-ից, ինպես նաև Ալավերդու քաղաքապետարանից պետության կողմից նախորդ տարիներին իրենց տրամադրված բյուջետային վարկերի մարումների գծով պետական բյուջե կատարվելիք վճարումներից:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

Արտաքին պետական պարտքը

2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 1448.9 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 15.7%-ը:

Արտաքին աղբյուրներից 2008թ. պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված միջոցները ամբողջությամբ ստանալու դեպքում, Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը (ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի վարկային պարտավորություններ և վերջիններիս կողմից տրամադրված արտաքին երաշխիքներ) 2008 թվականի վերջին կկազմի մոտ 1679 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 14.9%-ը:

2008 թվականի ընթացքում արտաքին պարտավորությունների գծով կստացվի մոտ 197 մլն ԱՄՆ դոլար, որից ՀՀ կառավարության պարտավորությունների գծով 183 մլն ԱՄՆ դոլար և ԿԲ գծով մոտ 14 մլն ԱՄՆ դոլար, և կկատարվի մոտ 43 մլն ԱՄՆ դոլարի հիմնական գումարի մարում (այդ թվում 14.8 մլն ԱՄՆ դոլար ՀՀ կառավարության պարտավորությունների գծով): 2007 թվականի տարեվերջի համեմատ ՀՀ արտաքին պարտքը կաճի մոտ 230 մլն ԱՄՆ դոլարով[1]:

[1] Տարեկան կտրվածքով ստացումների և մարումների արդյունքում ստացվող պարտքի հաշվարկային գումարի և տեքստում ներկայացված պարտքի գումարի տարբերությունը պայմանավորված է տարեսկզբին և տարեվերջին արժույթների փոխարժեքների (հիմնականում SDR/ ԱՄՆ դոլար և Եվրո/ԱՄՆ դոլար) տարբերություններով.

31.12.07 դրությամբ 1SDR= 1.58025 USD և 1EURO= 1.4721 USD

31.12.08 դրությամբ 1SDR= 1.66 USD և 1EURO= 1.58 USD (կանխատեսում)

2008 թվականի ընթացքում արտաքին պետական պարտքի գծով ընդհանուր սպասարկումը կկազմի մոտ 54.9 մլն ԱՄՆ դոլար: Միայն ՀՀ կառավարության գծով 2008 թվականին այն կկազմի մոտ 25.8 մլն ԱՄՆ դոլար, որից 14.8 մլն ԱՄՆ դոլար՝ մարում և 11.0 մլն ԱՄՆ դոլար՝ տոկոսավճար: ՀՀ կենտրոնական բանկի պարտավորությունների գծով սպասարկումը կկազմի մոտ 29.1 մլն ԱՄՆ դոլար, որից 28.0 մլն ԱՄՆ դոլար՝ մարում և 1.1 մլն ԱՄՆ դոլար՝ տոկոսավճար:

2009 թվականի ընթացքում, ՀՀ ԱՊՊ գծով նախատեսվում է ստանալ մոտ 169.1 մլն ԱՄՆ դոլար՝ այդ թվում ՀՀ կառավարության պարտավորությունների գծով 162.712 մլն ԱՄՆ դոլար, արտաքին միջոցներ: 2009 թվականի ընթացքում ԱՊՊ գծով նախատեսվում է սպասարկել մոտ 61.8 մլն ԱՄՆ դոլար՝ 47.3 մլն ԱՄՆ դոլար հիմնական գումարի մարման գծով և մոտ 14.5 մլն ԱՄՆ դոլար որպես տոկոսավճար, այդ թվում ՀՀ կառավարության պարտավորությունների գծով մոտ 21.977 մլն ԱՄՆ դոլարի հիմնական գումարի մարում և 13.454[2] մլն ԱՄՆ դոլարի տոկոսավճար: Հաշվի առնելով վերը նշվածը, 2009 թվականի վերջին ՀՀ ԱՊՊ կկազմի մոտ 1800 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 13.1%-ը:

2009-2011 թթ. արտաքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշները կգտնվեն նվազ և միջին պարտքի բեռ ունեցող երկրների ցուցանիշների սահմաններում:

Ներքին պետական պարտքը

2008թ-ին «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է ապահովել 25,000.0 մլն. դրամ դեֆիցիտի ֆինանսավորում և կատարել 7,460.0 մլն. դրամ սպասարկման ծախս:

2008թ-ի սեպտեմբերի 11-ի դրությամբ թողարկվել է 60.50 մլրդ. դրամ անվանական արժեքով պարտատոմսեր, որից տեղաբաշխվել է 40,979.6 մլն. դրամը: Պարտատոմսերի տեղաբաշխումից հասույթը կազմել է 40,673.98 մլն. դրամ: Խնայողական պարտատոմսերից սեպտեմբերի 11-ի դրությամբ թողարկվել է 1,000.0 մլն. դրամ, որից տեղաբաշխվել է 258.4 մլն. դրամը: Այս պարտատոմսերը տեղաբաշխվում են գանձապետական պահառու համակարգի միջոցով: 2008թ-ի ընթացքում կկատարվի մոտ 38.8 մլրդ դրամի մարում և կտրվի մոտ 7.0 մլրդ դրամի սպասարկման ծախս: Տարեվերջին ներքին պետական պարտքի ծավալը անվանական արժեքով կկազմի մոտ 100.0 մլրդ դրամ: 2007թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներքին պետական պարտքի ընդհանուր ծավալը անվանական արժեքով կազմել էր 75.4 մլրդ. դրամ, որից շրջանառելի պարտատոմսերի ծավալը՝ 66.30 մլրդ. դրամ, իսկ ՀՀ ռեզիդենտից ստացված վարկի ծավալը՝ 9.1 մլրդ. դրամ: Պարտքի ժամկետայնությունը 2008թ-ի սեպտեմբերի 11-ի դրությամբ կազմել է 1872 օր (2007թ-ի դեկտեմբերի 30-ի դրությամբ նույն ցուցանիշը եղել է 1258

ՀՀ արտաքին պարտքի զամբյուղի մեջ SDR-ով և EURO-ով տրամադրված վարկերը կազմում են շուրջ 90%:

[2] Սպասարկման կանխատեսումները կատարվել են 1SDR= 1.66 USD և 1EURO= 1.58 USD

օր), միջին կշռված եկամտաբերությունը՝ 8.04% (2007թ-ի տարեվերջին նույն ցուցանիշը եղել է 7.05%):

2008թ-ի համար նախատեսված սպասարկման ծախսերի տնտեսումը պայմանավորված է առաջին կիսամյակում նախատեսված 19.6 մլրդ. դրամ դեֆիցիտի ֆինանսավորման համար անհրաժեշտ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ուղենշային պարտատոմսերի թերտեղաբաշխմամբ (հունվար-հուլիս ամիսներին նախատեսված 40.5 մլրդ. դրամ արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման ենթակա ծավալից տեղաբաշխվել է ընդամենը 27.03 մլրդ. դրամ ծավալը), որի արդյունքում առաջին կիսամյակում դեֆիցիտը փաստացի ֆինանսավորվեց 10.1 մլրդ. դրամով: Տարվա ընթացքում կարճաժամկետ պարտատոմսերի սպասարկման համար ծրագրված 131.0 մլն. դրամի փոխարեն կտրվի 20.2 մլն. դրամ ծախս: Բացի այդ, նախատեսվել էր 2008թ-ի ընթացքում խնայողական պարտտոմսերի համար վճարել մոտ 45.0 մլն. դրամի սպասարկման ծախս, կվճարվի մոտ 15.0 մլն. դրամի չափով:

2008թ-ի ընթացքում բոլոր ամիսներին ներքին պարտքի կառավարման ռազմավարական խնդիրների լուծման նպատակով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը իրակա-նացրել է հետգնումներ՝ 9 ամսվա կտրվածքով մոտ 11.9 մլրդ. դրամ ծավալով: 2008թ-ին հետ-գնումների գործընթացի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ առաջին անգամ ներքին պարտքային շուկայի զարգացման ծրագրերի շրջանակներում թողարկվեցին մեծածավալ ուղենշային պարտատոմսեր, որոնց տեղաբաշխման նպատակով 2011 թվականին մարվող փոքրածավալ պարտատոմսերը հետ են գնվել և ըստ էության փոխանակվել նոր՝ 3 տարանոց պարտատոմսերով: Միաժամանակ նշենք, որ հետգնման պարբերական բնույթը զգալիորեն նպաստում է ինչպես պարտատոմսերի իրացվելիության աճին, այնպես էլ նոր երկա-րաժամկետ պարտատոմսերի լավ պայմաններով տեղաբաշխմանը: 2008թ-ին կառավարությանը հաջողվեց հունվար-օգոստոս ամիսներին տեղաբաշխել 29.0 մլրդ. դրամի 3-20 տարի ժամկետայնությամբ ուղենշային պարտատոմսեր: Ներքին պարտքի շրջանառող ծավալում միջին ժամկետայնության և երկարաժամկետ պարտատոմսերի տեսակարար կշիռը սեպտեմբերի 11-ի դրությամբ կազմել է 85%:

2009թ-ին կառավարությունը շարունակելու են ներքին պարտքի կառավարման բնա-գավառում ձեռնարկված բարեփոխումները. կտեղաբաշխվեն հիմնականում 2008թ-ին թողարկ-ված ուղենշային պարտատոմսերը: Ուղենիշային պարտատոմսերը տեղաբաշխվելու են պարբերական վերաբացումների միջոցով: Քանի որ ՀՀ ՖՆ-ը և ՀՀ ԿԲ-ը 2008թ-ի սեպտեմբեր ամսին կստորագրեն համաձայնագիր, ըստ որի պետական պարտատոմսերի շուկայում այդուհետ կլինի մեկ թողարկող՝ Ֆինանսների նախարարությունը, ուստի 2009թ-ին ևս թողարկման ծրագրերում հաճախակի կլինեն կարճաժամկետ պարտատոմսերի թողարկումները՝ 3, 6 և 12 ամիս ժամկետայնությամբ: Պարբերաբար կիրականացվեն նաև հետգնումներ, որոնք հիմնականում կուղղվեն նախկինում թողարկված փոքրածավալ ցածր իրացվելիություն ունեցող պարտատոմսերի շրջանառությունից դուրս բերմանը և փոխարենը գրեթե նույն մարման

ժամկետով ուղենշային պարտատոմսերի տեղաբաշխմանը: Այս նպատակի իրագործման շրջանակներում ենթադրվում է պետական պարտատոմսերի գծով պետական բյուջեում նախատեսել 11,877.0 մլն. դրամ սպասարկման ծախս, ապահովելով 25,000.0 մլն. դրամ դեֆիցիտի ֆինանսավորում: 2009թ-ի վերջին ներքին պետական պարտքի ծավալը անվանական արժեքով կկազմի 122.0-124.0 մլրդ. դրամ, միջին ժամկետայնությունը՝ մոտ 4.0-4.5 տարի: Միջին եկամտաբերությունը 2009թ-ի վերջին ընթացիկ տարվա համեմատ հնարավոր է աճի՝ պայմանավորված ընթացիկ տարում ձևավորված տոկոսադրույքների աճի միտումով: